

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2009Թ.

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Հայաստանը շուրջ 3.2 միլիոն բնակչությամբ սահմանադրական հանրապետություն է: Սահմանադրությամբ նախատեսվում է ընտրվող նախագահ ու միապալատ օրենսդիր կառույց (Ազգային ժողով): Երկրում գործում է բազմակուսակցական քաղաքական համակարգ: Նշանակալի խախտումներով անցած 2008թ. փետրվարի նախագահական ընտրություններն ու դրա հաջորդած բողոքի ցույցերի բռնի ցրումը, որի արդյունքում մահվան 10-ը դեպք գրանցվեց, շարունակեցին հող պատրաստել քաղաքական ճգնաժամի համար, որը տարվա ընթացքում մնում էր մեծամասամբ չլուծված և արդյունքում կային մարդու իրավունքների բազմաթիվ ոտնահարումներ: 2008թ. ապրիլին Սերժ Սարգսյանը՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունից (ՀՀԿ) պաշտոնապես ստանձնեց նախագահի պաշտոնը՝ փոխարինելով Ռոբերտ Քոչարյանին: ՀՀԿ-ն շարունակում էր գերակա դիրք զբաղեցնել Ազգային ժողովի իշխանական կոալիցիայում, որի կազմում ներառված չորս կուսակցությունների թիվն ապրիլի 27-ին նվազեց և դարձավ երեք, երբ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) դուրս եկավ կոալիցիայից՝ արտաքին քաղաքականության վերաբերյալ տարաձայնությունների պատճառով : Քաղաքացիական իշխանություններն ընդհանուր առմամբ արդյունավետ հսկողություն են ապահովել անվտանգության ուժերի նկատմամբ, սակայն անվտանգության ուժերի որոշ ներկայացուցիչներ, լինելով քաղաքացիական առաջնորդների հրամանատարության ներքո, շարունակել են անպատժելիորեն թույլ տալ մարդու իրավունքների ոտնահարումներ:

Իշխանությունները սահմանափակել են իշխանությունն ազատ փոխելու քաղաքացիների իրավունքը Երևան քաղաքի ավագանու ընտրություններում: Տարվա ընթացքում իշխանությունները քաղաքացիների նկատմամբ, հատկապես նրանց, ում կառավարությունը համարել է քաղաքական ընդդիմադիր, կիրառել են կամայական ձերբակալություններ, կալանավորումներ ու ազատագրելով իրենց քաղաքական գործունեության համար. երկարատև նախնական կալանքը մնացել է խնդրահարույց: Իշխանությունները շարունակել են կիրառել հալածանքներ և դիմել են միջամտության բյուրոկրատական միջոցների՝ քաղաքական ընդդիմադիրներին ահաբեկելու և հաշվեհարդար տեսնելու համար: Իշխանություններն ուժ են կիրառել՝ ցրելու քաղաքական ցույցերն ու զսպելու այն քաղաքացիներին, ովքեր ցանկացել են իրազեկել դրանց մասին: Ոստիկանությունը ծեծի է ենթարկել նախնական կալանքի տակ գտնվողներին և որոշ դեպքերում չի ապահովել գործընթացի իրավաչափությունը: Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) և ոստիկանությունը մարդու իրավունքների ոտնահարման ենթադրյալ դեպքերում գործել են անպատիժ: Չնայած վերանորոգման աշխատանքներին ու նոր կառույցների շինարարությանը՝ բանտերը շարունակել են մնալ ծանրաբեռնված ու անառողջ պայմաններում: Իշխանությունները մերժել են արդար դատաքննության

քաղաքացիների իրավունքը: Լրատվամիջոցները, հատկապես հեռարձակող լրատվամիջոցները կիրառել են ինքնագրաքննության բարձր մակարդակ, և իշխանությունները շարունակել են սահմանափակել բազմակարծությունը լրատվամիջոցների շրջանում, այդ թվում՝ հայտարարելով ժամանակավոր դադար հեռարձակման լիցենզիաների տրամադրման հարցում: Եղել են բազմաթիվ հարձակումներ լրագրողների վրա և կառավարությունը հազվադեպ է պարզել կամ քրեական հետապնդում իրականացրել մեղավորների նկատմամբ: Իշխանությունները սահմանափակել են հանրահավաքների ազատությունը՝ մերժելով հայցվող վայրերում ցույցեր կազմակերպելու քաղաքական ընդդիմության բազմաթիվ հայտեր, և հաճախ կանխել են քաղաքացիների ինքնաբուխ հավաքները: Շարունակել է լայն տարածում ունենալ կոռուպցիան, և իշխանությունները կոռուպցիայի դեմ պայքարելու վճռական ջանքեր չեն գործադրել: Իշխանություններն ու օրենքները սահմանափակել են կրոնական ազատությունը: Նաև գրանցվել են հաղորդումներ կանանց նկատմամբ բռնությունների ու ամուսնական բռնությունների, մարդկանց թրաֆիքինգի, հաշմանդամների և համասեռամուլ անձանց նկատմամբ խտրականության մասին:

## **ՀԱՐԳԱՆՔ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

### ***ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ***

#### **ա) Կամայական կամ անօրինական ձևով կյանքից զրկելը**

Կառավարության ու վերջինիս գործակալների կողմից չեն եղել քաղաքական դրդապատճառներով սպանություններ. այնուհանդերձ, ձերբակալվել է մի զինծառայող, ով սեպտեմբերի 2-ին գորակոչիկի մահվան պատճառն էր դարձել:

Տարվա ընթացքում իշխանությունները երկու քրեական գործ են հարուցել ութ ոստիկանների դեմ, ովքեր ենթադրաբար թույլ են տվել քրեորեն հետապնդելի գործողություններ 2008թ. մարտին անվտանգության ուժերի, կողոպտիչների ու 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների արդյունքները վիճարկող ցուցարարների միջև բախումների ժամանակ: Բախումների արդյունքում զոհվել են ութը քաղաքացիական անձ և երկու ոստիկան:

Ըստ պաշտոնական տեղեկատվության օգոստոսի 28-29-ին իշխանությունները քրեական գործ են հարուցել չորս ոստիկանների նկատմամբ, ովքեր մեղադրվում էին 2008թ. մարտի դեպքերի ընթացքում ցուցարարների դեմ արցունքաբեր գազի ոչ պատշաճ օգտագործման մեջ: Ըստ հնչեցրած մեղադրանքների չորս ոստիկաններն արցունքաբեր գազի նոնակներից ցուցարարների վրա կրակել են վտանգավորության աստիճանի մոտ տարածությունից, ինչի հետևանքով երեք քաղաքացիական անձ զոհվել է, ևս երեքը վիրավորվել են:

Հունվարի 23-ին 2008թ. մարտի հետընտրական իրադարձություններն ուսումնասիրող Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանը կոչ արեց կառավարությանը քրեական գործ հարուցել այն չորս ոստիկանների հանդեպ ում կողմից հատուկ միջոցների ոչ պատշաճ կիրառումը հանգեցրեց երեք հոգու մահվան: Հունիսի 24-ին Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը քննադատեց, որում մտահոգություն էր հայտնվում Գլխավոր դատախազության կողմից մահվան դեպքերի քննության փաստերով կոնկրետ արդյունքների բացակայության վերաբերյալ և կոչ էր արվում գոհացուցիչ կերպով առանց ձգձգումների ավարտին հասցնել քննությունը: Բախումների ժամանակ գոհվածներից ոմանց ընտանիքի անդամները քննադատեցին պաշտոնական քննությունն ու ոստիկաններին ներկայացված մեղմ մեղադրանքները: Տարեվերջի դրությամբ քրեական գործի վարույթը դեռ շարունակվում էր, և սարքավորման անփույթ օգտագործման համար որևէ ոստիկան քրեորեն չի պատժվել:

Սեպտեմբերի 16-17-ին, մարտի 1-2-ի դեպքերն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովն իր հիմնադրումից մոտ 16 ամիս անց, հրապարակեց իր եզրակացությունը 2008թ. մարտի հետընտրական դեպքերի և 10-ը մահվան դեպքերի վերաբերյալ: Ձեկույցում նշվում էր, որ հանձնաժողովը չի կարողացել ավելին պարզել մահվան դեպքերի հանգամանքների վերաբերյալ և կոչ էր անում իրավապահներին ավելին անել՝ պարզելու, բացահայտելու և քրեական հետապնդում իրականացնելու մահվան դեպքերի համար պատասխանատուների առնչությամբ: Քաղաքացիական գոհերի ազգականները բողոքի ակցիայով հանդես եկան հանձնաժողովի եզրակացության դեմ՝ ցույց անելով Ազգային ժողովի մոտ և պահանջելով մահվան հանգամանքների լիակատար ու օբյեկտիվ բացահայտում:

Ձեկույցը մեղադրում էր իշխանություններին, ընդդիմությանը, ինչպես նաև լրատվամիջոցներին բախումներին նախորդած ժամանակահատվածում ընտրական լարվածության մեծացման մեջ: Ձեկույցը քննադատում էր էլեկտրոնային լրատվամիջոցներին նախընտրական փուլում կողմնակալ լուսաբանումների համար, որոնք խորացրել էին հասարակության անվստահությունն իշխանությունների հանդեպ: Սակայն զեկույցը բռնությամբ ուղեկցված անկարգությունների համար առավելապես մեղադրում էր ընդդիմությանը՝ նախագահի թեկնածու և նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին մեղադրելով նախընտրական ժամանակահատվածը «թշնամանք ու անհանդուրժողականություն» սերմանելու միջոցով թունավորելու և «ընտրությունների օրինականության վերաբերյալ կասկածներ սերմանելու» մեջ՝ նույնիսկ նախքան քարոզարշավի մեկնարկը: Այնտեղ նաև նշվում էր, որ Տեր-Պետրոսյանի կողմնակիցների հետընտրական բողոքներն ապակայունացրել են երկիրն ու խախտել հասարակական կարգը: Ձեկույցը լույս չէր սփռում բախումների ընթացքում գոհված 10 անձանց մահվան հանգամանքների վրա: Ընդդիմությունը խիստ քննադատեց եզրակացությունը՝ կառավարությանը մեղադրելով դրանով բռնությունների ու գոհերի հարցում ունեցած իր պատասխանատվությունը քողարկելու մեջ:

Դեկտեմբերի 21-ին, չնայած գովեստով արտահայտվելով հանձնաժողովի որոշ առաջարկներին ու վերլուծությանը, ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովը ցավով նշում էր, որ հանձնաժողովն ակնհայտորեն նպատակ ուներ «խուսափել դեպքերի պաշտոնական տարբերակը չափազանց բացահայտ կասկածի տակ առնելուց և կառավարության գործողությունները չափազանց խիստ քննադատելուց»՝ նշելով, որ նմանատիպ ինքնագրաքննությունը կասկածի տակ է դնում ուսումնասիրության արժանահավատությունը: ԵԽԽՎ-ը նաև նշեց, որ զեկույցն առանձնանում է մարտի 1-2-ի բռնություններին հանգեցրած «դեպքերի միակողմանի, գրեթե կողմնակալության հասնող նկարագրությամբ» և բռնություններին հաջորդած «զարգացումների վերաբերյալ քննարկումների ու վերլուծության գրեթե լիակատար բացակայությամբ», ինչպես օրինակ՝ «ընդդիմության բազմաթիվ կողմնակիցների ձերբակալությունների ու նրանց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումների վերաբերյալ»: ԵԽԽՎ-ը նաև անբավարար էր համարում մարտի 1-2 դեպքերում «գրանցված 10-ը մահվան դեպքերի քննության կոնկրետ արդյունքների բացակայությունը»:

Կառավարության հայտնած տվյալների համաձայն տարվա առաջին 11 ամիսների ընթացքում բանակում գրանցվել է մահվան 42 դեպք: Պաշտոնական վիճակագրությունը ոչ մարտական պայմաններում չարաշահումների կամ բռնությունների ենթադրյալ դեպքերի արդյունքում զոհված զինվորների թվի վերաբերյալ տարբերվում է. Պաշտպանության նախարարության տվյալներով՝ յոթը դեպք, իսկ Զինվորական դատախազության տվյալներով՝ երկու դեպք տարվա առաջին 11 ամիսների ընթացքում: Տարբերվում են նաև այս երկու աղբյուրների տվյալներն ինքնասպանությունների ու «ինքնասպանության հասցնելու» դեպքերի վերաբերյալ. ըստ Պաշտպանության նախարարության տվյալների գրանցվել է ինքնասպանության 11 դեպք, որից 2-ն ինքնասպանության հասցնելու դեպք, իսկ Զինվորական դատախազության տվյալներով՝ 6 դեպք, որից 2-ը՝ ինքնասպանության հասցնելու դեպք: Պարզ չէր, թե արդյոք մահվան մնացած դեպքերում, որոնք կապված էին «անփութության» կամ «զինվորների կանոնակարգային հարաբերությունների խախտումների» հետ, բռնությունները կամ ոչ կանոնակարգային հարաբերություններն ունեցել են որևէ դերակատարում, թե ոչ:

Մեկտեմբերի 2-ին գումարտակի հրամանատար կապիտան Անդոկ Գալստյանի կողմից ծեծի ենթարկվելու պատճառով հիվանդանոցում մահացավ Վայոց Ձորի զորամասերից մեկում ծառայող 18-ամյա զինակոչիկ Արամ Մկրտչյանը: Ըստ հաղորդումների Գալստյանը օգոստոսի 28-ի առավոտյան մի քանի անգամ դաժան ծեծի էր ենթարկել Մկրտչյանին: Ապա Մկրտչյանը խիստ ծանր վիճակում տեղափոխվել էր զորամասի բուժկետ, որտեղից գիտակցությունը կորցնելուց հետո միայն մի քանի ժամ անց էր տեղափոխվել հիվանդանոց: Լրատվամիջոցները հաղորդում էին, որ Մկրտչյանի զարմիկի խոսքերով ծեծի ենթարկվելուց հետո Մկրտչյանին մոտ 4 ժամ օգնություն չի ցուցաբերվել, ու մասնագետները նրան ասել էին, որ եթե ժամանակին տեղափոխվեր հիվանդանոց, ապա հնարավոր կլիներ կյանքը փրկել: Քրեական փորձաքննությունը ցույց տվեց, որ Մկրտչյանի ամբողջ

մարմնով տարբեր մասերում կային բազմաթիվ վնասվածքներ: Անդոկ Գալստյանը ձերբակալվեց՝ անփութության պատճառով ծանր հետևանքների հանգեցրած պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեղադրանքով, որը պատժվում է երեքից ութը տարի ազատազրկմամբ: Նույն քրեական գործով, որը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր, զինվորին վիրավորանք հասցնելու մեջ մեղադրվում էր զորամասի փոխհրամանատար մայոր Մամիկոն Վարդանյանը:

2008թ. հունիսին 2005-08թթ. զինծառայության ընթացքում մահացած զինվորների ընտանիքները համատեղ հայտարարությամբ հանդես եկան, որտեղ մեղադրում են իշխանություններին իրենց որդիների մահվան հանգամանքների շուրջ համակարգված կերպով կեղծ հետաքննություններ անցկացնելու ու ապացույցները վերացնելու կամ կեղծելու մեջ, որով նպատակ էր հետապնդվում քողարկել սպանություններն ու ներկայացնել դրանք որպես պատահարներ, ինքնասպանություններ կամ դիպուկահարների հարձակումների հետևանք:

2008թ. հունիսին սկսվեց Վարդենիսի Կարճաղբյուր զորամասում ծառայող Տիգրան Օհանջանյանի 2007թ. մահվան գործով դատաքննությունը: Նրա մահը պաշտոնապես ներկայացվում էր որպես պատահական էլեկտրահարման հետևանք, և նրա հետ ծառայող երկու զինվորների՝ Ռուստամ Ասատրյանին ու Կարեն Թովմասյանին ներկայացված էր մեղադրանք անփութություն դրսևորելու մեջ: Նրա ընտանիքը սակայն հավատացած էր, որ Օհանջանյանին սպանել էին: «Հետք» առցանց լրատվական գործակալության օգոստոսի 26-ի հաղորդման համաձայն փորձաքննական եզրակացության համաձայն զորամասի էլեկտրական հոսանքի լարումն այնքան բարձր չէր, որ հանգեցներ մահվան: Տարեվերջի դրությամբ դատավարությունը շարունակվում էր և Օհանջանյանի ընտանիքի պնդմամբ այն ընթանում էր բազմաթիվ ընթացակարգային խախտումներով, որոնց նպատակն էր քողարկել իրենց որդու մահվան հանգամանքները և թաքցնել մեղավորներին:

Փետրվարի 23-ին կապիտան Վիկտոր Ասլանյանը Տավուշի մարզի Կողբի զորամասում իր հրամանատարության ներքո ծառայող Հովհաննես Մելտոնյանին 2007թ. ինքնասպանության հասցնելու համար դատապարտվեց յոթը տարվա ազատազրկման:

Ապրիլի 7-ին դատապարտվեց Ավետիս Ավետիսյանը 2008թ. մայիսին Նարեկ Գալստյանի մահվան հետ կապված, որը ըստ հաղորդումների գտել էին զորամասի բենզինի ցիստեռնում մահացած: Ավետիսյանը պաշտոնական կեղծման և պարեկապահակային կանոնակարգային նորմերի խախտման համար դատապարտվեց տույժի և մեկ տարվա ազատազրկման: Օգոստոսի 9-ին վերաքննիչ դատարանի որոշմամբ Ավետիսյանի նկատմամբ կիրառվեց հունիսի 19-ին հայտարարված համաներումը, և նա ազատ արձակվեց: Գալստյանների ընտանիքի մտահոգություններն առ այն, որ իրենց որդուն սպանել են, մնացին անպատասխան:

Սեպտեմբերի 1-ին իր հրամանատարության ներքո ծառայող զինվոր Գեղամ Սերգոյանին 2007թ. սպանելու համար Հենրիխ Գրիգորյանը դատապարտվեց

տասնհինգ տարվա ազատազրկման: Գրիգորյանը նաև դատապարտվեց պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար:

Ազգությամբ հայ անջատողականները Հայաստանի օգնությամբ շարունակել են վերահսկել Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանի մեծ մասը և հարակից ադրբեջանական յոթ տարածքները: Ադրբեջանի հետ սահմանի ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շփման գծի ողջ երկայնքով տեղակայված ականները շարունակել են մարմնական վնասվածքների պատճառ հանդիսանալ:

Կառավարական աղբյուրների համաձայն տարվա առաջին 11 ամիսների ընթացքում ականային պայթյուններից զոհվել են երեք և վիրավորվել երկու զինծառայողներ: Եղել է մեկ հաղորդում, երբ ականների հետևանքով վնասվածք է ստացել մեկ քաղաքացիական անձ:

Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա առաջին 11 ամիսների ընթացքում ռազմականացված շփման գծի երկայնքով, որը բաժանում է կողմերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում, հայկական կողմում գրանցվել է 26 դժբախտ պատահար, այդ թվում՝ 6 զինծառայող զոհվել են, վիրավորվել են 18 զինվորական և 2 քաղաքացիական անձ:

Փետրվարի 3-ի երեկոյան Երևան քաղաքի կենտրոնում իր տան շքամուտքի մոտ հրազենային կրակոցներից սպանվեց փոխոստիկանապետ ոստիկանության գնդապետ Գևորգ Մհերյանը: Մհերյանը կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով նախագահի նախկին խորհրդականն էր, և նրան 2008թ. հուլիսին այս նոր պաշտոնին առաջ էր քաշել նախագահ Սարգսյանը, և ըստ հաղորդումների իր մահվան պահին Մհերյանը դեռևս ակտիվորեն ներգրավված էր բարձրաստիճան հակակոռուպցիոն աշխատանքներում: Փետրվարի 5-ին նախագահ Սարգսյանը սպանության փաստի առիթով խորհրդակցություն հրավիրեց՝ ոստիկանապետի, Ազգային անվտանգության ծառայության տնօրենի, Գլխավոր դատախազի և այլ իրավապահ պաշտոնյաների մասնակցությամբ: Մհերյանի մահը նա համարեց հարձակում երկրի իրավապահ համակարգի վրա և ակնարկեց Մհերյանի վերջին շրջանի հակակոռուպցիոն գործունեությունը որպես ոճրագործության հնարավոր գործոն: Տարեվերջի դրությամբ մարդասպանը դեռ չէր բացահայտվել և քննությունը շարունակվում էր:

Զարգացումներ չեն գրանցվել 2007թ. Լոռու Գլխավոր դատախազ Ալբերտ Ղազարյանի սպանության գործով և 2007թ. Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի և նրան ուղեկցող անձանց վրա գործած հարձակման գործով, որի հետևանքով զոհվել էին երեք թիկնապահներն ու վարորդը:

## **բ) Անհետացումներ**

Քաղաքական շարժառիթներով պայմանավորված անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

**գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ**

Չնայած օրենսդրությամբ հիշյալ երևույթներն արգելվում են, սակայն անվտանգության ուժերի անդամների կողմից դրանք կանոնավոր կիրառվել են: Վկաները շարունակել են հաղորդել, որ ոստիկանները ձերբակալելիս կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում հարցաքննելիս ծեծի են ենթարկել քաղաքացիներին: Նմանատիպ հաղորդումներ են եղել մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից. սակայն ոստիկանության անօրինաչափ գործողությունների մեծ մասը շարունակում են մնալ չներկայացված՝ ելնելով հաշվեհարդարի վախից: : Իրավապաշտպան խմբերը շարունակել են հաղորդել, որ ոստիկանության կողմից ձերբակալված և կալանավորված անձանց պահման վայրերից բանտեր տեղափոխված անձանց կեսից ավելին պնդում են, որ ոստիկանության հսկողության տակ գտնվելու ժամանակ իրենք ենթարկվել են խոշտանգումների, բռնությունների կամ ահաբեկման, և որ խոշտանգումների ու ֆիզիկական բռնությունների հիմնական նպատակը եղել է խոստովանություն կորզելը:

2008թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով երկրի կողմից գրանցվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված դաժան և նվաստացնող վերաբերմունքի արգելքի երեք խախտում:

2008թ. փետրվարին Գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանի և նրա եղբայր Վարդանի ձերբակալության և բերման ենթարկելու ժամանակ խոշտանգումների ենթարկվելու մասին հնչած մեղադրանքների հետաքննության հետ կապված նորություններ չկային (տես՝ Քաղաքական բանտարկյալներ և կալանավորներ, Մաս 1):

Տարվա ընթացքում բազմաթիվ վկաներ, որոնց կանչել էին ցուցմունք տալու 2008թ. նախագահական ընտրությունների ու դրանց հաջորդած բռնությունների առնչությամբ ձերբակալված ընդդիմադիր գործիչների դեմ, հայտնել են դիտորդներին, լրատվամիջոցներին և դատարաններին, որ իրենք իրավապահների կողմից ենթարկվել են խոշտանգումների կամ ահաբեկումների՝ գործիչների դեմ կեղծ ցուցմունք տալու համար:

Մայիսի 6-ին նախկին պատգամավոր և ընդդիմության կողմնակից Մասուն Միքայելյանի դեմ հարուցված քրեական գործով անցնող վկա Յաշա Մելքոնյանը, դատարանում հրաժարվեց Միքայելյանի դեմ քննության ընթացքում տված իր ցուցմունքներից՝ նշելով, որ այդ գրավոր ցուցմունքը տվել է՝ գտնվելով քննիչների ֆիզիկական ճնշման ներքո: Մելքոնյանը նաև հայտնեց, որ նախքան իրեն դատախազություն փոխադրելը Հրազդանի ոստիկանության բաժանմունքում ծեծի է ենթարկվել դիմակավոր մի մարդու կողմից՝ Հրազդանի ոստիկանական վարչության քննչական բաժնի պետ Մերգեյ Մարկոսյանի հսկողության ներքո: Մայիսի 8-ին Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) Մելքոնյանի հնչեցրած մեղադրանքներով

հարուցեց քրեական գործ, սակայն ըստ Գլխավոր դատախազության Մելքոնյանը հրաժարվեց իր այդ մեղադրանքներից ու ՀԲԾ-ն գործը կարճեց:

Ըստ լրատվամիջոցների հաղորդումների մայիսի 19-ին Հենրիկ Հարթենյանը հրաժարվեց իր ցուցմունքներից, որ 2008թ. հետաքննության ընթացքում տվել էր պատգամավոր և 2008թ. մարտի իրադարձություններից հետո ձերբակալված և հեղաշրջման փորձի ու սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կազմակերպման մեջ մեղադրվող յոթ հայտնի ընդդիմադիր առաջնորդներից մեկի՝ Մյասնիկ Մալխասյանի դեմ: Երևանի դատարանում Հարթենյանն ասաց, որ կեղծ ցուցմունք է տվել ծեծի ենթարկվելուց ու ոստիկանության կողմից բերման ենթարկվելուց հետո: Հարթենյանը ըստ հաղորդումների հայտնել է, որ հետաքննիչը սպառնացել է նրա կյանքին, եթե նա չապահովեր ոստիկանության պահանջած կեղծ ցուցմունքները: Հարթենյանը նաև պնդում էր, որ վերջերս իր հայրենի Աշտարակ քաղաքում ոստիկանությունը սպառնացել է նրան և նրա ընտանիքին, որպեսզի նա ցուցմունքներից չհրաժարվի:

Ըստ լրատվամիջոցների հաղորդումների Մյասնիկ Մալխասյանի գործով անցնող մեկ այլ վկա՝ Գագիկ Ավդալյանը, մայիսի 19-ին Երևանի դատարանում հայտնեց, որ կեղծ մեղադրել է Մալխասյանին՝ 2008թ. մարտին ոստիկանությունում դիմակավոր անձանց կողմից դաժան ծեծի ենթարկվելուց հետո: Ցուցմունք տալուց մի քանի բուպե առաջ Ավդալյանն, ըստ իր պնդումների հարկադրաբար տարվել է ազգային ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն, որտեղ վարչության պետ գնդապետ Հովհաննես Թամամյանը նրան խոստացել է ազատ արձակել քրեական հանցանքի համար անազատության մեջ գտնվող եղբորը, եթե նա իր նախնական ցուցմունքն ընդդեմ Մալխասյանի չփոխի:

Ընդդիմադիր գործիչների դեմ ցուցմունքներ տալուն հարկադրելու նպատակով իշխանությունների կողմից նման խոշտանգումների և նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելու, ինչպես նաև հետագայում նախնական ցուցմունքից չհրաժարվելուն ուղղված սպառնալիքների վերաբերյալ մեղադրանքներ են հնչեցրել նաև Մուշեղ Անտոնյանը, Ռաֆայել Բալբաբյանը, Արիստակես Վարդանյանը և այլոք:

Մայիսի 29-ին Գլխավոր դատախազության տարածած մամլո հաղորդագրությամբ հայտարարվում էր, որ հինգ քրեական գործ է հարուցվել Ազգային ժողովի այն ժամանակվա պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Մյասնիկ Մալխասյանի և Սասուն Միքայելյանի, ինչպես նաև Գրիգոր Ոսկերչյանի, Ալեքսանդր Արզումանյանի և Սուրեն Միրունյանի դատաքննությունների ընթացքում իրավապահների և այլոց կողմից վկաների ահաբեկման վերաբերյալ հնչեցրած մեղադրանքներով: Հինգ գործերից չորսը հարուցվել են անօրինաչափ գործողությունների մասին վկաների հայտարարությունների հիման վրա, այդ թվում նաև Յաշա Մելքոնյանի հայտարարության հիման վրա (տես՝ վերը): Հինգերորդ գործն հարուցվել էր, երբ ընդդիմադիր գործիչների գործերով անցնող մի քանի վկաներ ըստ հաղորդումների դիմել էին իրավապահներին և դատարաններին՝ հայցելով պաշտպանություն



ընդդիմության կողմնակիցների դեմ տրված իրենց ցուցմունքները հետ վերցնելու վերաբերյալ անհայտ անձանց ճնշումներից: Ընդդիմությունն իր դեմ ուղղված այս պնդումները հերքում էր: Գլխավոր դատախազությունը կարճեց վկա Գևորգ Մինասյանի հաղորդմամբ հարուցված գործը՝, եզրահանգելով, որ քննիչների կողմից որևէ խախտում թույլ չի տրվել: Վկա Էդիկ Խաչատրյանի գործի հետ կապված Գլխավոր դատախազությունը հայտնում էր, որ ոտնահարումների մասին իր հնչեցրած մեղադրանքները Խաչատրյանը ետ է վերցրել: Գլխավոր դատախազությունն ապացույցների բացակայության հիմքով կարճեց վկա Արսեն Մկրտչյանի ահաբեկման ու ոտնահարումների մասին հնչեցրած մեղադրանքների հետ կապված գործը. կարճվեց նաև Յաշա Մելքոնյանի գործը, քանի որ ըստ հաղորդումների նա հրաժարվեց իր հնչեցրած մեղադրանքներից: Ընդդիմության ներկայացուցիչների դեմ կեղծ ցուցմունք տալու համար հարկադրանքի ու սպառնալիքի ենթարկվելու վերաբերյալ մյուս վկաների հնչեցրած մեղադրանքների հետ կապված գործերի վերաբերյալ Գլխավոր դատախազությունը տեղեկություններ չի տրամադրել:

Նոյեմբերի 20-ին Հատուկ քննչական ծառայությունը հայտարարեց, որ «բռնության կիրառմամբ զուգորդված» պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեղադրանք է ներկայացվել Գյումրու նախկին ոստիկանապետին, ով հուլիսին ծեծել և անօրինականորեն կալանքի տակ է պահել մի քաղաքացու, ով բողոքով եկել էր նրա մոտ: Նախկին ոստիկանապետ Շիրակ Շահնազարյանը նոյեմբերի սկզբին ազատվեց զբաղեցրած պաշտոնից՝ առանց կոնկրետ պատճառների հիշատակման:

2008թ. ապրիլին Եվրախորհրդի մարդու իրավունքների հարցով հանձնակատար Թոմաս Համբրերգը հրապարակեց մի զեկույց, որտեղ մտահոգություն էր հայտնվում կալանքի տակ գտնվող անձանց հանդեպ ոստիկանության վատ վերաբերմունքի վերաբերյալ, որը կարծես թե լայն տարածում ուներ և ուղղված էր խոստովանությունների կորզմանը:

Սեպտեմբերի 8-ին Հասարակական դիտորդների խումբը, որ հայտնի նաև Քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խումբ անվամբ, հրապարակեց 2008 թ. իր տարեկան զեկույցը երկրի քրեակատարողական հիմնարկների պայմանների վերաբերյալ: Ըստ զեկույցի թեպետ բանտարկյալների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումները 2001թ. ի վեր նվազում են, սակայն բռնությունը, այդ թվում խոշտանգումները շարունակում են կիրառվել որպես պատիժ պահանջների չկատարման կամ փախուստի փորձերի դեպքերում: Չեկույցն առանձնացնում էր բռնությունների որոշակի միտում, որի մասին հիմնականում հաղորդումներ չեն լինում, և որը տեղի էր ունենում քրեակատարողական հիմնարկներ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության արագ արձագանքման խմբի այցերի ընթացքում:

Հասարակական դիտորդների խմբի 2008թ. դեկտեմբերին հրապարակած զեկույցի համաձայն խորհրդի վեց անդամներ այցելել են «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներ, երբ հաղորդում է ստացվել բանտարկված ընդդիմադիր գործիչների դեմ բռնությունների մասին: Այցի ժամանակ նրանք տեղեկացել են, որ արագ արձագանքման բաժինը քրեակատարողական հիմնարկում խուզարկություն է անցկացրել, որի ընթացքում տարբեր խցերում տեղ են գտել բռնարարքների միջադեպեր, այդ թվում՝ նվաստացնող վերաբերմունք, ապտակում և վիրավորանքներ: Ընդդիմադիր գործիչ Գրիգոր Ոսկերչյանի խցում խուզարկության ժամանակ ըստ հաղորդումների Ոսկերչյանին ապտակել են և ոտքով հարվածել, երբ իմացել են նրա ընդդիմադիր քաղաքական գործունեության մասին:

Ըստ զեկույցի «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ արագ արձագանքման խմբի այցի ժամանակ հիմնական բռնությունը տեղ է գտել 3-րդ մասնաշենքի 36-րդ խցում, որտեղ պահվում են 13 բանտարկյալներ: Ըստ տարբեր աղբյուրների խուզարկության ժամանակ տեղի է ունեցել բախում, որի արդյունքում վնասվածք է ստացել արագ արձագանքման խմբի պետ Զորիկ Արզումանյանը, որից հետո ըստ հնչեցրած մեղադրանքների արագ արձագանքման խմբի անդամները բավականին երկար ժամանակ ձեռի են ենթարկել խցի բոլոր բանտարկյալներին:

Բանտարկյալների մոտ գրանցվել են քթի կոտրվածքներ, կտրվածքներ, կապտուկներ դեմքին, գլխին, մեջքին, ոտքերին, թևերին: Հասարակական դիտորդների խումբը եզրակացնում էր, որ արագ արձագանքման բաժնի անդամները թույլ են տվել ուժի համաչափ կիրառման սկզբունքի կոպիտ խախտումներ և չարաշահել են իրենց պաշտոնեական լիազորությունները: Հաշվի առնելով գործողության մասշտաբն ու տևողությունը Հասարակական դիտորդների խումբը եզրակացրել է, որ բռնությունները կարելի է որակել որպես խոշտանգումներ:

Հասարակական դիտորդների խումբն հրատապ զեկույց ներկայացրեց Արդարադատության նախարարությանը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ արագ արձագանքման խմբի այցի վերաբերյալ, որը նախարարությունը քննություն իրականացնելու համար հանձնեց դատախազությանը: Արդարադատության նախարարությունը նաև սկսեց ծառայողական քննություն: Հունվարի 9-ին ծառայողական քննության արդյունքներով Արդարադատության նախարարությունը նկատողություն հայտնեց արագ արձագանքման խմբի աշխատակից կապիտան Արթուր Եղիազարյանին՝ սպային ոչ հարիր արարք թույլ տալու և Գրիգոր Ոսկերչյանին հարվածելու համար: Ըստ Արդարադատության նախարարության հունիսի 18-ին Արթուր Տոնոյանը՝ 36-րդ խցից, որտեղ գրանցվել էին բռնություններ արագ արձագանքման խմբի կողմից, դատապարտվեց հինգ տարվա ազատազրկման իշխանության ներկայացուցչի դեմ բռնություն կիրառելու համար:

Հունիսին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ն հրապարակեց զեկույց 2008թ. վերջից մինչև մայիս ժամանակահատվածում Լոռու մարզում քաղաքացիների նկատմամբ ոստիկանների բռնությունների ու խոշտանգումների միջադեպերի մասին: Ոստիկանության անօրինական գործողությունների վերաբերյալ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հնչեցրած ինը մեղադրանքներով, որոնք վերաբերում էին ազատությունից անօրինականորեն զրկելուն, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքին, խոշտանգումներին, հոգեբանական ճնշումներին և սպառնալիքներին, որևէ քրեական գործ չէր հարուցվել:

Ըստ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի զեկույցի հունվարի 10-ին անչափահասներ Սուրեն Այվազյանին և Հարություն Գալստյանին առանց որևէ պատճառ նշելու բերման են ենթարկել Վանաձոր քաղաքի Բազումի ոստիկանական բաժանմունք: Ոստիկանության բաժանմունքում ըստ հնչեցրած մեղադրանքների Այվազյանին ենթարկել են արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, բազմիցս ապտակել են ու սպառնացել են նստեցնել էլեկտրական սալօջախի վրա, եթե նա կեղծ ցուցմունք չտա Գալստյանի դեմ: Այվազյանը նշում է, որ ինքը տեսել է, որ մեկ այլ սենյակում ոստիկանները ծեծի են ենթարկել Գալստյանին և մեկ այլ երիտասարդի: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հաղորդումից հետո ոստիկանությունում ծառայողական քննություն սկսվեց, որը եզրակացրեց, որ հաղորդված միջադեպը տեղի չի ունեցել: Ոստիկանությունը նաև նշեց, որ տղաները հերքել են հնչեցրած այդ մեղադրանքները:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նույն զեկույցի համաձայն Վանաձորի բնակիչ Արթուր Վարդումյանին քրեորեն պատժելի գործողությունների կասկածանքով բերման են ենթարկել ոստիկանական բաժանմունք, որտեղ ըստ հաղորդման նրան մի քանի ոստիկաններ ծեծի են ենթարկել: «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի գրառումների մատյանում, երբ նրան ոստիկանությունից փոխադրել են քրեակատարողական հիմնարկ, նշում էր կատարվել նրա վնասվածքների մասին: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան պաշտոնապես հայտնել են, որ Վարդումյանն ինքն իրեն է բազմաթիվ վնասվածքները պատճառել կալանքում գտնվելու ընթացքում՝ գլխով սեղանին և պատին հարվածելու միջոցով:

Ապրիլի 11-ին մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հաղորդում ներկայացրեց Երևան քաղաքի Արաբկիր համայնքի ոստիկանության բաժանմունքում հինգ կալանավորվածների հանդեպ դրսևորված չարաշահման դեպքի մասին: Չարաշահումները ներառում էին ծեծ, բուժօգնության չտրամադրում, ազատությունից ապօրինի զրկում, նվաստացնող վերաբերմունք, սննդի և քնի մերժում: Այս փաստով քննություն իրականացնելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումին՝ ուղղված Հատուկ քննչական ծառայությանը, տարեվերջի դրությամբ դեռ ընթացք տրված չէր:

Ապրիլի 16-ին Հատուկ քննչական ծառայությունը կարճեց 2007թ. մայիսին ոստիկանության բաժանմունքում կասկածելի հանգամանքներում մահացած ռեստորանի սեփականատեր Լևոն Գուլյանի մահվան գործի քննությունը՝ հանցանքի առկայության վերաբերյալ ապացույցների բացակայության հիմքով: Դեկտեմբերի 2-ին առաջին ատյանի դատարանը գործի կարճման վերաբերյալ ընտանիքի բողոքը մերժեց, որից հետո ընտանիքը դիմեց վերաքննիչ դատարան, որտեղ տարեվերջի դրությամբ գործը դեռ ընթացքի մեջ էր: Հատուկ քննչական ծառայությունը, որի վարույթ այս գործն անցել էր 2007թ. Գլխավոր դատախազությունից, փակել էր քրեական գործը դեռևս 2008թ. մարտին՝ փաստելով, որ սպանության հնարավոր վկա Գուլյանը մահացել է ոստիկանության բաժանմունքի երկրորդ հարկի պատուհանից դուրս նետվելու հետևանքով, երբ փորձել է փախուստի դիմել: Գուլյանի ընտանիքի անդամները և մարդու իրավունքների հարցերով ակտիվիստներն այդ ժամանակ նշում էին, որ հետաքննությունը ոչ արժանահավատ էր, և ոչ էլ թափանցիկ և պնդում էին, որ Գուլյանը մահացել է ոստիկանների բռնությունների հետևանքով: Մայիսի 12-ին Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի Փարիզի գլխավոր գրասենյակը և «Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ն հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ խորը մտահոգություն հայտնեցին Գուլյանի դեռևս չբացահայտված գործի վերաբերյալ:

Զարգացումներ չեն եղել 2007թ. Լոռու մարզի նախկին դատախազ Ալբերտ Ղազարյանի սպանության գործով վկաներ Կարեն Դոդոյանի և Աշոտ Ղուկասյանի կողմից խոշտանգումների և բռնությունների մասին ներկայացրած մեղադրանքների հարցում: Հետագա զարգացումներ չեն գրանցվել նաև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում մի կալանավորի և Արտավազդ Միմոնյանի հանդեպ 2007թ. տեղ գտած բռնությունների մեղադրանքների մասով:

Բանակում տիրող բարքերը, հրամանատարների անպատժելիությունը, կոռուպցիան և վատ կենցաղային պայմանները զինված ուժերում շարունակել են ռազմական գործողությունների հետ կապ չունեցող դաժան վերաբերմունքի ու վնասվածքների պատճառ հանդիսանալ: Չնայած հուսալի վիճակագրություն չկա զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորումների վերաբերյալ, սակայն զինվորները հաղորդել են մարդու իրավունքներով զբաղվող ՀԿ-ներին, որ այդ երևույթը շարունակվել է: Զինվորների ընտանիքները հայտնել են, որ կոռումպացված պաշտոնյաներ վերահսկում են զորամասերը: Մարդու իրավունքների հարցերը դիտարկողները և Մարդու իրավունքների պաշտպանը հաղորդել են այնպիսի դեպքերի մասին, երբ բանակ են զորակոչվել անձինք, ովքեր առողջական լուրջ խնդիրների պատճառով պիտանի չեն եղել զինվորական ծառայության համար: Ըստ զինվորական դատախազության տվյալների տարվա 11 ամիսների ընթացքում ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորման ու դրանց հետ կապված բռնությունների համար դատապարտվել է 38 զինծառայող, ևս 45 գործ դեռ գտնվում էին դատաքննության փուլում:

Մայիսի 27-ին Մարդու իրավունքների պաշտպանը հրատարակեց զինված ուժերում 2008թ. տեղ գտած մարդու իրավունքների խախտումների մասին արտահերթ զեկույց: Ջեկույցում առանձնացվում էին գորակոչիկների նկատմամբ հրամանատարների և մյուս ծառայողների վատ վերաբերմունքը և ոչ կանոնակարգային հարաբերությունների դրսևորումը և այս կարգի արարքների համար պատասխանատվության բացակայությունը: Ջեկույցը նաև շեշտադրում էր բանակում կանոնակարգային հարաբերությունների խախտումների դեպքերը չգրանցելը: Ըստ զեկույցի պաշտոնապես գրանցվում էին կանոնակարգային հարաբերությունների խախտումների միայն 15-20 տոկոսը: Ըստ զեկույցի տարվա առաջին ինն ամիսների ընթացքում ծեծի և կանոնակարգային հարաբերությունների խախտումների 171 դեպք է տեղ գտել, որոնցից 38-ը սպայական անձնակազմի կողմից գորակոչիկների ծեծի ենթարկելու դեպքերն են: Ջեկույցում նաև քննարկվում էր կարգապահական տույժերի շրջանակում ծառայողների նկատմամբ նվաստացնող վերաբերմունքի կամայական կիրառումը և հիշատակվում էր, որ շարունակվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի դարձնող առողջական խնդիրներով անձանց գորակոչը:

Հունիսի 16-ին Պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ ձևավորում է հատուկ հանձնախումբ, որն առաջարկներ կներկայացնի կարգապահական կանոնակարգերի բարելավման և դրանք միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու վերաբերյալ: Տարեվերջի դրությամբ առաջարկներ դեռևս մշակված չէին:

2008թ. մայիսին բանակ գորակոչվեց Աշոտ Ոսկանյանը՝ չնայած ոտքերի հետ կապված լուրջ առողջական խնդիրներին: Ըստ հաղորդումների ծառայությունն սկսելուց անմիջապես հետո Ոսկանյանի համար պահանջվեցին հենակներ, իսկ հետո մի քանի վիրահատություններ կատարվեցին, քանի որ ոտքերի վիճակն հետզհետե վատանում էր: Ոսկանյանի ծնողները նրան ծառայությունից ազատելու բազմաթիվ անհաջող փորձեր արեցին: Լրատվամիջոցների բազմաթիվ հրապարակումների ու մարդու իրավունքների ակտիվիստների ահազանգերից հետո պաշտպանության նախարարը հուլիսի 7-ին հանդիպում ունեցավ Ոսկանյանի հետ, որից հետո նրան կրկին հիվանդանոց տեղափոխեցին՝ հետագա ծառայության հարցը բուժման վերջնական արդյունքների հիման վրա որոշելու ակնկալիքով: Ըստ պաշտոնական տեղեկատվության Ոսկանյանը հոկտեմբերի 8-ին բժշկական գնում անցավ և ճանաչվեց պիտանի ոչ շարային զինվորական ծառայության համար և վերադարձավ ծառայության:

### ***Բանտերի ու կալանավայրերի պայմանները***

Հասարակական դիտորդների խմբի սեպտեմբերի 8-ի զեկույցի համաձայն երկրում գրանցվել է առաջընթաց բանտերի ու կալանավայրերի բարեփոխումների ու դրանք մարդու իրավունքների միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու հարցում: Չնայած դրական տեղաշարժերին, որոնք հիմնականում պայմանավորված

Էին հին շինությունների վերանորոգմամբ ու նորերի կառուցմամբ, խումբն իր զեկույցում նշում է, որ քրեակատարողական հիմնարկների շինությունների ու կալանավորների հանդեպ վերաբերմունքի մասով բարելավումների կարիք դեռ զգացվում է:

Ըստ զեկույցի թերությունների շարքում են՝ խցերի շարունակվող գերբնակեցվածությունը, անձնական հիգիենայի ոչ համարժեք պայմանները, վատ ջեռուցումը, ոչ բավարար բուժանձնակազմը, օրենքով սահմանվածից քիչ ֆիզիկական վարժությունները և սննդի որակը, որ շարունակում է մնալ անբավարար: Ձեկույցը հիշատակում է Արագ արձագանքման խմբի կողմից բանտարկյալների հանդեպ բռնությունների դրսևորումը և գտնում, որ դատապարտվածներին վաղաժամկետ ազատ արձակելու հետ կապված որոշումների ընդունման գործընթացը սուբյեկտիվ է ու հակասական:

Մարտի 25-ին մարդու իրավունքների հարցերով մի շարք ՀԿ-ներ հրապարակեցին մի հայտարարություն, որտեղ մտայնություն էին հայտնում վաղաժամկետ ազատ արձակելու հարցերով հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

Մասնավորապես՝ ՀԿ-ներ մտահոգություն էին հայտնում, որ որոշումների ընդունման համար հանձնաժողովը չունի հստակ չափորոշիչներ, բացակայում են բողոքարկման մեխանիզմները, իսկ հանձնաժողովի կազմի գերակշիռ մասը կազմում են իրավապահ կառույցների ներկայացուցիչները:

Ըստ դիտորդների՝ բանտարկյալների ու կալանավորների հանդեպ իրավապահների կողմից թույլ տրված բռնությունների դեպքերի մեծ մասը շարունակվել է տեղի ունենալ ոստիկանական բաժանմունքներում և ոչ թե ոստիկանության կալանավորված և ձերբակալված անձանց պահման վայրերում, որոնք ենթակա են մարդու իրավունքների մոնիտորինգի:

Կոռուպցիան քրեակատարողական հիմնարկներում շարունակել է խնդրահարույց մնալ՝ սրվելով հատկապես բանտերի վարչական անձնակազմի ցածր աշխատավարձերի, ինչպես նաև աշխատանքի անբավարար, իսկ երբեմն նաև վտանգավոր պայմանների պատճառով: Որոշ քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալները կաշառում են պաշտոնյաներին, որպեսզի տեղավորվեն մենախցերում, և ստանան հավելյալ հարմարություններ: Կան նաև չստուգված հաղորդումներ առ այն, որ իշխանությունների կողմից գանձվել են «ոչ պաշտոնական» վճարներ, որպեսզի ընտանիքի անդամներին կամ ընկերներին թույլ տան ուտելիք փոխանցել բանտարկյալներին:

«Հելսինկյան կոմիտե» ՀԿ-ն հաղորդել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի նախկին բանտարկյալի պատմածը, ով պնդում էր, թե քրեակատարողական հիմնարկը ղեկավարվում էր կազմակերպված գաղտնի հանցավոր համակարգի կողմից, առկա էր հսկայական չափերի հասնող կոռուպցիա, որն անդրադառնում էր բանտարկյալների վրա և որում ներքաշված էր հիմնարկի վարչական անձնակազմը. գաղտնիությունը, շանտաժը, մոլախաղերը,

խոշտանգումները, հոգեբանական ճնշումները, ահաբեկումը և բանտարկյալներին ինքնասպանության հասցնելը գերիշխող երևույթներ էին: Այդ պատմության մեջ նշվում էր, որ կաշառք պետք է վճարվեր օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու համար, ինչպիսիք են՝ տեսակցությունները, հեռախոսագանգերը և հանձնուկներ ստանալը:

Կառավարությունը հիմնականում թույլատրել է տեղական հասարակական կազմակերպություններին և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին դիտարկել բանտային պայմանները: Կարմիր խաչի միջազգային կոմիտեին թույլատրվել է այցելել թե բանտեր, թե նախնական կալանքի կենտրոններ, ինչն էլ վերջինս իրականացրել է անհրաժեշտության ու նպատակահարմարության իր սկզբունքների համաձայն: Իշխանությունները հիմնականում թույլատրել են Հասարակական դիտորդների խմբի ներկայացուցիչներին առանց նախնական զգուշացման այցելել բանտեր:

#### **դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում**

Օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը, սակայն գործնականում իշխանությունները շարունակել են առանց կարգադրագրի ձերբակալել և կալանավորել քրեական գործերով կասկածյալներին: Իշխանությունները շարունակել են կամայականորեն կալանավորել անհատների՝ ընդդիմադիր քաղաքական կապերի կամ քաղաքական գործունեության համար:

#### ***Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը***

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար, երկու կառույցների ղեկավարներն էլ նշանակվում են նախագահի կողմից: Ոստիկանությունն ու ԱԱԾ դեռևս չունեն համապատասխան պատրաստվածություն, ռեսուրսներ և սահմանված ընթացակարգեր բարեփոխումների իրականացման կամ չարաշահումների դեպքերը կանխարգելելու համար: Բանտարկյալները հայտնել են, որ չարաշահումների մեղադրանքները հետաքննելու ուղղությամբ իրավապահ կառույցների կողմից շատ քիչ բան է արվում: Դրա արդյունքում անպատժելիությունը շարունակում էր մնալ լուրջ խնդիր:

Ոստիկանության ու անվտանգության ուժերի համար շարունակել է զգալի խնդիր մնալ կոռուպցիան: Չնայած ճանապարհային ոստիկանության կողմից կաշառքներ վերցնելու նվազեցմանն ուղղված հետագա ջանքերին՝ քաղաքացիների հաղորդումների համաձայն ոստիկանները շարունակել են պահանջել կաշառք, սակայն ավելի քիչ, քան նախորդ տարիներին: Ոստիկանական չարաշահումների քննության առանձին մեխանիզմ չի եղել: Ըստ օրենսդրության քաղաքացիները կարող են ոստիկանության դեմ հայց ներկայացնել դատարան: Ըստ պաշտոնական

տեղեկատվության ուստիկանությունում տարվա ընթացքում 32 ծառայողական քննություն է անցկացվել ձեռքբերված կամ կալանավորված անձանց, վկաների կամ քաղաքացիների կողմից ուստիկանության աշխատակիցների անօրինակապի և դաժան վերաբերմունքի հետ կապված բողոքներով: Գործերից 28-ն ապացույցներով չեն հիմնավորվել, երկու գործերով վեց ուստիկաններ ստացել են խիստ նկատողություն, իսկ մնացած երկու գործերը կասեցվել են՝ մինչ Հատուկ քննչական ծառայությունը կդիտարկեր գործի նյութերը:

Տարվա ընթացքում հատուկ քննչական ծառայությունը ուստիկանների կողմից հանցանքներ կատարելու մեղադրանքով 77 քրեական գործ է հարուցել, այդ թվում՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու 16 գործ, պաշտոնեական լիազորություններն անցնելու 11 գործ, կաշառք վերցնելու 10 գործ, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ պատճառելու 11 գործ, խարդախության 5 գործ, խուլիգանության 4 գործ, նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու 3 գործ, զոդության, անօրինական զենք պահելու, զենքի ոչ պատշաճ պահպանության երկուական գործ, ինչպես նաև սպանության, անօրինական ձեռնարկատիրության, հարկերից խուսափելու, զենքի պահպանման հետ կապված անփութության, իրացման նպատակներով թմրամիջոցների անօրինական շրջանառության, առանց իրացման նպատակի թմրամիջոցների անօրինական շրջանառության, կաշառք տալու, պաշտոնեական կեղծիքի, պաշտոնեական անփութության, ցուցմունքի հարկադրման և հրազենի ոչ պատշաճ տնօրինման մեկական գործ: Տարեվերջի դրությամբ 77 գործերից 33-ը՝ 40 հոգու դեմ գտնվում էին դատաքննության փուլում, 16-ը կարճվել էին, 6-ը կասեցվել, երեքը միացվել էին վարույթի մեջ գտնվող այլ քրեական գործերին, չորսն ուղարկվել էին այլ մարմնի, իսկ 15-ը գտնվում էին ընթացքի մեջ:

Տարվա ընթացքում հատուկ քննչական ծառայությունը հետաքննել է տարբեր քրեակատարողական հիմնարկների աշխատողների դեմ հարուցված 24 գործ, այդ թվում՝ 13 գործ թմրամիջոցների անօրինական բաշխման, երեք գործ քաղաքացիական անձին մարմնական վնասվածք հասցնելու, երկու գործ պաշտոնեական լիազորություններն անցնելու, և մեկական գործ կապված ոչ պատշաճ բուժօգնության ապահովման, կաշառք վերցնելու, պաշտոնեական անփութության և բանտից փախուստին աջակցելու հետ կապված: Այս գործերից տասով եղել են դատապարտումներ:

2007թ. Գլխավոր դատախազությունը քրեական գործ հարուցեց «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի փոխտնօրեն Գագիկ Հովհաննիսյանի դեմ պաշտոնեական լիազորություններն անցնելու համար, և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի երկու աշխատողների՝ Արսեն Գրիգորյանի և Լևոն Հովակիմյանի դեմ՝ իրավասությունների չարաշահման և բանտարկյալի հանդեպ բռնության դրսևորման համար: Հունվարի 12-ին Հովհաննիսյանը դատապարտվեց



երկու տարվա ազատագրկման, իսկ Գրիգորյանն ու Հովակիմյանը դատապարտվեցին և ստացան երկու տարվա պայմանական պատիժ:

Օրենսդրության համաձայն նախնական կալանքի տակ գտնվողները կարող են նախքան դատավարությունը բողոք ներկայացնել քննության ընթացքում իշխանությունների թույլ տված բռնությունների վերաբերյալ. այնուհանդերձ կալանքի տակ գտնվող անձինք պետք է ոստիկանությունից կամ դատախազությունից բժշկական փորձաքննության թույլտվություն ստանան, որն անհրաժեշտ է ֆիզիկական բռնության փաստը հաստատելու համար: Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները շարունակել են հայտնել, որ իրավասու մարմինները հազվադեպ են այդպիսի թույլտվություն տալիս կամ տալիս են օրեր անց, երբ բռնության հետքերն այլևս տեսանելի չեն:

Հատուկ քննչական ծառայությունը տեղակայված էր Գլխավոր դատախազության շենքում և ղեկավարվում էր դատախազության քննչական վարչության նախկին պետի կողմից և շարունակել է գործել որպես դատախազության դե ֆակտո քննչական մարմին՝ շրջելով դատախարակական համակարգում զսպման և հավասարակշռման մեխանիզմների բարելավումներին ուղղված ավելի վաղ մեկնարկած բարեփոխումների արդյունքները և նպատակը:

2008թ. մարտին ոստիկանությունը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հետ միասին սկսեց համայնքային ոստիկանության կենտրոնի փորձարարական ծրագիր, որի նպատակն է նպաստել ոստիկանության ու հասարակության համագործակցությանը: Ծրագիրը մեկնարկեց Երևանի Արաբկիր համայնքի ոստիկանական բաժանմունքում և շարունակում էր գործել տարվա ընթացքում: 2008թ. նոյեմբերին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ոստիկանության միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ ոստիկանական գործառույթի ժողովրդավարականության, համայնքային ոստիկանական գործունեության, միջազգային ստանդարտներին համաձայն ոստիկանների ուսուցանման ու հասարակական կարգի պահպանման հմտությունների զարգացման հարցերում համագործակցության և օժանդակության վերաբերյալ:

### ***Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում***

Ձերբակալված կասկածյալին 72 ժամից ավել կալանքի տակ պահելու համար դատախազները և ոստիկանության քննիչները պետք է դատավորից կարգադրագիր ստանան: Դատավորները հազվադեպ են մերժում ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը: Երբեմն ոստիկանությունը ձերբակալություններ է կատարել և անձանց պահել մինչև 72 ժամ այն պատրվակով, թե այդ անձինք գործով անցնող վկաներ են, և ոչ կասկածյալներ. դիտորդները պնդել են, որ ոստիկանությունը խուսափում էր նրանց կասկածյալներ որակելուց, քանզի դա առաջ կբերեր նրանց համապատասխան իրավունքները որպես կասկածյալ/մեղադրյալ:

Օրենքը նախատեսում է գրավի համակարգ, սակայն գործնականում դատարանների մեծ մասը մերժում է գրավի հայտը՝ կարգադրելով փոխարենը կամ շարունակել կալանքը, կամ մեղադրյալին ազատ արձակել՝ նրանց ստանձնած պարտավորության հիման վրա: Վերջին տարբերակի դեպքում մեղադրյալներից երբեմն պահանջում են հանձնել անձնագիրը և փաստաթուղթ ստորագրել երկրի (որոշ դեպքերում քաղաքի) սահմաններից չբացակայելու վերաբերյալ:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել կալանավորվածներին լռություն պահպանելու, հեռախոսազանգ կատարելու և ձեռքակալության պահից սկսած փաստաբանի, իսկ անվճարունակ լինելու դեպքում հանրային պաշտպանի կողմից ներկայացված լինելու իրավունքների մասին: Գործնականում ոստիկանությունը միշտ չէ, որ առաջնորդվել է օրենքով: Ոստիկանությունը հաճախ առանց փաստաբանի ներկայության հարցաքննել ու ճնշում է գործադրել կալանավորների վրա՝ մեղադրական եզրակացությունից առաջ խոստովանություն ստանալու նպատակով: Ոստիկանությունը երբեմն սահմանափակել է ընտանիքի անդամների կամ փաստաբանների շփման հնարավորությունը կալանավորների հետ: Մարդկանց կալանքը որպես «գործով անցնող վկաների»՝ նախքան նրանց կասկածյալ որակելը, հանգեցրել է այն փաստին, որ այդ անձինք հարցաքննվել են առանց փաստաբանի:

Ըստ տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերի տարվա ընթացքում մարդկանց ձեռքակալությունների և կալանավորման ժամանակ տեղ են գտել ընթացակարգային և այլ խախտումներ:

Հունվարի 27-ին ԵՄԽՎ ընդունեց բանաձև, որում ամփոսանք էր հայտնվում, որ իշխանությունները սահմանափակ առաջընթաց են ունեցել 2008թ, մարտի իրադարձությունների հետ կապված անազատության մեջ հայտնվածների ազատ արձակման հարցում: Այս անձանցից շատերը կալանավորվել էին կարծես թե շինծու կամ քաղաքական շարժառիթներ պարունակող մեղադրանքներով: Այդ ժամանակ իշխանություններն արդարացնում էին ձեռքակալությունները՝ որպես անհրաժեշտ միջոց զանգվածային անկարգություններ սկսելու ու արտասահմանադրական միջոցներով իշխանությունը զավթելու փորձերը կանխելու համար: Թեպետ բերման ենթարկված անձանց մեծ մասին մի քանի ժամ պահելուց հետո առանց մեղադրանքներ ներկայացնելու ազատ են արձակել, սակայն ընդդիմության տասնյակ կողմնակիցներ անազատության մեջ են մնացել մինչև տասնվեց ամիս՝ մինչև հունիսի վերջը՝ լինելով արդեն դատապարտված, կամ սպասելով իրենց դատավարության ավարտին: ԵՄԽՎ-ն նշում էր, որ ընդդիմության կողմնակիցների հանդեպ քրեական հետապնդումների ու դատապարտումների զգալի մասը հիմնվել են բացառապես ոստիկանների ցուցմունքների վրա՝ առանց էական հիմնավորող ապացույցների:

Հունիսի 5-ին ոստիկանության կողմից բերման ենթարկվեց և ձեռքակալվեց «Հելսինկյան սսոցիացիա» տեղական ՀԿ-ի անդամ Արշալույս Հակոբյանը՝ իբր

նստիկանի վրա հարձակվելու համար, երբ վերջինս ծանուցագիր է հանձնել նրան նստիկանություն ներկայանալու վերաբերյալ՝ կապված ընտրակեղծիքների վերաբերյալ Հակոբյանի ներկայացրած պաշտոնական բողոքի հետ, որը վերջինս ներկայացրել էր որպես մայիսի 31-ի Երևան քաղաքի ավագանու ընտրություններում հավատարմագրված դիտորդ: Հոկտեմբերի 16-ին, նոյեմբերի 20-ին և դեկտեմբերի 21-ին դատավորը հետաձգեց դատական լուսմները՝ ի պատասխան Հակոբյանին կալանավորած ու ձերբակալած նստիկանների գործողությունների հետաքննման նպատակով լրացուցիչ ժամանակ հատկացնելու դատախազի խնդրանքին: Հակոբյանը նշում էր, որ նստիկանները ճնշում են գործադրել իր վրա, որպեսզի նա ստորագրի ընտրակեղծիքների մասին իր ներկայացրած բողոքի հետ կապված ներկայանալու վերաբերյալ ծանուցագիրը և, որ նստիկանները ծեծել են իրեն նստիկանություն տանելու ճանապարհին ու նստիկանական բաժանմունքում: Դատական լուսմները տարեվերջի դրությամբ դեռ չէին վերսկսվել (տես՝ Մաս 5):

Հուլիսի 5-ին նստիկանությունը ձերբակալեց երիտասարդ ընդդիմադիր ակտիվիստ Տիգրան Առաքելյանին՝ նրան մեղադրելով խուլիգանության մեջ: Առաքելյանի ձերբակալությունը հետևեց հուլիսի 1-ին քաղաքացիական հագուստով նստիկանների և ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) երիտասարդ ակտիվիստների միջև տեղի ունեցած բախմանը Երևանի կենտրոնում, որտեղ վերջիններս հուլիսի 2-ի ՀԱԿ-ի հանրահավաքն ազդարարող թոուցիկներ էին բաժանում: Առաքելյանին նախնական կալանքի տակ պահեցին մինչև հոկտեմբերի 8-ը, որից հետո նրան ազատ արձակեցին առողջության վատթարացման պատճառով, ինչն առաքելյանի պնդմամբ պայմանավորված էր նստիկանության կողմից պատճառված գլխի վնասվածքներով: Դեկտեմբերի 15-ին Առաքելյանի և հուլիսի 1-ի միջադեպի առնչությամբ երկու այլ ակտիվիստների դեմ հարուցված քրեական գործը կարճվեց՝ ապացույցների բացակայության հիմքով (տես՝ Մաս 2.բ., Հավաքների ազատություն):

Խնդրահարույց է մնացել երկար նախնական կամ որպես խափանման միջոց կիրառվող կալանքի հարցը: Գործնականում իշխանությունները հարգել են օրենքի այն դրույթը, որ նախքան դատավարության սկսելը մեղադրյալը չի կարող պահվել կալանքի տակ 12 ամսից ավել: Սակայն օրենքը չի սահմանափակում այն ժամկետը, թե մեղադրյալն ինչքան կարող է մնալ կալանքի տակ գործը դատարան ուղարկելուց հետո: Թեպետ օրենքը պահանջում է լավ պատճառաբանված որոշում, որով հիմնավորվում է կալանքի տակ պահելու ժամկետի երկարաձգումը, դատավորները հաճախ երկարաձգել են կալանքն առերևույթ անհասկանալի հիմքերով: Պաշտոնական տվյալներով տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում գտնվող շուրջ 3728 բանտարկյալների շարքում 422-ը նախնական կալանքի տակ գտնվողներ էին, իսկ 305-ն այն անձինք են, որոնց դատավարությունն ընթացքի մեջ էր:

2008 թ. հուլիսին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց իր դիտարկումները մարդկանց կալանքի տակ վերցնելու ու նախնական կալանքը

երկարաձգելու կառավարության գործողությունների վերաբերյալ՝ կապված մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ ձեռքակալված անձանց հետ: Մարդու իրավունքների պաշտպանը գտնում էր, որ պատկան մարմինները ենթադրյալ հանցանքների մասին բավարար փաստարկներ չեն ներկայացրել դատարանին, և որ դատավորները չեն հիմնավորել, ինչպես պահանջում է օրենքը, իրենց եզրակացություններն այն մասին, որ կալանավորվածը կարող է փախուստի դիմել, և որ դատավորները կալանքից բացի խափանման միջոցի այլ տարբերակներ չեն դիտարկել, ինչպես օրինակ՝ ազատ արձակումը պարտավորության դիմաց:

Հունիսի 19-ին կառավարությունն ընդհանուր համաներում հայտարարեց, որի արդյունքում 329 հոգի վաղաժամկետ ազատ արձակվեցին, այդ թվում համաներում հայտարարելու օրվա դրությամբ բանտում գտնվող ընդդիմության մոտ 44 կողմնակիցներից 30-ը: Շատերն ազատ արձակվեցին հունիսին և հուլիսին՝ համաներում հայտարարելուց հետո, իսկ ընդդիմության ամենահայտնի կողմնակիցներն ազատ արձակվեցին դատավարություններն ավարտվելուց հետո: Համաներումը չէր տարածվում այն անձանց վրա, որոնց գործերով քննությունները դեռ շարունակվում էին, եթե նրանց ներկայացված մեղադրանքներով նախատեսվող պատժի չափի նկատմամբ համաներումը կիրառելի չէր, որոշակի հանցանքների մեջ մեղադրվող կամ այդ հանցանքների համարը դատապարտված անձինք կամ հինգ տարուց ավել ազատազրկման դատապարտված անձինք: Համաներում ստացած անձանցից հինգն իշխանամետ նվիրյալներ էին՝ որոնցից չորսը դատապարտվել էին մայիսի 31-ի Երևանի ավազանու ընտրություններում ընտրախախտումների համար, իսկ մեկը ՀՀԿ իշխանական կուսակցության անդամ էր, ով ընդունել էր, որ նախքան ընտրությունները կրակել և պատճառել էր իր կուսակիցներից մեկի մահը, բայց որի հանցանքը վերադարձվել էր ավելի մեղմ պատիժ նախատեսող հանցանքների՝ անզգուշությամբ մահվան պատճառում ու զենքի անօրինական կրում:

#### **ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում**

Օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ. այնուամենայնիվ դատարանները շարունակում են կանոնավոր կերպով ենթարկվել գործադիր իշխանության քաղաքական ճնշումներին, իսկ դատական կոռուպցիան եղել է լուրջ խնդիր:

Հունվարին «մասնագիտացված դատարանների» վերացումից հետո դատական համակարգը կազմված էր ընդհանուր իրավասության դատարաններից, վարչական դատարանից, քաղաքացիական և քրեական վերաքննիչ դատարաններից, վճռաբեկ դատարանից և սահմանադրական դատարանից: Գործն ըստ էության քննության առնելու համար վերաքննիչ դատարանը համարվում է ամենաբարձր աստիճանը: Վճռաբեկ դատարանն ունի վերաքննման հայեցողական իրավասություն՝ որպես գերագույն դատական աստիճան ոչ սահմանադրական հարցերի շուրջ: 2008թ. նոր դատական օրենսգրքով Վճռաբեկ դատարանին վերապահվում են նոր

դերակատարումներ, այդ թվում՝ օրենքի միօրինակ կիրառման ապահովում, օրենքի ճիշտ մեկնաբանում և օժանդակություն օրենսդրության մշակման հարցում:

Սահմանադրական դատարանը որոշում է օրենսդրության սահմանադրականությունը, կարծիք է հայտնում ստորագրված միջազգային համաձայնագրերի սահմանադրականության մասին նախքան Ազգային ժողովում դրանց վավերացումը, լուծում է ընտրությունների հետ կապված վեճերը:

Քաղաքացիներին օրենսդրությամբ իրավունք է ընձեռված բողոքներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և տարվա ընթացքում Սահմանադրական դատարան դիմել են 283 քաղաքացիներ:

Արդարադատության խորհուրդն առաջադրում է դատավորների թեկնածուներ, որոնց այնուհետև նշանակում է Նախագահը, որն էլ շարունակում էր խիստ ազդեցիկ դերակատարում ունենալ դատական համակարգի անձնակազմի նկատմամբ:

Արդարադատության խորհուրդը նաև առաջադրում է բոլոր երեք մակարդակների դատարանների ու դրանց պալատների նախագահների թեկնածուներն և կիրառում է կարգապահական տույժեր խախտումներ թույլ տված դատավորների նկատմամբ: Արդարադատության խորհրդի կազմում երկուական գիտնական նշանակվում են Նախագահի ու Ազգային ժողովի կողմից, իսկ մնացած ինն անդամներն ընտրվում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ:

2007թ. Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ քրեական գործերը նախադատավարական մարմինների կողմից լրացուցիչ քննության ետ ուղարկելը հակասահմանադրական է և ուժը կորցրած ճանաչեց Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները: Արդյունքում, դատավարությունը պետք է ավարտվի կամ արդարացմամբ, կամ մեղադրական վճռով՝ վերջ տալով «գործի լրացուցիչ քննության» պատրվակով մեղադրյալներին անորոշ ժամկետով անազատության մեջ պահելու գործելաոճին, այն դեպքերում, երբ ներկայացված գործերը թույլ են: Չնայած այս որոշմանը 2007թ. վերջին Ազգային ժողովն ընդունեց օրենսդրություն, որը թույլ է տալիս գործը վարող դատավորին կասեցնել դատաքննությունը և դիմել դատախազությանը՝ մեղադրական եզրակացությունը վերահաստատելու նոր ծանրացնող մեղադրանքներ ներառելու համար: Այս օրենսդրական իրավասությունն արդյունավետ կերպով խարխլում է անմեղության կանխավարկածը և այսպիսի դատավարություններում մեղադրող կողմը հայտնվում է նպաստավոր դիրքում:

2008թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռներ կայացրեց, որոնցով արձանագրվում է երկրի կողմից մարդու իրավունքի եվրոպական կոնվենցիայով սահմանված արդար դատաքննության իրավունքի չորս խախտման դեպք:

## ***Դատաքննություն***

Օրենքով հիմնականում պահանջվում է, որ դատական լուսմները լինեն դռնբաց, սակայն կան բացառություններ, ներառյալ, երբ լուսմների փակ լինելը բխում է «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից: Դատավարությունների ժամանակ չկան երդվյալ ատենակալներ: Առաջին ատյանի դատարանում դատավճիռ կայացնողը մեկ դատավոր է (բացի այն դեպքերից, երբ հանցանքի համար կարող է սահմանվել ցմահ բանտարկություն), իսկ ավելի բարձր ատյանի դատարաններում՝ դատավորների խորհուրդն է: Ամբաստանյալներն ընդհանրապես իրավունք ունեն և սովորաբար պահանջվում է, որ ներկա գտնվեն իրենց դատավարություններին: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ կառավարությունը պարտավոր է ամբաստանյալներին փաստաբան՝ հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Սակայն այս պարտավորությունը մարզերում՝ Երևանից դուրս, որտեղ չկան բավարար թվով փաստաբաններ, միշտ չէ որ հարգվել է: Ամբաստանյալները նաև որոշ դեպքերում հրաժարվում են հանրային պաշտպաններից՝ առաջնորդվելով այն ընկալմամբ, որ հանրային պաշտպանները գաղտնի համաձայնության են գալիս դատախազների հետ:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ. իրենք ու իրենց փաստաբանները կարող են ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը: Այնուհանդերձ գործնականում ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները կառավարության վկաներին, մասնավորապես՝ ոստիկաններին առարկություններ ներկայացնելու շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել: Օրենքի համաձայն ոստիկաններին արգելվում է ցուցմունք տալ դատարանում, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Այսպիսով, հանցանքի վայրում հայտնաբերված իրեղեն ապացույցների մասին ոստիկանության պաշտոնական հաշվետվությունները կամ ամբաստանյալի խոստովանությունը ընդունվել են որպես ապացույց՝ առանց դատարանում դրանց վերաբերյալ ոստիկանական ցուցմունքների: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբաններն այս պաշտոնական հաշվետվությունները վիճարկելու իրավասություն համարյա չունեն և դրանք հիմնականում դատարանների կողմից ընդունվում են որպես անառարկելի:

Մեղադրյալները, մեղադրական և տուժող կողմերն իրավունք ունեն բողոքարկելու դատավճիռները: Դատավորները սովորաբար չեն մերժում գործին նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու ամբաստանյալների դիմումները: Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն գործնականում այս իրավունքը հաճախ խախտվել է:

Ըստ դատական վիճակագրության տարվա ընթացքում կայացված 2407 դատավճիռներից միայն յոթն են եղել արդարացման դատավճիռ և արդարացումները կազմել են մոտավորապես 0.3 տոկոս:

Շարունակվել են հաղորդումներն առ այն, որ դատախազներն ու ոստիկանները օգտագործել են խոստովանություններ, որոնք ձեռք են բերվել այնպիսի մեթոդներով, որոնք որոշ ՀԿ-ներ բնորոշում են որպես խոշտանգումներ և անմարդկային վերաբերմունք: Դատապաշտպանները կարող են խոշտանգումների մասին ապացույցներ ներկայացնել, որպեսզի օրենքի խախտումներով ձեռք բերված խոստովանությունները չօգտագործվեն, սակայն ամբաստանյալները, նրանց փաստաբաններն ու հասարակական կազմակերպությունները հաճախ հայտնել են, որ դատավորները և դատախազները մերժել են ընդունել այդպիսի ապացույցներ դատավարության ընթացքում, նույնիսկ երբ մեղավորները հայտնի են եղել:

Բոլոր մակարդակի դատարաններում պատշաճ ուշադրություն չի դարձվել մեղադրյալների կամ վկաների հայտարարություններին, որ քննության ընթացքում իրենց ենթարկել են խոշտանգումների: Դատավորները հաճախ չեն արձագանքում այդ հայտարարություններին, համարելով դրանք ոչ արժանահավատ կամ ուղղակիորեն հերքում են այդ հայտարարությունները և կայացնում են մեղադրական դատավճիռներ այն գործերով, որտեղ վկաները հնչեցրել են պնդումներ խոշտանգումների մասին:

Դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը՝ սերտորեն համագործակցելով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ, հրապարակեց դատարանների կողմից Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջների իրականացման վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները: Ուսումնասիրությամբ եզրակացվում էր, որ հաճախ, երբ եղել են դատավարության կողմին խոշտանգումների ենթարկելու վերաբերյալ օբյեկտիվ հիմքեր, դատարանները հարցը քննարկման չեն դրել: Հազվադեպ դեպքերում, երբ պաշտոնապես ընդունվել է, որ ապացույցները ձեռք են բերվել խոշտանգման գործողության արդյունքում, այնուամենայնիվ ապացույցն ընդունվել է:

Հունվարի 19-ին Երևանի դատարանը 18-ամյա զինվոր Կարեն Հայրապետյանին սուտ վկայության համար մեկ տարվա ազատազրկման դատապարտեց, երբ նա հրաժարվեց 2008 հունիսին պատգամավոր Մյասնիկ Մալխասյանի և նրա վարորդ Արման Շահինյանի դեմ տված մեղադրական ցուցմունքից: Մալխասյանն ու Շահինյանը ձերբակալվել էին 2008թ. մարտի հետընտրական բռնություններից հետո: Հայրապետյանի սկզբնական ցուցմունքի հիման վրա Շահինյանը դատապարտվել էր 18 ամսվա ազատազրկման բախումների ժամանակ ոստիկանի վրա հարձակում գործելու համար: Դատավճիռը հիմնականում հիմնվում էր դատավարությունից առաջ Հայրապետյանի գրավոր ցուցմունքի վրա, որի հետ կապված նա հետագայում հայտնեց, որ ոստիկանությունը խորամանկությամբ էր այդ ցուցմունքը նրան ստորագրել տվել՝ 2008թ. հունիսին բանակ զորակոչվելուց կարճ ժամանակ առաջ:

Հայրապետյանի պնդումները դատարանն անտեսեց ու Շահինյանին մեղավոր ճանաչեց այդ գրավոր ցուցմունքի հիման վրա: 2008թ. հոկտեմբերին սուտ վկայության համար Հայրապետյանի հանդեպ սկսվեց քրեական հետապնդում. Հայրապետյանն ի պատասխան վիճարկեց պատկան մարմինների կողմից իր կեղծ ցուցմունքի օգտագործումը՝ նշելով, որ ինքը չէր կարող հետընտրական բռնությունների ականատեսը լինել, քանի որ նշված միջադեպի օրը Երևանում չի եղել. նրա 20 համագյուղացիներ հաստատում էին այս պնդումը:

Ըստ տեղական իրավական և մարդու իրավունքների դիտորդների՝ դատարանները պաշտպանող և մեղադրող կողմերի համար հավասար իրավունքներ չեն ապահովել: Որպես փաստ վկայակոչվել են դատարանի կողմից պաշտպանող կողմի միջնորդությունների շարունակական մերժումները, քրեական դատարանում դատավարության գրառումների անօրինական խմբագրումը, դատավարությունները լուսաբանող լրագրողների աշխատանքներին խոչընդոտելը և մեղադրող կողմի հանդեպ ընդհանուր բարեհաճ վերաբերմունքը: Դիվանագիտական դիտորդներն ականատես են եղել բազմաթիվ դեպքերի, երբ դատավճիռը կայացվել է ոստիկանության խիստ կասկածելի ապացույցների և ցուցմունքների հիման վրա, որոնք բաց դատարանում համոզիչ կերպով հերքվել են վստահելի վկաների կողմից: Ըստ դատական դիտորդների քրեական գործերով անցնող վկաները հաճախ հրաժարվում են ոստիկանությունում իրենց տված նախնական բացատրություններից կամ վախենալով մեղադրյալների հաշվեհարդարից, կամ էլ այն պատճառով, որ նախնական բացատրությունները տրվել են ոստիկանական ճնշման ներքո: Քանի որ սա տարածված երևույթ էր, դատարաններն ամբաստանյալին մեղավոր ճանաչելու համար սովորաբար հիմնվում էին վկաների տված նախնական բացատրությունների վրա:

Տարվա ընթացքում բազմաթիվ փաստաբաններ դժգոհում էին, որ քրեական գործերով դատավարությունները ձևական բնույթ են կրում և դատավորները նախքան դատը սկսվելն արդեն կայացրած են լինում դատավճիռը: Դատապաշտպանները պնդում էին, որ սա իրենց դժվարին կացության մեջ է դնում, երբ իրենք ներկա են գտնվում դատին, սակայն չեն կարող պաշտպանել իրենց պաշտպանյալին: Որպես բողոքի նշան որոշ դատապաշտպաններ դուրս են եկել դատարանի դահլիճից՝ ցույց տալու, որ դատավարությունը կարող է շարունակվել առանց իրենց: Տարեվերջի դրությամբ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու ու լուսմներից դուրս գալու համար քրեական գործեր կային փաստաբաններ Արթուր Գրիգորյանի, Դիանա Գրիգորյանի, Արա Զաքարյանի և Մուշեղ Շուշանյանի դեմ: Այս չորս փաստաբաններն ակտիվ էին 2008թ.վիճահարույց ընտրությունների ու հաջորդած մարտյան իրադարձությունների առնչությամբ կալանավորված անձանց պաշտպանության հարցում: Ըստ հաղորդումների դատական մի պաշտոնյա առաջարկել է առանց պաշտոնական արդարացման փակել գործերը, որ հարուցվել էին սեպտեմբերի 3-ին, բայց փաստաբաններն առաջարկից հրաժարվել են:



Ի պատասխան այս կարգի գործերի՝ Մարդու իրավունքների պաշտպանը հունիսին արձագանքեց Փաստաբանների պալատի ինդրանքին դիմելով Սահմանադրական դատարան՝ հակասահմանադրական ճանաչելու դատարանի նկատմամբ անհարգալի վերաբերմունքի մասին հողվածը, քանզի այն վերաբերում է միայն վկաներին, տուժողներին ու դատապաշտպաններին և չի վերաբերում մեղադրող կողմին: Որոշ տեղական դատական դիտորդներ փաստաբանների նկատմամբ քննությունը մեկնաբանեցին որպես պատժող գործողություն ու օրինակ՝ ուղղված եռանդագին փաստաբանների վերահսկմանը: 2008թ. նոյեմբերին, արձագանքելով քրեական հետապնդումներին, մոտ 20 փաստաբաններ հրապարակավ պաշտպանեցին իրենց գործընկերներին և հրաժարվեցին քրեական ու քաղաքացիական իրավական ծառայություններ մատուցել դատավորներին, դատախազներին, քննիչներին կամ նրանց ընտանիքի անդամներին: Տարեվերջի դրությամբ քրեական հետապնդումը չորս փաստաբանների նկատմամբ դեռ ընթացքի մեջ էր, իսկ Սահմանադրական դատարանը դեռ պետք է որոշում կայացներ հողվածի սահմանադրականությանը վերաբերյալ:

Գործնականում դատարան ուղարկված քրեական գործերի ճնշող մեծամասնությունն ավարտվում են դատապարտումներով: Դիտորդները հայտնում էին, որ դա այդպես է, քանի որ շատ դատավորներ գտնում են, որ իրենց գործը մեղադրող կողմի հետ աշխատելն է ու մեղադրական վճիռ կայացնելը: Ավելին, շատ դատավորներ վախենում էին հաշվեհարդարից, եթե արդարացման դատավճիռ կայացնեին իշխանությունների համար կարևոր զգայուն գործով: Չնայած այն հանգամանքին, որ թույլ գործերից շատերն ավարտվում են դատապարտմամբ, սակայն դատապարտումների բարձր ցուցանիշը նաև կարող է վերագրվել այն փաստին, որ ոստիկանության քննիչները գտնում են թույլ գործերն ու դրանք չեն ուղարկում դատարան:

Դեկտեմբերի 25-ին Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրեց արտահերթ հրապարակային զեկույց Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության իրավունքի ապահովման վերաբերյալ, որտեղ գնահատվում էր արդարադատության իրագործումը երկրում: Ձեկույցը եզրակացնում էր, որ արդար դատաքննության իրավունքի խախտումները համակարգային են ու բխում են այն փաստից, որ դատարանները շարունակում են լինել քրեական հետապնդման մարմնի ազդեցության ներքո և հարում են դրան պետության կողմից մեղադրանք առաջադրված գործերում: Մարդու իրավունքների պաշտպանը նշում էր, որ արդար դատաքննության իրավունքի խախտումները նենգափոխում են դատարանի՝ իբրև արդարության անաչառ մարմնավորողի դերը՝ պահելով արդարադատության իրագործման հանդեպ հասարակության վստահությունը շատ ցածր մակարդակում:

## **Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ**

2008թ. մարտին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ու բռնությունների ժամանակաշրջանում ձերբակալված հարյուրավոր մարդկանցից մոտ 150-ին պահել են բավականին երկար, իսկ ավելի քան 100-ին հանցագործության մեղադրանք է ներկայացվել: Այդ ձերբակալությունների մեծ մասը կամ բոլորն առերևույթ կրել են տարբեր աստիճանի քաղաքական ազդեցություն: Ոմանք մեղադրվել են լայն սահմանում ունեցող քրեական մեղադրանքների հատկանիշներով՝ «պետական իշխանության յուրացում» կամ «զանգվածային անկարգություններ»: Մյուսները մեղադրվել են ընտրովի կերպով կիրառված զենք պահելու մեղադրանքով կամ ձերբակալման ժամանակ ցուցաբերած դիմադրության համար: Իշխանությունները շարունակում էին ժխտել երկրում քաղաքականության առկայությունը և հայտարարում, որ քաղաքական ընդդիմությունը պալանավորել էր հետընտրական բռնարարքները՝ փորձելով արտասահմանադրականորեն զավթել իշխանությունը:

Տարեվերջի դրությամբ 2008թ. նախագահական ընտրությունների ու հետընտրական իրադարձությունների հետ կապված դեռևս անազատության մեջ էին մնում շուրջ 13 հոգի, ովքեր կամ սպասում էին դատավարությանը, կամ կրում ազատագրվման պատիժը՝ դատապարտումից հետո: Այս բանտարկյալների մեծ մասը քաղաքական ընդդիմության անդամներ կամ կողմնակիցներ էին, ովքեր վիճարկել էին 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների արդյունքները և/կամ մասնակցել հետընտրական ցույցերին: Ընդդիմադիր ՀԱԿ-ը պնդում էր, որ ի հավելումն այս անձանց կա նաև 14-րդը, ով ձերբակալվել ու դատապարտվել է քաղաքական շարժառիթներ ունեցող պատճառներով, որոնք բխում են հետընտրական բողոքի ակցիաներում նրա մասնակցությունից:

Ըստ քաղաքական ընդդիմության տարեվերջի դրությամբ անազատության մեջ էին գտնվում մոտ 15 մարդ, որոնց ընդդիմությունը համարում էր «քաղաքական բանտարկյալներ», այդ թվում՝ 14 հոգի, ովքեր կալանավորվել էին 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների ու հետընտրական իրադարձությունների կապակցությամբ, իսկ մնացած մեկ հոգին՝ կրում էր նախկինում սահմանված պատիժ:

Հունվարի 27-ին ԵԽԽՎ-ն բանաձև ընդունեց, որով քննադատում էր իշխանություններին 2008թ. մարտի իրադարձությունների հետ կապված կալանավորված ընդդիմության կողմնակիցների ազատ արձակման վերաբերյալ 2008թ. իրենց պահանջների մասով սահմանափակ առաջընթացի համար: ԵԽԽՎ-ը քննադատեց ընդդիմության կողմնակիցների ձերբակալումն ու շարունակվող կալանքը «թվացյալ արհեստական և քաղաքական շարժառիթներով պայմանավորված մեղադրանքների հիման վրա» և կոչ էր անում ազատ արձակել բոլոր այն անձանց, ովքեր անձամբ չեն կատարել որևէ բռնի գործողություն կամ ծանր հանցանքներ: ԵԽԽՎ բանաձևում նաև ասվում էր, որ «քրեական հետապնդման կամ դատապարտման դեպքերի զգալի մասը հիմնվել են բացառապես ոստիկանների

տված ցուցմունքների վրա՝ առանց էական հիմնավորող ապացույցների: Դատավարությունների մեծ մասում գործով միակ վկաները կամ ենթադրյալ զոհերը ոստիկաններ էին, որոնց ցուցմունքները հաճախ հակասական էին: Որոշ դեպքերում միևնույն ոստիկանները ներգրավված են եղել որպես վկաներ մի քանի տարբեր գործերում ընդդիմության տարբեր կողմնակիցների դեմ»: ԵՄԽՎ Բանաձևում նաև նշվում էր, որ իշխանությունները չեն «օգտագործել հասանելի բոլոր իրավական միջոցները, ինչպիսիք են համաներումը, ներումը կամ մեղադրանքների կարճումը»՝ ազատ արձակելու 2008թ. մարտի իրադարձությունների առնչությամբ կալանավորված այն անձանց, ովքեր բռնարարքներ թույլ չեն տվել:

Հունիսի 24-ին ԵՄԽՎ-ն մեկ այլ բանաձև ընդունեց, որով ողջունեց քրեական օրենսգրքի երկու հոդվածներում կատարված փոփոխությունները և դրանց ազդեցությունն այդ պահին դատավարության փուլում գտնվող 2008թ. մարտի իրադարձությունների առնչությամբ կալանավորված անձանց գործերի վրա. Այնուհանդերձ ԵՄԽՎ-ն քննադատեց իշխանություններին այն բանի համար, որ փոփոխություններ չկիրառվեցին «այն անձանց գործերի հետ կապված, ովքեր մեղադրվել ու դատապարտվել էին բացառապես ոստիկանների տված ցուցմունքների հիման վրա՝ առանց էական հիմնավորող ապացույցների»: ԵՄԽՎ-ն նաև անդրադարձ կատարեց ընդհանուր համաներում հայտարարելու մասին նախագահ Սարգսյանի հունիսի 16-ի առաջարկին, որն ընդունվեց Ազգային ժողովի կողմից հունիսի 19-ին, և որի համաձայն վաղաժամկետ ազատ էին արձակվում 2008թ. մարտի իրադարձությունների առնչությամբ կալանավորված այն անձինք, ովքեր չէին մեղադրվում բռնարարքների մեջ կամ դատապարտվել էին ազատազրկման հինգ տարին չգերազանցող ժամկետով:

Հունիսի 19-ի ընդհանուր համաներման արդյունքում վաղաժամկետ ազատ արձակվեցին համաներում հայտարարելու օրվա դրությամբ բանտում գտնվող ընդդիմության մոտ 44 կողմնակիցներից 30-ը: Շատերն ազատ արձակվեցին հունիսին և հուլիսին՝ համաներում հայտարարելուց հետո, իսկ ընդդիմության ամենահայտնի կողմնակիցներն ազատ արձակվեցին դատավարություններն ավարտվելուց հետո: Տարեվերջի դրությամբ ընդդիմության 13 կողմնակիցներ դեռևս մնում էին կալանքի տակ կամ բանտում, քանի որ տեխնիկապես նրանց նկատմամբ համաներումը կիրառելի չէր, այն պատճառով, որ նրանց գործերով քննությունները դեռ շարունակվում էին և նրանց ներկայացված մեղադրանքներով նախատեսված պատժաչափերը հնարավոր է ենթական չլինեին համաներման կիրառմանը, կամ այն պատճառով, որ նրանք մեղադրվում էին կամ դատապարտվել էին որոշակի հանցանքների համար, կամ այն պատճառով, որ նրանք դատապարտված էին ազատազրկման հինգ տարուց ավել ժամկետով: Համաներման արդյունքում ազատ արձակված 329 անձանց շարքում ընդդիմության կողմնակիցները փոքր մաս էին կազմում:

Մարտի 23-ին աշխատանքից ազատված Գլխավոր դատախազի տեղակալ Գագիկ Ջհանգիրյանը, ով հրապարակավ հայտարարել էր, որ 2008թ. փետրվարի նախագահական ընտրություններում պաշտպանում է ընդդիմադիր թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանին, դատապարտվեց երեք տարվա ազատազրկման ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու համար: Հետագայում, հունիսի 23-ին նա ազատ արձակվեց՝ հունիսի 19-ի ընդհանուր համաներման շրջանակում: Ջհանգիրյանն իր դատավճիռը բողոքարկեց այն հիմքով, որ դա հակաօրինական է և իրեղեն ապացույցներով չի հիմնավորվում, սակայն վերաքննիչ դատարանը մայիսի 20-ին անփոփոխ թողեց դատավճիռը: Ջհանգիրյանը նախագահական ընտրություններից կարճ ժամանակ անց ազատվել էր զբաղեցրած պաշտոնից այն ժամանակվա նախագահ Քոչարյանի կողմից, ապա մեքենայով գնալիս կանգնեցրել և ձերբակալել էին նրան ու իր եղբորը: Ջհանգիրյանը դատապարտվեց ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու համար նույնիսկ այն պարագայում, երբ փետրվարին դատարանում ոստիկանական ավագ աշխատակիցն ընդունեց, որ ձերբակալության ժամանակ Ջհանգիրյանը դիմադրություն ցույց չի տվել:

Ազգային ժողովի կողմից քրեական օրենսգրքի փոփոխությունները մարտի 18-ին գործողության մեջ դնելուց հետո ապրիլի 1-ին դատախազները ընդդիմության յոթ հայտնի կողմնակիցներին ներկայացվող իշխանության բռնազավթման, այսինքն՝ հեղաշրջման մեղադրանքները վերացրեցին: Դատախազները թողեցին ավելի թեթև մեղադրանքներ՝ զանգվածային անկարգությունների հրահրում, զանգվածային անկարգությունների կազմակերպման նախնական մեղադրանքի հետ կար ծանրացուցիչ հանգամանք՝ «սպանություններով զուգորդված», որը փոփոխություններից հետո հանվեց: Այս ծանրացուցիչ հանգամանքը վերացնելուց հետո ընդդիմության յոթ կողմնակիցների գործերով իշխանություններն արդյունավետ կերպով չեղյալ համարեցին իրենց սկզբնական պնդումը, որ 2008թ. մարտյան բախումների ժամանակ զոհված տասն անձանց մահվան պատասխանատուներն այդ յոթն էին. մի պնդում, որը հիմնավորող ապացույցներ ձեռք չէին բերվել: Ընդդիմության յոթ կողմնակիցների թվում էին նախկին արտգործնախարար, 2008թ. նախագահական ընտրություններում Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի ղեկավար Ալեքսանդր Արզումանյանը, պատգամավոր Հակոբ Հակոբյանը, ընդդիմության անդամներ Գրիգոր Ոսկերչյանը, Մուրեն Միրունյանն ու Շանթ Հարությունյանը, որոնցից բոլորին սկզբնապես մեղադրանք էր ներկայացվել սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների հրահրման ու արտասահմանադրական կարգով իշխանությունը բռնազավթելու մեջ: Այս մեղադրանքներից բացի մյուս երկու մեղադրյալները՝ պատգամավորներ Մյասնիկ Մալխասյանն ու Սասուն Միքայելյանը նաև մեղադրվում էին իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալուն մասնակցելու (Մալխասյանի հետ կապված) և անօրինական զենք ու զինամթերք պահելու (Միքայելյանի հետ կապված) մեջ:

2008թ. ապրիլին ձերբակալվելուց մոտ 13 ամիս անց մայիսի 13-ին ազատ արձակվեց Շանթ Հարությունյանը, երբ դատարանը գտավ, որ հետընտրական բախումների ժամանակ նա անմեղսունակ էր: Դատարանը վերացրեց մեղադրող կողմի ներկայացրած բոլոր երկու մեղադրանքները՝ սպանություններով զուգորդված զանգվածային անկարգությունների կազմակերպում և արտասահմանադրականորեն իշխանությունը բռնազավթելու փորձ: Դատավճիռն ընդունվեց դատարանի կողմից հրահանգված բժշկական ու հոգեբանական զննումից հետո: Ազատ արձակվելուց հետո Հարությունյանը բողոքել էր լրատվամիջոցներին, որ իր հոգեկան վիճակի ենթադրյալ խնդիրը հորինվել է իշխանությունների կողմից, որպեսզի թույլ չտան իրեն բաց դատարանում ելույթ ունենալ, ինչը նրա պնդմամբ իշխանություններին կղներ անհարմար դրություն մեջ:

Հունիսի 22-ին յոթից չորսը՝ Ալեքսանդր Արզումանյանը, Սուրեն Սիրունյանը, Հակոբ Հակոբյանը և Մյասնիկ Մալխասյանը, ազատվեցին դատաքննության ավարտից հետո՝ դատապարտվելով այնպիսի պատժի, որը նրանց նկատմամբ կիրառելի էր դարձնում համաներման շրջանակում վաղաժամկետ ազատումը: Բոլորը դատապարտվել էին հինգ տարվա ազատազրկման, բացի Սիրունյանից, ում ազատազրկման ժամկետը չորս տարի էր: Մյուս պատգամավոր Սասուն Միքայելյանն անօրինական զենք պահելու և զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար դատապարտվեց ութը տարվա ազատազրկման, ինչը նշանակում էր, որ նրա նկատմամբ համաներումը չէր կիրառվում: «Յոթի գործով» վերջին հայտնի ընդդիմության կողմնակից Գրիգոր Ոսկերյանն ազատ արձակվեց հուլիսի 10-ին, երբ դատապարտվեց երկու տարվա ազատազրկման ու նրա նկատմամբ կիրառվեց համաներում: Այս յոթ անձանցից մեծ մասը բանտում անցկացրեց շուրջ 16 ամիս:

Դեկտեմբերի 11-ին Երևանի դատարանն ընդդիմության կողմնակից ու Մատենադարանի նախկին փոխտնօրեն Արշակ Բանուչյանին փողերի յուրացման ու հարկերից խուսափելու համար դատապարտեց երեք տարվա ազատազրկման: Բանուչյանը չընդունեց դատավճիռը, ժխտեց վերագրվող հանցանքները և դատապարտեց իր դեմ հարուցված գործը՝ որպես քաղաքական շարժառիթներով հաշվեհարդար ընդդիմադիր ՀԱԿ-ին սատարելու համար: Այնուամենայնիվ, հունիսի 19-ի համաներումը կիրառելի էր նաև Բանուչյանի նկատմամբ: Բանուչյանը ձերբակալվել էր 2008թ. մարտի հետընտրական իրադարձությունների առնչությամբ և ինչպես և ընդդիմության մյուս կողմնակիցները սկզբնապես մեղադրվում էր զանգվածային անկարգություններ հրահրելու ու դրանց մասնակցելու մեջ:

Ըստ պաշտոնական տեղեկությունների դեկտեմբերի 30-ի դրությամբ 2008թ. մարտի իրադարձությունների կապակցությամբ 117 հոգու դեմ հարուցված 94 գործ ուղարկվել էր դատարան: Դատարանները գործերով դատավճիռ են կայացրել 116 հոգու դեմ: Դատապարտված 116 հոգուց 38-ին պայմանական պատիժ է նշանակվել, 5-ին՝ տուգանք, 65-ին՝ վեց ամսից ինը տարի ազատազրկում, 6-ն արդարացվել են, 1 գործ

գործ կարճվել է մեղադրյալի հետ համաձայնության գալու հիմքով, իսկ մեկ գործ կարճվել է, երբ դատարանը պարզել է, որ ենթադրյալ հանցանքի պահին ամբաստանյալը եղել է անմեղսունակ: Ըստ պաշտոնական տեղեկությունների 116 դատապարտվածներից 28-ին ներում է շնորհվել: Հունիս 19-ին, երբ համաներում հայտարարվեց, 2008թ. մարտի իրադարձությունների հետ կապված անազատության մեջ էին գտնվում 28 հոգի, որոնցից 19-ն ազատ արձակվեցին: Ըստ ընդդիմադիր ՀԱԿ-ի հունիսի 19-ի դրությամբ 2008թ. մարտի իրադարձություններին առնչվող մեղադրանքներով ու դատապարտումներով կալանավորված կամ բանտարկված էին ընդդիմության 24 կողմնակիցներ, որոնցից 16-ը համաներման արդյունքում ազատ արձակվեցին: Բացի այդ, ՀԱԿ-ը հայտարարեց, որ հունիսի 19-ի դրությամբ 2008թ. նախագահական ընտրաբաշարի ու բուն ընտրությունների հետ կապված մեղադրանքներով ու դատապարտումներով կալանավորված ու բանտարկված էին ընդդիմության 20 կողմնակիցներ, որոնցից 14-ը համաներման արդյունքում ազատ արձակվեցին:

Տարեվերջի դրությամբ դեռ մեղադրանքներ կային առաջատար ընդդիմադիր թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի և հայտնի գործարար ու պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի դեմ: Երկուսն էլ մեղադրվում էին 2008թ. մարտի հետընտրական զանգվածային անկարգությունների կազմակերպման մեջ, իսկ Փաշինյանը նաև մեղադրվում էր իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալու մեջ 2007թ.-ին՝ Լևոն Տեր-Պետրոսյանի առաջիկա նախագահական քարոզարշավի մասին իրազեկելիս ոստիկանության հետ ենթադրյալ վիճաբանության ժամանակ:

2008թ. մարտին ոստիկանությունը հարկերից խուսափելու մեղադրանքով ձերբակալեց գործարար և պատգամավոր, 2008թ. նախագահական ընտրություններում Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը պաշտպանող Խաչատուր Սուքիասյանի սեփականություն հանդիսացող ռեստորանի մատուցողուհի Անուշ Ղավալյանին: Ղավալյանը և նրա կողմնակիցները պնդում էին, որ ձերբակալությունը միտված էր նրա նկատմամբ ճնշում գործադրելուն, որպեսզի նա ցուցմունք տա ռեստորանի տնօրեն Գևորգ Սաֆարյանի դեմ, ով կալանավորվել էր 2007թ. Սուքիասյանների ընտանեկան բիզնեսի դեմ ուղղված գործողությունների շրջանակում, որն անմիջապես հաջորդեց Սուքիասյանի կողմից նախագահական ընտրություններում Տեր-Պետրոսյանին թեկնածությունը հրապարակավ պաշտպանելուն:

Ապրիլի 7-ին Սաֆարյանը դատապարտվեց հարկերից ու պարտադիր վճարումներից խուսափելու համար, իսկ Ղավալյանը՝ քրեական հանցակցության համար: Նրանք պայմանականորեն ազատազրկվեցին համապատասխանաբար երեք տարով և չորս տարով, իսկ հունիսի 19-ի համաներման արդյունքում ազատ արձակվեցին: Դատավարության ժամանակ պաշտպանող կողմի առաջին փաստաբանների նկատմամբ քրեական հետաքննություն սկսվեց՝ նրանց պահվածքի պատճառով. երեք

փաստաբանները՝ Արա Զաքարյանը, Արթուր Գրիգորյանը և Դիանա Գրիգորյանը որպես բողոքի նշան հրաժարվեցին դատին մասնակցելուց, երբ հայտնաբերեցին, որ նիստը նախագահող դատավորի կողմից ենթադրաբար կեղծվել էր մի կարևոր դատական փաստաթուղթ: Փաստաբաններն անհաջող փորձեր արեցին սկսել դատավորի գործողությունների հետ կապված հետաքննություն: Դատավորը մերժեց պաշտպանության բոլոր միջնորդությունները՝ փաստաթղթի ճշգրտությունը ստուգելու վերաբերյալ և ի նշան բողոքի փաստաբանները լքեցին դատարանի դահլիճը: Ավելի ուշ, հուլիսի վերջին երեք փաստաբաններին մեղադրանք ներկայացվեց «դատարանի նկատմամբ անհարգալի վերաբերմունք» ցուցաբերելու համար, որի համար կարող է նշանակվել մեկ ամսվա կալանք և փաստաբանական գործունեության լիցենզիայից զրկում: Ոստիկանությունը քննության առավ փաստաբանների պահվածքը, բայց չհետաքննեց դատավորի գործողությունները: Փաստաբանների դեմ պաշտոնական դատական լսումները սկսվեցին սեպտեմբերի 3-ին և տարեվերջի դրությամբ դեռ շարունակվում էին: Երեք փաստաբանների հեռանալուց հետո Սաֆարյանին ու Ղավալյանին դատարանում ներկայացնում էին փոխարինող փաստաբաններ:

Տարվա ընթացքում իշխանությունները փորձ են արել առգրավել ու վաճառել ընդդիմության կողմնակից և պատգամավոր Խաչատուր Սուքիասյանին պատկանող ընկերություններից մեկը: 2008թ.-ի վերջում իշխանություններն արգելանք դրեցին նրան պատկանող «Բջնի» հանքային ջրերի գործարանի ակտիվների վրա՝ 4.5 միլիարդ ՀՀ դրամ (14 միլիոն ԱՄՆ դոլար) տույժը գանձելու նպատակով, որն հաշվարկվել էր իբր հարկային կեղծումների և պետությանը պատկանող ջրային ռեսուրսների յուրացման համար. տեղական դիտորդներն այս գերբարձր տույժը համարում էին Սուքիասյանի պատիժը 2008թ. նախագահական ընտրություններում Լևոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը պաշտպանելու համար: Իշխանությունները 2008թ. դեկտեմբերին ընկերության ակտիվներն աճուրդի հանեցին, բայց չկարողացան գտնել գնորդ: Այնուհետև կրկին աճուրդ անցկացրեցին փետրվարի 5-ին և գտան գնորդ՝ ի դեմս կառավարամետ պատգամավոր և գործարար Ռուբեն Հայրապետյանի: Մարտի 19-ին վարչական դատարանը «Բջնի» գործարանի աճուրդը չեղյալ համարեց՝ որոշում կայացնելով, որ նախքան ակտիվներն աճուրդի հանելը ընկերությունը պետք է անցնի սնանկացման գործընթաց: Ընկերությունն ի վերջո վաճառվեց դեկտեմբերի 24-ին և գնորդը կրկին Ռուբեն Հայրապետյանն էր, ով վճարեց 4.3 միլիարդ ՀՀ դրամ (մոտ 11.4 միլիոն դոլար): Տարվա ընթացքում Սուքիասյանի ներկայացուցիչները շարունակում էին պնդել, որ հիմնական տուգանքները հիմնավորված չէին և հանդիսանում էին խիստ հաշվեհարդար ընդդեմ Սուքիասյանի՝ 2008թ. Լևոն Տեր-Պետրոսյանին պաշտպանելու համար:

Փախուստի մեջ 17 ամիս լինելուց հետո Սուքիասյանը սեպտեմբերի 1-ին հանձնվեց իշխանություններին և անմիջապես կալանքի տակ վերցվեց: Սեպտեմբերի 4-ին կալանքից ազատ արձակվեց, իսկ նրան ներկայացված քրեական մեղադրանքներով քննությունը, որոնք նա համարում էր քաղաքական շարժառիթներով դրդված, դեռ

շարունակվում էր: Ինչպես և մյուս պատգամավորների դեպքում Սուքիասյանին նույնպես սկզբում մեղադրանք էր ներկայացվել սպանություններով զուգորդված զանգվածային անկարգության կազմակերպման և արտասահմանադրականորեն իշխանությունը զավթելու փորձի մեջ. այնուամենայնիվ ապրիլին նրա դեմ մեղադրանքը նույնպես փոփոխվեց՝ առանց որևէ ծանրացնող հանգամանքների զանգվածային անկարգություն հրահրելու մեղադրանքի: Սեպտեմբերի 7-ին նա հրաժարվեց Ազգային ժողովի պատգամավորությունից՝ որպես բողոք պատգամավորական անձեռնմխելիությունից իրեն և նախագահական ընտրություններում Լևոն Տեր-Պետրոսյանին պաշտպանած մյուս երեք պատգամավորներին զրկելու համար: Տարեվերջի դրությամբ Սուքիասյանի գործով քննությունը Հատուկ քննչական ծառայությունում դեռ շարունակվում էր, իսկ Սուքիասյանը գտնվում էր ազատության մեջ:

Օգոստոսի 4-ին «Ժամանակ Երևան» ընդդիմադիր օրաթերթի խմբագիր Արման Բարաջանյանը, որ ձերբակալվել էր 2006թ. փաստաթղթերի կեղծման ու զինվորական ծառայությունից խուսափելու մեղադրանքով, ազատ արձակվեց բանտից: Ժամանակին տեղական դիտորդները նրան նշանակված պատիժը համարում էին չափից դուրս ծանր այդ կարգի հանցանքի համար և դա դիտարկում էին որպես պետությանը քննադատողների նկատմամբ ընտրովի քրեական հետապնդում իրականացնելու օրինակ:

### ***Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ***

Քաղաքացիները կարող են դիմել դատարաններ մարդու իրավունքների ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով: Սակայն դատարանները լայնորեն ընկալվում են որպես կոռումպացված կառույց ու քաղաքացիական գործերի հնարավոր հայցվորները հաճախ հայց հարուցելուց առաջ քննության էին առնում այն հանգամանքը, թե ով ունի ավելի շատ ռեսուրսներ դատավորների վրա ներագդելու համար՝ իրենք, թե պատասխանողը: Քաղաքացիները կարող են նաև դիմումներ ու բողոքները ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ինչպես նաև դիմել Սահմանադրական դատարան՝ վիճարկելու օրենսդրության սահմանադրականությունը:

Տարվա ընթացքում առաջընթաց չի եղել Երևանում հասարակական շահից ելնելով գույքի օտարման գործերի հետ կապված, չնայած 2006թ. Սահմանադրական դատարանը որոշում էր կայացրել, որ կառավարության 2002թ. որոշումը, որով քանդվել էին տները, հակասում էր Սահմանադրությանը: Հունիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ կայացրեց Մինասյանն ու Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ որոշելով, որ գույքի օտարման ժամանակ խախտվել են երկու քաղաքացիների սեփականության իրավունքները: Դատարանը սակայն փոխհատուցման մասին որոշում չէր ընդունել, տրամադրելով կողմերին երեք ամիս ժամանակ դատավճռի ընդունման պահից, մինչև սեպտեմբերի 23-ը, որպեսզի



կողմերը համաձայնության գան փոխհատուցման գումարի վերաբերյալ: Տարեվերջի դրությամբ փոխհատուցման չափի վերաբերյալ համաձայնություն ձեռք չէր բերվել:

**զ) Կամայական միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ**

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցման գաղտնիությունը, սակայն գործնականում իշխանությունները խախտել են այս իրավունքները:

Ըստ օրենքի հեռախոսային խոսակցությունները լսելու կամ նամակագրությանը հետևելու թույլտվություն ստանալու համար իշխանությունները պետք է հիմնավոր փաստարկներ ներկայացնեն դատավորին. տարվա ընթացքում դատավորները կամայականորեն այդպիսի թույլտվություն տվել են, ինչպես նաև տեղի են ունեցել խուզարկություններ առանց կարգադրագրերի ու սահմանված ընթացակարգերի պահպանման:

Ըստ քաղաքական ընդդիմության և տեղական մարդու իրավունքների դիտորդների ոստիկանության կողմից 2008թ. իրականացվել են լայնածավալ խուզարկություններ ընդդիմության կողմնակիցների, վստահված անձանց և նախընտրական շտաբի անդամների բնակարաններում ինչպես մինչև 2008թ.փետրվարի նախագահական ընտրությունները, այնպես էլ դրանից հետո: Ըստ հաղորդումների խուզարկություններն իրականացվել են ընթացակարգային խախտումներով, ահաբեկմամբ և սպառնալիքներով:

Առաջընթաց չկար ընդդիմադիր «Հանրապետություն» կուսակցության անդամ Արտակ Զեյնալյանի 2008թ. բողոքի հետ կապված, որով նա մեղադրանք էր հնչեցրել, որ ոստիկանության աշխատակիցները զանգահարել են Տեր-Պետրոսյանի աջակիցների, տարբեր ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների բջջային հեռախոսներին՝ հավաստիանալու, որ այդ համարները պատկանում են նրանց: Զեյնալյանը բողոք է ներկայացրել ոստիկանությանը վերոհիշյալ հեռախոսազանգերի ետևում կանգնած անձանց հայտնաբերելու և պատժելու համար, ինչպես նաև բողոքով դիմել է դատարան: Հուլիսի 7-ին Զեյնալյանը գործը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

***ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ***

**ա) Խոսքի և մամուլի ազատություն**

Սահմանադրությամբ ամրագրվում է խոսքի և մամուլի ազատությունը, սակայն գործնականում կառավարությունը միշտ չէ, որ հարգել է այս իրավունքները: Ողջ տարվա ընթացքում գրանցվել են բռնության, ահաբեկման ու ինքնագրաքննության դեպքեր մամուլում: Լրատվամիջոցները, մասնավորապես՝ հեռուստատեսությունը

շարունակում էին չապահովել կարծիքների բազմազանություն ու օբյեկտիվ լրատվություն: Հեռուստատեսության և ռադիոյի մասին 2008թ. օրենքի փոփոխություններով ռադիոհեռուստատեսային հեռարձակման նոր լիցենզիաների տրամադրումը դե-ֆակտո դադարեցվեց երկու տարով՝ խոչընդոտելով լրատվամիջոցներում առավել լայն բազմակարծություն ապահովելու հեռանկարներին:

Անհատներն ընդհանուր առմամբ կարող էին հրապարակավ ու մասնավոր կերպով քննադատել կառավարությանը՝ առանց հաշվեհարդարի վախի, սակայն լրատվամիջոցները վախենում էին կառավարությանը քննադատող լրատվություն ներկայացնելուց՝ ելնելով հեռարձակման լիցենզիայից զրկվելու կամ ընտրովի հարկային ստուգումների վտանգից, ինչպես նաև վախենալով եկամուտների կորստից, երբ գովազդատուներն իմանան, որ լրատվամիջոցը չի վայելում կառավարության բարեհաճությունը: Հաշվեհարդարի այս վախը հանգեցրել է ինքնագրաքննության բարձր աստիճանի:

Լրագրերի գերակշիռ մասը մասնավոր են, բացառությամբ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ու դրա ռուսալեզու «Ռեսպուբլիկա Արմենիի» տարբերակի, որոնք հրատարակվում են պետական ֆինանսավորմամբ: Տպագիր լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ ապահովել են տարբեր տեսակետների ներկայացումն առանց սահմանափակումների, սակայն շարունակել են լինել տնտեսական և քաղաքական շահեր ներկայացնող խմբերի ու անհատների ազդեցության ներքո:

Ավելի մեծ բազմակարծություն էր տիրում առցանց հրապարակումներում, չնայած առցանց ընթերցողների թիվը սահմանափակ էր, հատկապես՝ Երևանից դուրս:

Լրագրերի շրջանառությունը շարունակում էր մնալ սահմանափակ: Նույնը կարելի է ասել նաև 20 ռադիոկայանների լսարանի մասին, որոնցից երեքը հանրային ռադիոկայաններ են, իսկ երկուսը հեռարձակվում են արտերկրից: Ըստ պաշտոնական տեղեկատվության տարվա ընթացքում գործել են 82 հեռուստաընկերություններ, որոնցից երեքը հանրային հեռուստաընկերություն էին, իսկ չորսը հեռարձակվում էին արտերկրից: Բացի երեք մասնավոր հեռուստաընկերություններից մնացած բոլոր հեռուստակայանները մասնավոր էին, իսկ այդ հեռուստաընկերությունների կեսից ավելին մարզերում տեղակայված փոքր տեղական հեռարձակողներն էին: Միայն պետական ֆինանսավորմամբ գործող հանրային հեռուստատեսությունն (Հ1) է, որի հաղորդումները սփռվում են երկրի ողջ տարածքով, չնայած կան որոշ հեռուստաընկերություններ, որոնց սփռման տարածքը ներառում է երկրի գերակշիռ մասը, իսկ որոշ հեռուստաընկերություններ հնարավորություն ունեն հեռարձակել Երևանից դուրս: Հեռուստակայանների մեծ մասի սեփականատերերն են կառավարամետ քաղաքական գործիչները կամ լավ կապեր ունեցող գործարարները, մի գործոն, որ հուշում է այս ընկերություններում աշխատող լրագրողներին դիմել ինքնագրաքննության: Խոշոր հեռարձակող

լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ ներկայացրել են կառավարամետ դիրքորոշումներ և խուսափել են խմբագրական մեկնաբանություններ ու կառավարությանը քննադատող նյութեր ներկայացնելուց:

Ի տարբերություն 2008թ. փետրվարին տեղի ունեցած նախագահական ընտրությունների, երբ պետության կողմից վերահսկվող և կառավարամետ լրատվամիջոցներն ակնհայտ կանխակալություն էին ցուցաբերում կառավարության թեկնածուի՝ այն ժամանակվա վարչապետ և արդյունքում՝ հաղթող Սերժ Սարգսյանի նկատմամբ, մայիսի 31-ի Երևան քաղաքի ավագանու և քաղաքապետի ընտրությունների ժամանակ լրատվամիջոցներն ավելի չեզոք կերպով էին լուսաբանում քարոզարշավը: Ըստ Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ) կողմից իրականացված լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզարշավի լուսաբանման մոնիտորինգի՝ քարոզարշավի ընթացքում ընտրարշավին մասնակցող կուսակցություններին/բլոկին վերաբերող բոլոր վկայակոչումները 96 տոկոս դեպքերում չեզոք են եղել: Այդուհանդերձ, լրատվամիջոցների մոնիտորինգի իր գեկույցում ԵՄԱ-ն նշել է, որ որոշ հեռուստաալիքներ հստակորեն նախապատվություն էին տալիս այս կամ այն թեկնածուին և կուսակցությանը:

Օգոստոսի 31-ին Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերություններ հաստատելու և զարգացնելու մասին երկու արձանագրությունների վերաբերյալ Հայաստանի, Թուրքիայի և Շվեյցարիայի արտգործնախարարությունների համատեղ հայտարարությունից հետո՝ տեղի էլեկտրոնային և տպագիր լրատվամիջոցները լայնորեն լուսաբանեցին արձանագրությունների վերաբերյալ հանրային բանավեճերը՝ թույլ տալով, որ արտահայտվեն ամենատարբեր տեսակետներ, որոնք ինչպես կողմ, այնպես էլ դեմ էին այդ փաստաթղթերին:

Տարվա ընթացքում լրագրողները շարունակել են կատաղի հարձակումների թիրախ հանդիսանալ: Հուլիսի 2-ի իր գեկույցում Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտին քննադատել է Հայաստանում լրագրողների վրա տեղի ունեցած հարձակումները և կոչ է արել իշխանություններին արագ կերպով քննություն անցկացնել ու պատասխանատվության ենթարկել հարձակումների պատասխանատուներին: Ըստ Հարաշտիի և լրատվամիջոցների այլ դիտորդների՝ կառավարության կողմից ենթադրյալ հարձակում գործողներին չդատապարտելը՝ նպաստել է անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը և ծառայել է լրագրողների դեմ այլ հարձակումներ հրահրելուն: Մայիսի 25-ին իր հաստատության ստեղծման հինգերորդ տարելիցին նվիրված միջոցառման ժամանակ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունը նշել էր, որ լրագրողները Հայաստանում առավել թույլ պաշտպանված «շերտ են» և, որ խոսքի ազատության նկատմամբ հանդուրժողականություն կամ հարգանք չկա:

Մարտի 13-ին Երևանի պետական լեզվաբանական համալսարանի (Բրյուսովի անվան) անվտանգության աշխատակիցները դաժան ծեծի են ենթարկել ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանին այն բանից հետո, երբ նա առանց թույլտվության

մուտք է գործել համալսարան: Դրանից հետո Շամշյանը հիվանդանոց է տեղափոխվել սեռական օրգանների հատվածում ծանր վնասվածքներով և ներքին արյունահոսությամբ: Բրյուսովի ռեկտորը հանդես եկավ հայտարարությամբ, որում նա ավստասնք էր հայտնում լրագրողի վնասվածքների համար, սակայն, այնուհանդերձ, նշում էր, որ Շամշյանն ինքն է հրահրել միջադեպը: Մարդու իրավունքների պաշտպանը պարսավել է ծեծը, խոսելով «հայ հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի մասին», որը խթանում է անպատժելիության մթնոլորտ՝ կապված լրագրողների վրա հարձակումների հետ: Մարտի 14-ին ոստիկանությունը քրեական գործ հարուցեց միջադեպի առնչությամբ: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ Շամշյանը մուտք է գործել համալսարան առանց թույլտվության, հրաժարվել է ենթարկվել անվտանգության աշխատակիցների պահանջներին և չի հայտնել իր լրագրող լինելու հանգամանքը: Չնայած Շամշյանի կողմից նշվել է, որ ինքը ներկայացրել է փաստաթղթերը՝ քննչական մարմինը գտել է, որ համալսարանի անվտանգության աշխատողները փորձ չեն արել խոչընդոտել նրա լրագրողական գործունեությանը. նրանք, այնուամենայնիվ, մեղավոր են ճանաչել անվտանգության աշխատակիցներից մեկին՝ Շամշյանի վրա հարձակվելու հատկանիշներով, սակայն այդ աշխատակցի գործը կասեցվել է հունիսի 19-ի համաներման շրջանակներում:

Ապրիլի 17-ին առաջին ատյանի դատարանը Շամշյանին մեղավոր է ճանաչել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար՝ կապված մի միջադեպի հետ, որ ըստ հաղորդումների տեղի էր ունեցել 2008թ. օգոստոսին 2008թ. մարտին առնչվող դատավարություններից մեկի ժամանակ և տուգանել 350000 ՀՀ դրամի չափով (մոտավորապես 950 ԱՄՆ դոլար): Մայիսի 14-ին մեկ այլ դատարան ընդդիմադիր «Չորրորդ իշխանություն» օրաթերթի լրագրող Գոհար Վեզիրյանին դատապարտել է 2008թ. օգոստոսի նույն դատավարության ընթացքում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար և տուգանել միննույն գումարի չափով: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների որոշումները միմիայն հիմնված են եղել դատավարության ժամանակ ներկա գտնվող դատական կատարածոների ցուցումների վրա: Հունիսի 19-ին Ազգային ժողովի կողմից ընդունված համաներմամբ՝ երկու լրագրողների տուգանքները վերացվել են:

Բռնությամբ ուղեկցվող հարձակումներ տեղի ունեցան մայիսի 31-ի Երևանի քաղաքապետի ընտրություններին նախորդող ժամանակահատվածում: Ապրիլի 9-ին հրապարակված հայտարարության մեջ մի քանի լրատվամիջոցներ դատապարտում էին ոստիկանների հարձակումն Ա1+-ի լրագրող Դավիթ Ջալալյանի դեմ, ով ապրիլի 8-ին լուսաբանում էր ընդդիմության հավաքը Երևանի կենտրոնում: Ա1+ լրատվական անկախ առցանց գործակալությունը հաղորդում էր, որ ոստիկանության պարեկային ծառայության պետ Ռոբերտ Մելքոնյանն անձամբ է սկսել հարձակումը, որին հետագայում միացել են այլ ոստիկաններ: Հարձակումից հետո հրապարակված նկարներից երևում էր, որ Ջալալյանը վնասվածքներ է ստացել որովայնի հատվածում, ապա տեղափոխվել է հիվանդանոց: Ապրիլի 14-ին «Հետք» հետաքննող

լրատվական գործակալությունը հաղորդել է, որ ըստ ոստիկանության՝ Ջալալյանը ցուցմունք է տվել, որ իրեն չեն ծեծել, այլ ոստիկանները հրել են իրեն և ինքն ընկել է մեջքի վրա: Լրատվական հաղորդագրության մեջ նաև ասվում էր, որ հարձակումից հետո երկու ոստիկաններ այցելել են Ջալալյանին տանը և ահաբեկել նրան:

Ապրիլի 30-ին փաստաբան և երկու լրատվամիջոցների խմբագիր Արգիշտի Կիվիլիյանը ողջ է մնացել ակնհայտ մահափորձից հետո, որի ընթացքում երեք անհայտ անձինք հարձակվել են նրա վրա փայտե մահակներով և փորձել կրակել նրա վրա իր բնակարանի շենքի մուտքի մոտ, երբ նա աշխատանքից տուն էր վերադառնում վաղ առավոտյան: Կիվիլիյանը հիվանդանոց է տեղափոխվել ծանր վիճակում՝ գլխի և մարմնի ծանր վնասվածքներով և կտրվածքներով: Նա տարվել է վերակենդանացման բաժին: Լուսանկարներում երևացող փամփուշտների պարկուճները, որոնք ըստ հաղորդումների լուսանկարվել են ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի կողմից հարձակումից անմիջապես հետո, ոստիկանության դեպքի վայր գալուց հետո անհետացել են: Ոստիկանությունը սկզբում քրեական գործ էր հարուցել «առողջությանը ոչ ծանր վնաս հասցնելու» հատկանիշներով, սակայն հանրության շրջանում բարձրացած աղմուկից հետո մեղադրանքը խոստացվել է՝ դառնալով «սպանության փորձ մի խումբ մարդկանց կողմից»: Հուլիսի 8-ին Ազգային անվտանգության ծառայությունը, որն իրականացնում էր քննությունը, ձերբակալեց հարձակվողներից երկուսին՝ Գուրգեն Կիլիկյանին և Վլադիկ Մերաբյանին՝ մահափորձ կատարելու մեղադրանքով: Տարվա վերջին նրանք գտնվում էին ազատազրկման մեջ՝ սպասելով իրենց գործի քննությանը, իսկ պատկան մարմիններն ըստ հաղորդումների փնտրում էին լրացուցիչ կասկածյալներ:

Մայիսի 7-ին, երբ օրը նոր էր սկսվել, անհայտ անձինք հարձակվել էին «Շանթ» մասնավոր հեռուստաընկերության հաղորդավար և թոք շոու վարող Նվեր Մնացականյանի վրա և ծեծել նրան, երբ աշխատանքից տուն էր վերադառնում: Նա ստացել էր վնասվածքներ գլխին, ոտքին ու ձեռքին և հիվանդանոցային բուժման կարիք էր եղել: Մնացականյանը հայտարարել էր, որ հարձակումը կապված է իր մասնագիտական գործունեության հետ, սակայն կոնկրետ որևէ մեկին հարձակումը չէր վերագրել: Լրատվամիջոցների որոշ հաղորդումներ ենթադրել են, որ հարձակումը պատվիրվել է ոմն ազդեցիկ գործարարի և պատգամավորի կողմից՝ հարձակումից առաջ Մնացականյանի կողմից նրա հետ ունեցած անբարեհաճ հարցազրույցի համար վրեժ լուծելու նպատակով: Օգոստոսի 21-ին Ոստիկանության պետ, գեներալ-մայոր Ալիկ Մարգսյանը հայտարարել է, որ երկու երիտասարդ ներկայացել են և նրանց մեղադրանք է առաջադրվել դեպքի կապակցությամբ: Ըստ Մարգսյանի երկու երիտասարդները հայտնել են, որ սխալմամբ են հարձակվել Մնացականյանի վրա և իրենց թիրախը մեկ այլ անձ է եղել: Այս հայտարարությունը Մնացականյանը հրապարակավ որակել է որպես «անհեթեթ»: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ հետագա քննությունը ցույց է տվել, որ այդ երկու անձինք ներգրավված չեն եղել հարձակման մեջ և ազատ են արձակվել: Համապատասխանաբար, սեպտեմբերի 7-ին

նստիկանությունը կարճել է գործը, քանի որ հանցագործներն անհայտ էին և ազատության մեջ:

Լրագրողների դեմ բռնության դեպքեր և նրանց գործունեության խոչընդոտում է տեղի ունեցել մայիսի 31-ին Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ: Ընտրության օրը լրագրողների դեմ կատարվող բռնություններն ու չարաշահումները հաճախ տեղի են ունեցել նստիկանների և ընտրական պաշտոնյաների ներկայությամբ, որոնք չեն միջամտել դրանք կանխելու կամ դադարեցնելու համար: Երևանի Մալաթիա-Մեքաստիայի տեղամասերից մեկում անհայտ անձինք հարձակում են գործել ընդդիմությանը սատարող «168 ժամ» օրաթերթի լրագրող Արմինե Ավետյանի վրա՝ հանձնաժողովի անդամների և նստիկանության ներկայությամբ: «Tert.am» լրատվական գործակալությունից նրա գործընկեր Լիլիթ Թադևոսյանին նույնպես խոչընդոտել են: «Առավոտ» անկախ օրաթերթի լրագրող Նելլի Գրիգորյանի վրա նույնպես հարձակվել են Մալաթիա-Մեքաստիայի տեղամասերից մեկում և առգրավել նրա լուսանկարչական խցիկը, երբ նա փորձում էր լուսանկարել ընտրություններին մասնակցող, «Հայ ազգային կոնգրես» բլոկի վստահված անձ հանդիսացող և ընտրությունները վիճարկող կնոջ հետ տեղի մարդկանց սկսած բուռն վիճաբանությունը:

Երևանի Կենտրոն համայնքում գտնվող մի տեղամասում իշխող Հանրապետական կուսակցության պատգամավոր Լևոն Սարգսյանը և նրա թիկնապահները ենթադրաբար հարձակվել են ընդդիմադիր «Չորրորդ իշխանություն» օրաթերթի լրագրող Գոհար Վեգիրյանի և «Հայք» ընդդիմադիր թերթի լրագրող Տաթև Մեսրոպյանի վրա և ըստ հաղորդումների առգրավել են նաև ընդդիմությանը սատարող «168 ժամ» օրաթերթի լրագրող Մարինե Խառատյանի ձայնագրիչը: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ մայիսի 1-ին քրեական գործ է հարուցվել խուլիգանության հատկանիշներով՝ ի պատասխան լրատվամիջոցների այն հաղորդումների, որ Սարգսյանի թիկնապահները հարձակվել են Վեգիրյանի վրա: Ըստ իրավապահների՝ թիկնապահներն ասել են, որ Վեգիրյանը «խուլիգանական» հայտարարություններ է արել իրենց հասցեին: Տարվա վերջի դրությամբ այս գործի ընթացքն անհայտ էր, իսկ թիկնապահների ենթադրյալ հարձակման մասին պաշտոնական ոչ մի տեղեկություն չի տրամադրվել: Բացի այդ, տարեվերջի դրությամբ քրեական մեղադրանք չէր ներկայացվել թիկնապահներին և հայտնի չէին լրագրողների դեմ նշված այլ հարձակումների կապակցությամբ քննությունների դեպքեր (տես՝ Մաս 3):

Հունիսի 23-ին Կարեն Հարությունյանը դատապարտվել է հինգ տարվա ազատազրկման 2008թ. նոյեմբերին հետաքննող լրագրող Էդիկ Բաղդասարյանի դեմ կատարվող հարձակման մեջ դերակատարություն ունենալու համար: Կոռուպցիոն բացահայտումներ կատարող իր հոդվածներով հայտնի Բաղդասարյանը՝ հարձակման ժամանակ գլխի լուրջ վնասվածքներ էր ստացել և մի քանի օր գտնվել է հիվանդանոցում: Ոստիկանությունը չի կարողացել ձերբակալել հարձակման մյուս

երկու մասնակիցներին և հոկտեմբերի 19-ին կարճել է գործը: Բաղդասարյանը կասկածում էր, որ հարձակման ետևում պատգամավոր և բնապահպանության նախկին նախարար Վարդան Այվազյանն էր, քանի որ Բաղդասարյանը մի շարք հոդվածներ էր տպագրել, որոնք մեղադրում էին Այվազյանին՝ բնապահպանության նախարար եղած ժամանակ՝ նրա կողմից կատարված անօրինական գործողությունների համար:

2008թ. հունվար և մարտ ամիսներին Գյումրիում գտնվող ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի դեմ հարձակումների քննության մասով որևէ առաջընթաց չի եղել: «Ասպարեզ» ակումբը ստացել է ահաբեկող հեռախոսագանգեր, իսկ 2008թ. հունվարին նրանց գրասենյակը հրկիզվել է անհայտ անձանց կողմից: 2008թ. մարտին հրկիզվեց «Ասպարեզ» ակումբի նախագահի մեքենան: Հարձակման ժամանակ ոչ ոք չէր վնասվել:

Տարվա ընթացքում որևէ առաջընթաց չի գրանցվել լրագրողներին ահաբեկելու և բռնությունների ու 2008թ. փետրվարին նախագահական ընտրությունների ժամանակ նրանց գույքին հասցված վնասի տարբեր դեպքերին լուծում տալու կապակցությամբ: Նմանապես, ոչ մի առաջընթաց չկա 2008թ. փետրվար/մարտ ամիսներին հետընտրական ցույցերի ընթացքում լրագրողների նկատմամբ լայն տարածում ստացած հետապնդումների ու ահաբեկումների մասով: Այս միջադեպերի հետ կապված ոչ ոք չի դատապարտվել, բացառությամբ մեկ դեպքի, երբ ընտրատեղամասի նախագահը տուգանվել է տեղամասում դիտորդների և մեկ լրագրողի իրավունքները սահմանափակելու համար:

Հուլիսի 1-ին ընդդիմությանը սատարող «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր և ընդդիմության առաջավոր դեմքերից մեկը՝ Նիկոլ Փաշինյանը, ով 2008թ. մարտին մտցված արտակարգ դրության հայտարարումից քիչ անց թաքնվել էր, հանձնվեց իշխանություններին: Ինչպես ընդդիմությանը սատարող առաջնորդներին, Փաշինյանին նույնպես սկզբում մեղադրանք առաջադրվեց իշխանությունը բռնազավթելու և սպանությամբ զուգորդված զանգվածային անկարգություններ հրահրելու փորձի հատկանիշներով. հեղաշրջման մեղադրանքը հետո հանվեց: Նրան մեղադրանք էր առաջադրվել նաև պետական պաշտոնյային դիմադրություն ցուցաբերելու համար, որը տեղ էր գտել 2007թ. Երևանում ոստիկանության և ընդդիմադիրներ փոքր խմբի բախման ժամանակ, որն իրազեկում էր Երևանում տեղի ունենալիք ընդդիմության թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական առաջին հանրահավաքի մասին: Իր կամավոր հանձնվելուց հետո՝ Փաշինյանը դիմել է իշխանությունների ազատ արձակել իրեն քննության ընթացքում: Իշխանությունները մերժեցին նրա հայցը և նա կալանքի տակ է վերցվել երկու ամիս ժամկետով: Օգոստոսի 27-ին իշխանությունները երկարաձգեցին կալանքի ժամկետը և Փաշինյանն ազատազրկման մեջ մնաց մինչև տարվա վերջ: Նախագահ Սարգսյանին ուղղված հոկտեմբերի 2-ի նամակում «Մամուլի ազատության համաշխարհային կոմիտեն» գրանցեց իր մտահոգությունը Փաշինյանի նկատմամբ դրսևորվող

վերաբերմունքի առնչությամբ՝ հարցնելով, թե ինչու է նա պատժվում քաղաքական խաղաղ հանրահավաքի ժամանակ խոսքի ազատության իր իրավունքն իրացնելու համար: Այդ հանրահավաքի ժամանակ, որին առավոտյան նախորդել էր Ազատության (Օպերայի) հրապարակում մոտ 2000 խաղաղ ցուցարարներին ցրելու նպատակով ուժի կիրառումն անվտանգության հարյուրավոր աշխատակիցների կողմից, Փաշինյանը պարբերաբար հանդարտության կոչ էր անում և հորդորում էր ցուցարարներին շինարարական նյութեր հավաքել՝ անվտանգության ուժերի հարձակումից իրենց պաշտպանելու համար: Փաշինյանի դեմ դատավարությունը սկսվեց հոկտեմբերի 20-ին, որի ժամանակ Փաշինյանն իր դեմ սկսված դատավարությունը համարեց «քաղաքական ճնշումների շարունակություն», որոնք իշխանությունների կողմից սկիզբ են առել 2007թ. տարեվերջին՝ Լևոն Տեր-Պետրոսյանին սատարելու համար: Դեկտեմբերի 22-ին դատախազները պահանջեցին, որպեսզի Փաշինյանն իր գործած հանցանքների համար դատապարտվի ութ տարվա ազատազրկման. դատավճիռ, որը կզրկեր Փաշինյանին օգտվել համաներումից, որ հայտարարվել էր հունիսի 19-ին: Տարեվերջին Փաշինյանի դատավարությունը շարունակվում էր:

Ըստ «Եվրասիա համագործակցության հիմնադրամի»՝ հուլիսին կեսերին «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունը, որը պատկանում է «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը (որը վերջին տասնամյակում իշխող կոալիցիայի մաս էր կազմում մինչև ապրիլի վերջ, երբ այն լքեց արտաքին քաղաքականության դիրքորոշումների տարբերության պատճառով), հրաժարվեց եթեր հեռարձակել «Հայաստան հանած Ա1+» վավերագրական ֆիլմը և ֆիլմի վերաբերյալ թոք շոու կազմակերպել: Վավերագրական ֆիլմը ընդդիմության կողմնակից՝ հայտնի ռեժիսոր Տիգրան Խզմալյանի աշխատանքն էր: Տեղի դիտորդների համաձայն այդ քայլն ինքնագրաքննության գործողություն էր, որ արվեց «Երկիր մեդիայի» կողմից՝ իշխանությունների հետ խնդիրներից խուսափելու նպատակով:

Տարվա ընթացքում Գյումրու ԳԱԼԱ հեռուստաընկերությունը շարունակում էր գործել ու հեռարձակել՝ ի հեճուկս իշխանությունների հետ ընթացքի մեջ գտնվող իրավական վեճերին, որոնք սկիզբ առան, երբ 2007թ. վերջին հեռուստաընկերության կողմից հեռարձակվեց Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարությանը քննադատող էլույթը՝ նախքան 2008թ. նախագահական ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու մասին հայտարարելը: Ելույթի հեռարձակմանն հաջորդեցին հարկային խիստ ստուգումներ, որի արդյունքում 2008թ. մարտին որոշվեց, որ ընկերությունից գանձման է ենթակա մոտ 26 միլիոն ՀՀ դրամ (85000 ԱՄՆ դոլար)՝ որպես նախկինում չկատարված հարկային պարտավորությունների, հաշվարկված տույժերի ու ուշացված վճարումների հանրագումար: Մարտի 13-ին ԳԱԼԱ-ն դիմեց մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ վիճարկելու հաշվարկված տույժերը:



Ա1+ անկախ հեռուստալրատվական ընկերությունը տարեվերջի դրությամբ արդեն յոթը տարի մնում էր առանց հեռարձակման լիցենզիայի կամ հաճախականության, սակայն շարունակում էր գործել որպես առցանց լրատվամիջոց: Ա1+ ընկերությունը ռադիոյի կամ հեռուստատեսային հեռարձակման լիցենզիա ստանալու տասներկու անհաջող դիմում էր ներկայացրել 2002թ. ի վեր, երբ եթերից դուրս մնաց լիցենզիան չերկարաձգելու պատճառով. պատկան մարմինները մերժում էին ընկերության դիմումները՝ առանց պաշտոնական բացատրության: 2008թ. հունիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ կայացրեց, որ իշխանությունները, հրաժարվելով գրավոր պարզաբանումներ տալ լիցենզիայի տրամադրումը մերժելու վերաբերյալ, խախտել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը (խոսքի ազատություն): Եվրադատարանի վճռում ասված էր.

«ընթացակարգը, որով լիցենզիա տրամադրող մարմնից չի պահանջվում պատճառաբանել իր որոշումները չի ապահովում համարժեք պաշտպանություն խոսքի ազատության հիմնարար իրավունքի մասով իրավասու հանրային մարմնի կամայական միջամտություններից»: Եվրադատարանը որոշեց և կառավարությունն էլ Ա1+-ի հեռուստալրատվության հիմնադիր «Մելտեքս» ՍՊԸ-ին վճարեց 30000 եվրո (մոտ 42900 ԱՄՆ դոլար): 2008թ. դեկտեմբերին Ա1+-ը դիմեց վճարեկ դատարան՝ վերանայելու նախկին որոշումները, որպեսզի կատարեն Եվրոպական դատարանի որոշումները: Փետրվարին վճարեկ դատարանը հրաժարվեց վերաբացել Ա1+-ի գործը, որից հետո ընկերությունը դիմեց սահմանադրական դատարան: Դիմումն ընդունվեց և լսումը նախատեսվում էր դեկտեմբերի 15-ին, սակայն սկսվելու օրը որոշում կայացվեց այն հետաձգել մինչև 2010թ. սկիզբ:

Փետրվարի 29-ին «խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հայաստանյան ՀԿ-ը հրապարակեց մի զեկույց, որտեղ նշվում էր, որ թեպետ լրագրողների նկատմամբ հարձակումների ավելացումը համընկնում էր երկրում քաղաքական իրադրության սրման հետ, սակայն այնուհանդերձ 2008թ. աննախադեպ էր և լրագրողների, և լրատվամիջոցների իրավունքների խախտումների թվով, ինչպես նաև ՋԼՄ-ների նկատմամբ գրաքննության իրականացման մասով:

Լրատվամիջոցների հարցերով ՀԿ-ն 2008թ. ընթացքում արձանագրել էր լրագրողների նկատմամբ բռնության ու հարձակման 18 դեպք:

Ապրիլի 28-ին Ազգային ժողովն ընդունեց ՋԼՄ-ների կարգավորմանը վերաբերող օրենսդրական փոփոխություններ, որոնց մի մասը պատասխանն էր գործադիր իշխանության կողմից լրատվամիջոցներին միջամտելու վերաբերյալ վաղուց ի վեր առկա մտահոգություններին: Ըստ Երևանում գործող «Ինտերնյուզ»

կազմակերպության փոփոխություններով չէր ապահովվում կարգավորող մարմինների անկախությունը, որին վաղուց ի վեր ձգտում են տեղի անկախ լրատվամիջոցները և փոփոխությունների վերաբերյալ հանրային քննարկումները սակավ էին: ԵԱՀԿ ՋԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը հուլիսի 2-ի զեկույցում այնուամենայնիվ նշեց դրական փոփոխությունները կապված հեռարձակման լիցենզիա տրամադրելու չափորոշիչների, ռադիոհեռուստատեսային

ծրագրերի հովանավորման ու նախքան հեռարձակողների գործունեության կասեցումը կիրառվող պատժիչ միջոցների հետ: Այնուամենայնիվ, զեկույցում լուրջ մտահոգություն էր հայտնվում, որ ազգային կարգավորող մարմնում նախագահի կողմից որոշ թեկնածուների առաջադրումը կարող է սահմանափակել խոսքի ազատությունը և նշվում էր, որ հանրային հեռարձակման ու կարգավորող մարմնի ֆինանսավորումը կախված կլինի խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքից: Ձեկույցն եզրակացնում էր, որ օրենքի փոփոխություններն անհամադրելի էին «անկախ հանրային հեռարձակող» և «անկախ կարգավորող» հասկացությունների հետ:

Դեկտեմբերի 9-ին Ազգային ժողովն ընտրեց ռադիոհեռուստատեսային հեռարձակումները կարգավորելու և հեռարձակման լիցենզիաներ շնորհելու կամ ետ կանչելու հարցերով պատասխանատու Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) չորս նոր անդամների: Ընդդիմադիր պատգամավոր Ստեփան Սաֆարյանը քվեարկությունից հետո դժգոհություն հայտնեց, որ «ոչ բոլոր թեկնածուներն էին հստակորեն համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին» և որ ընտրության գործընթացում ՁԼՄ հայտնի փորձագետներ ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ գրեթե չմասնակցեցին:

2008թ. սեպտեմբերին՝ ըստ էության առանց նախապես զգուշացման կամ հանրային քննարկումների, Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքում, որով նոր հեռուստատեսային հեռարձակման լիցենզիաների տրամադրումը դադարեցվեց մինչև 2010թ. հուլիսը: Այս օրենսդրական փոփոխությունն ընդունվեց չհայտարարված և երեկոյան անցկացված արտահերթ նիստի ժամանակ: Այս դադարեցումը գործողության մեջ դրվեց մի շարք լիցենզիաների ժամկետները լրանալու կապակցությամբ հեռուստահաճախականությունների համար մրցույթ հայտարարելու նախաշեմին: Այս փոփոխությունը նաև գործող հեռուստակայաններին իրավունք է տալիս մինչև 2011թ. հունվար երկարաձգել ժամկետները լրացող իրենց լիցենզիաները: Այդ պահին իշխանությունները պնդում էին, որ լիցենզիաների տրամադրման դադարեցումն անհրաժեշտ էր երկրի հեռարձակման անալոգային համակարգը մինչև 2015թ. թվայնացնելու համար: Մինչև տարվա վերջ կառավարությունը ռադիոհեռուստատեսային հեռարձակման լիցենզիաների որևէ նոր մրցույթ չի անցկացրել: Նախապես իշխանությունները հայտնել են, որ նոր լիցենզիաներ շնորհելու համար ազատ հաճախականություններ չկան, սակայն Հայաստանի վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Ջաքարյանը հունիսի 30-ին ժխտեց հեռուստատեսային հաճախականություններ չլինելը՝ հերքելով կառավարության ավելի վաղ կատարած պնդումները:

Սեպտեմբերի 2-ին տարբեր մարզային հեռուստակայաններ ու ՁԼՄ հարցերով դիտորդ կառույցներ գրեցին Մարդու իրավունքների պաշտպանին՝ իրենց մտահոգությունը հայտնելով ոչ հստակ իրավիճակի վերաբերյալ, որ ձևավորեց

լիցենզիաների տրամադրումը կասեցնելու որոշմամբ, մասնավորապես հաշվի առնելով այն փաստը, որ կառավարությունը դեռ պետք է ներկայացնի հայեցակարգ կամ մեկնարկի հանրային քննարկումներ թվային հեռարձակման ներդրման վերաբերյալ, ինչն ասվել էր, որ կարվի մինչև հունիս: Մտահոգությունների մեծ մասը բխում էր այն փաստից, որ եթե նախքան մրցույթները հայտարարելը բավարար ժամանակ չտրվի, մարզային հեռուստաընկերությունները ֆինանսապես ու տեխնիկապես չեն կարողանա պատրաստվել հեռարձակման նոր պահանջներին: Հեռուստաընկերությունները նաև մտահոգություններ ունեին, որ թվայնացումը կարող է նրանց եթերից հեռանալու պատճառ դառնալ, եթե մրցույթների հայտարարումից հետո արագ փոխարկում չկատարեն: Մեպտեմբերի 18-ին Մարդու իրավունքների պաշտպանը գրեց Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին՝ խնդրելով պարզաբանումներ տալ այս խնդիրների վերաբերյալ: Դրանից հետո Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի ու երիտասարդության հարցերով հանձնաժողովը թվային հեռարձակմանն անցում կատարելու հարցի վերաբերյալ լուսումներ անցկացրեց: Նախարար Երիցյանը լուսումների ժամանակ ներկայացրեց հայեցակարգի նախագիծը, որը կառավարությունն ընդունեց նոյեմբերի 12-ին: Տեղական դիտորդները մտահոգություններ հայտնեցին հայեցակարգի վերաբերյալ՝ նշելով, որ այն չի պատասխանում հեռուստաընկերություններին մտահոգող հարցերին և ցույց չի տալիս, որ կառավարությունը պատրաստ է կարգավորել փոխարկման տեխնիկական դժվարությունները և հոգալ թվայնացումից բխող ֆինանսական հետևանքները ընկերությունների ու բնակչության համար: ԶԼՄ հարցերով դիտորդ կառույցները նշում էին, որ հայեցակարգը չի պարունակում հստակ հակամենաշնորհային միջոցներ:

Օգոստոսի 20-ին Ազգային ժողովի նախագահ Հովիվ Աբրահամյանը խորհրդարանի գործունեությունը լուսաբանող լրագրողների հավատարմագրման նոր ընթացակարգ ձևավորեց: Ըստ որոշ լրագրողների նոր ընթացակարգերը չափից դուրս սահմանափակող են և խոչընդոտել են իրենց կողմից խորհրդարանի գործունեության լուսաբանմանը:

Տարվա ընթացքում իշխանությունները մեղադրանք չեն ներկայացրել որևէ լրատվամիջոցի կամ պետական մարմնի 2008 թ. նախագահական ընտրարշավի լուսաբանման ընթացքում օրենքի խախտումներ թույլ տալու համար: 2008 մարտին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անտեսել է «նախընտրական գովազդի արդյունավետ վերահսկման» գործառույթը, իսկ ՀՌԱՀ-ը «ձևական մոտեցում» է ցուցաբերել օրենքի կատարման հարցում՝ կապված ընտրարշավի ընթացքում ընդդիմության կողմնակալ ու խեղաթյուրված լուսաբանման հետ: Դատարանը պատժամիջոցներ ու այլ միջոցներ չդիտարկեց, քանի որ թեկնածուները կարողացել էին ընտրողներին իրեն ընտրական ծրագրերը ներկայացնել նախընտրական քարոզչության այլ եղանակներով:

Օգոստոսի 4-ին բանտից ազատ արձակվեց «Ժամանակ Երևան» ընդդիմադիր օրաթերթի խմբագիր Արման Բաբաջանյանը, որը դատապարտվել էր 2006թ. սեպտեմբերին փաստաթղթերի կեղծման ու զինվորական ծառայությունից խուսափելու մեղադրանքով: Դատապարտելիս տեղական դիտորդները կարծում էին, որ նրան նշանակված պատիժն այդ մեղադրանքների համար շատ խիստ էր և նրան դիտարկում էին որպես կառավարության քննադատների նկատմամբ ընտրովի քրեական հետապնդման օրինակ: Տարվա ընթացքում Բաբաջանյանի մոտ ախտորոշվեց ուղեղի ուռուցք, որը մնում էր առանց բուժման: Հասարակական ու միջազգային զգալի ճնշումների ներքո և Բաբաջանյանի առողջական վիճակի կտրուկ վատթարացումից հետո, երբ հիվանդության պատճառով նա կորցնում էր տեսողությունը, նա ազատ արձակվեց: Ազատ արձակման պահին Բաբաջանյանը կրել էր պատժի գրեթե ողջ ժամկետը, չնայած օրինակելի վարքի համար նա նախկինում փորձեր էր արել հասնել վաղաժամկետ ազատ արձակման: Տեղական դիտորդները համարում էին, որ վաղաժամկետ ազատ արձակումը կառավարությունը մերժում էր քաղաքական շարժառիթներով:

### ***Ինտերնետի ազատություն***

Տարվա ընթացքում չեն եղել հաղորդումներ կառավարության կողմից անկախ և ընդդիմադիր միտվածության կայքերի հասանելիության միտումնավոր արգելքներ կիրառելու վերաբերյալ, ինչպես արվել էր 2008թ. մարտին՝ արտակարգ դրության պայմաններում: Որոշ անհատների ու խմբերի կողմից կասկածներ են հայտնվել էլեկտրոնային փոստի ու ինտերնետային ճեպագրույցների գաղտնադիտման վերաբերյալ, սակայն դրանք հիմնավորող ապացույցներ չեն եղել:

Քաղաքներում կան բազմաթիվ ինտերնետ-սրճարաններ, չնայած տեղական ինտերնետ ծառայության մատուցման կապը խիստ դանդաղ է, ինչն էլ սահմանափակում է ինտերնետի գործածման արդյունավետությունը: Որոշ ինտերնետ-սրճարաններ գործել են նաև քաղաքային բնակավայրերից դուրս: Միջազգային հեռահաղորդակցության միության 2008թ. վիճակագրական տվյալներով համացանցից օգտվում են երկրի բնակիչների մոտ 6 տոկոսը:

### ***Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ***

Եղել են մի քանի հպանցիկ հաղորդումներ տարվա ընթացքում քաղաքական հայացքների համար հեռացված ուսուցիչների ու բուհերի ուսանողների վերաբերյալ: Ըստ կրոնական փոքրամասնական խմբերի կրոնական հայացքների համար աշխատանքից հեռացվել են փոքրամասնական հավատքի հարող ուսուցիչներ: Նաև հաղորդումներ են եղել, որ հանրակրթական դպրոցում ուսուցչի աշխատանքի համար դիմող անձանց սովորաբար չեն ընդունվել, եթե հայտնի է եղել նրանց փոքրամասնական կրոնական խմբի հարելու փաստը:

Փետրվարի 25-ին լրատվամիջոցների հաղորդմամբ Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի տնօրինությունը թույլ չի տվել «Հիմա» նվագախմբի նախապես պլանավորված համերգը. երաժիշտները ընդդիմադիր «Հիմա» երիտասարդական շարժումից էին, որը բողոքի բազմաթիվ ակցիաներ է անցկացրել՝ բողոքարկելով 2008թ. նախագահական ընտրությունների արդյունքները:

**բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն  
Հավաքների ազատություն**

Սահմանադրությամբ նախատեսվում է հավաքների ազատություն, սակայն իշխանությունները գործնականում սահմանափակել են այս իրավունքի իրականացումը մասնավորապես այն անձանց համար, որոնց կառավարությունը համարում է քաղաքական ընդդիմություն:

Նախքան 2008թ. մարտի սկզբին արտակարգ դրություն մտցնելը՝ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը նախատեսում էր, որ խմբերը կարող են առանց արտոնում ձեռք բերելու խաղաղ հավաքվել, եթե նախապես տեղեկացրել են այդ մասին համապատասխան մարմիններին: Ի պատասխան հետընտրական ցույցերի, որոնք վիճարկում էին 2008թ. փետրվարին կայացած նախագահական ընտրությունների արդյունքները՝ այդ ժամանակվա նախագահ Ռոբերտ Քոչարյանը 2008թ. մարտին Երևան քաղաքում արտակարգ դրություն մտցնելու որոշում ընդունեց, որով արգելվում էր որևէ կարգի հանրային հավաք: Արգելքը խստորեն իրականացվում էր ոստիկանության կողմից: Արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքում՝ ավելացնելով այնպիսի միջոցառումներ, որոնք զգալիորեն սահմանափակում էին խաղաղ հավաքների մարդու իրավունքը: Թեև 2008թ. հունիսին հետագա փոփոխություններով մեղմացվեցին խիստ դրույթները, որոնք իշխանություններին հայեցողական լիազորություն էին տալիս՝ արգելել քաղաքական հավաքներն ու ցույցերը, սակայն գործնականում իշխանությունները շարունակում էին սահմանափակել հավաքների ազատությունը օրենքի կամայական մեկնաբանությամբ և շատ դեպքերում մերժում էին իրենց խնդրած վայրում հանրահավաք անցկացնելու ընդդիմության իրազեկումները: Իշխանությունները սահմանափակեցին նաև ինքնաբերիկ, փոքրաքանակ հավաքները, որոնք նախապես իրազեկում չէին պահանջում:

Ըստ մարդու իրավունքների «Հայաստանի հելսինկյան կոմիտե» տեղական ՀԿ-ի՝ տարվա առաջին վեց ամսվա ընթացքում հավաքների ազատությունը սահմանափակելու բազմաթիվ դեպքեր են եղել: Դրանցից շատերը ներառում են կազմակերպիչների կողմից ի սկզբանե իրենց ցանկացած վայրում հանրահավաքներ կամ ցույցեր և երթեր անցկացնելու իրազեկումների մերժումն իշխանությունների կողմից: Այդ իրազեկումներից շատերը ներկայացված էին քաղաքական ընդդիմության կողմից:

«Հայաստանի հելսինկյան կոմիտեն» նաև հայտնեց, որ տարվա ընթացքում հանրահավաքների կազմակերպիչների համար դժվար էր հանրությանը տեղեկացնել մոտալուտ հանրահավաքների մասին, քանի որ հեռուստատեսությունը հիմնականում մերժում էր ընդունել հանրահավաքների մասին նույնիսկ վճարովի հայտարարությունները: Արդյունքում հանրահավաքների կազմակերպիչները սովորաբար փորձում էին հանրությանը տեղեկացնել անկախ կամ ընդդիմադիր լրատվամիջոցներով և թուրքիկների ու իրազեկման թերթիկները ձեռքից-ձեռք բաժանելով:

Փետրվարի 19-ին ոստիկանությունը թույլ չտվեց «Հատուկ գունդ» երիտասարդական կազմակերպությանը բողոքի ակցիա անցկացնել՝ 2008թ. վիճարկելի նախագահական ընտրությունների տարեդարձը նշելու համար: Երիտասարդական ընդդիմադիր մյուս խմբերի ներկայացուցիչները մասնակցեցին բողոքին, որ կազմակերպիչները նախատեսել էին անցկացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) առաջ: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների՝ ոստիկանությունը թույլ չտվեց ցուցարարներին մոտենալ ԿԸՀ շենքին և ցրեց ցուցարարներին, իսկ ոստիկանության աշխատակիցները, ըստ լրատվամիջոցների հաղորդումների, առգրավեցին ցուցարարների պաստառները:

Մարտի 1-ին ՀԱԿ-ը և «Ժառանգություն» կուսակցությունը հանրահավաք անցկացրեցին Մատենադարանի տարածքում՝ 2008թ. նախագահական ընտրություններին հաջորդած բռնությունների մեկ տարին հիշատակելու համար: Քաղաքային իշխանությունները սկզբում արգելեցին հանրահավաքը և դրանից հետո նախատեսված երթը Երևանի կենտրոնով՝ իրենց որոշումը տեղադրելով քաղաքի կայքէջում և կազմակերպիչներին առաջարկեցին հանրահավաքն անցկացնել մեկ այլ վայրում: Կազմակերպիչները չհամաձայնեցին որոշման հետ՝ նշելով, որ իշխանությունները չեն պատասխանել հանրահավաք և երթ անցկացնելու իրենց իրազեկմանը 72 ժամվա ընթացքում, ինչպես նախատեսված է օրենքով, որը սահմանում է, որ այս ժամկետներում պատասխան չստանալու դեպքում կարելի է անցկացնել հանրահավաքներ ըստ նախատեսվածի: Փետրվարի 17-ին Եվրոպայի խորհուրդը մտահոգություն արտահայտեց հանրահավաքներն արգելելու կապակցությամբ և կոչ արեց իշխանությունների լիարժեք հարգել հավաքների ազատության սկզբունքն ու անհարկի սահմանափակումներ չդնել ընդդիմության խաղաղ հավաքների վրա: Մարտի 1-ին ՀԱԿ-ի ղեկավարների և ոստիկանության միջև բանակցություններից հետո՝ ոստիկանությունը թույլ տվեց հանրահավաքն ու երթը, և երկուսն էլ խաղաղ ընթացան: Սակայն ստացվել են մի շարք արժանահավաստ զեկույցներ մարզերից ցուցարարների մուտքը դեպի մայրաքաղաք կանխելու ոստիկանության ջանքերի մասին: Դիվանագետ դիտորդները նկատել են ոստիկանական մի շարք անցակետեր խոշոր մայրուղիների վրա, և հաղորդումներ են եղել ավտոբուսների ու տաքսիների վարորդների վրա ճնշումների վերաբերյալ, որպեսզի մարտի 1-ին ոչ ոքի Երևան չբերեն:

Ոստիկանությունը կանոնավոր կերպով ուժ էր կիրառում՝ ընդդիմության առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանին սատարողների ամենօրյա հավաքները Երևանի կենտրոնում ցրելու համար: Ապրիլի 10-ին ոստիկանությունը բերման ենթարկեց «Հիմա» երիտասարդական շարժման ակտիվիստ և ընդդիմությանը սատարող «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագրի պաշտոնակատար Հայկ Գևորգյանի 18-ամյա որդուն՝ Վահագն Գևորգյանին: Վահագն Գևորգյանը մասնակցում էր երեկոյան պարբերաբար իրականացվող քաղաքական զբոսանքներին Հյուսիսային պողոտայում, որն Ազատության հրապարակին հարող լայն հետիոտնային ճանապարհ է և հանդիսանում է 2008թ. փետրվարին իրականացվող բողոքի ակցիաների անցկացման վայրը: Կալանավորվելուց հետո Գևորգյանին մեղադրանք ներկայացվեց զբոսանքները ցրող ոստիկաններից մեկին վիրավորելու և նրա վրա հարձակվելու համար: Գևորգյանը չընդունեց մեղադրանքը և հայտարարեց, որ ընդդիմության ակտիվիստների կողմից զբոսանքի ժամանակ կատարված նկարահանումը կհերքի ոստիկանության մեղադրանքը: Սակայն դատարանը հրաժարվեց ուսումնասիրել տեսաերիզը և իր որոշման համար հիմք ընդունեց ոստիկանության ցուցմունքը: Սեպտեմբերի 12-ին Գևորգյանը մեղավոր ճանաչվեց և դատապարտվեց մեկ տարվա ազատազրկման և 80000 ՀՀ դրամ տուգանքի (մոտ 210 ԱՄՆ դոլար). սակայն Գևորգյանը խուսափեց ազատազրկումից Ազգային ժողովի կողմից հաստատված հունիսի 19-ի համաներմամբ:

Ապրիլի 21-ին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ հայտարարությամբ՝ վիճարկելով Երևանի կենտրոնում երեկոյան քաղաքական զբոսանքներն արգելելու մասին ոստիկանության բացատրությունը: 2008թ. ոստիկանությունը պարբերաբար ուժ էր կիրառում՝ ցրելու հավաքված ամբոխը և ժամանակավոր բերման էր ենթարկում տասնյակ ցուցարարների. այս գործելաճը շարունակվեց տարվա ընթացքում: Մարդու իրավունքների պաշտպանը մերժում էր ոստիկանության այն տրամաբանությունը, որ զբոսանքները խանգարում են տեղի առևտրին՝ նշելով, որ ձեռնարկություններից ստացված բողոքները բավարար հիմք չեն հանդիսանում՝ զբոսանքներն արգելելու համար: Մարդու իրավունքների պաշտպանը լրատվամիջոցներին հայտնեց, որ ոստիկանության գործողությունները, որոնց մի մասը ներառում էր ընդդիմության ակտիվիստների կարճաժամկետ կալանավորում, հակասում էին հանրահավաքների և ցույցերի մասին օրենքին: Ոստիկանությունը սկսեց խանգարել «զբոսանքներին» ապրիլի 8-ին՝ ուղարկելով բազմաթիվ ոստիկաններ ու երբեմն ուժ կիրառելով: Որոշ դեպքերում դիվանագետ դիտորդներն ականատես են եղել, թե ինչպես են ոստիկաններն ակտիվիստներին պողոտայից հարյուրավոր մետրեր հեռու տանում: Ոստիկանության գործողությունների հետևանքով քաղաքացիներին նաև թույլ չէր տրվում քայլել հետիոտնի համար նախատեսված տարածքով, որը երեկոյան ժամերին սահմանափակվում էր կամ փակվում:

Մայիսի 1-ին՝ Երևանի ավագանու ընտրությունների քարոզարշավի պաշտոնական մեկնարկի նախօրեին, ՀԱԿ-ն անցկացրեց տարվա մեջ իր երկրորդ հանրահավաքը,

որն արտոնվել էր իշխանությունների կողմից, սակայն անվտանգության մեծաթիվ ուժեր ներկա էին գտնվում: Իշխանությունները մերժեցին հանրահավաքից հետո Երևանի կենտրոնով երթ անցկացնելու կազմակերպիչների խնդրանքը: Չնայած արգելքին՝ ոստիկանությունը թույլ տվեց անցկացնել երթը: Ինչպես հանրահավաքը, այնպես էլ երթը խաղաղ ընթացան: Ստացվել են մի շարք արժանահավատ զեկույցներ մարզերից ցուցարարների մուտքը դեպի մայրաքաղաք կանխելու ոստիկանության ջանքերի մասին, իսկ ընդդիմությունը բողոքել է խոշոր մայրուղիների վրա ոստիկանության հսկիչ անցակետերի համար: Ըստ լրատվամիջոցների մայիսի 2-ի հաղորդումների՝ Երևան բերող ավտոճանապարհները մեկ օր առաջ արգելափակված են եղել, իսկ հանրային տրանսպորտի աշխատանքը ժամանակավորապես դադարեցվել է մինչև հանրահավաքի վերջը: Ոստիկանությունը հրաժարվել է, որ հսկիչ անցակետեր են տեղադրվել՝ դեպի Երևան եկողների մուտքը սահմանափակելու համար՝ նշելով, որ իրենք անցկացրել են սովորական խուզարկումներ անօրինական զենքի հայտնաբերման նպատակով: Հսկիչ անցակետերը դրվեցին այն բանից հետո, երբ ոստիկանությունը հայտարարեց մեկամսյա արշավ անօրինական զինամթերքի դեմ, որը գրեթե ճշգրտորեն համընկավ Երևանի ավագանու ընտրությունների քարոզարշավի մեկամսյա ժամանակահատվածի հետ: Տեղի որոշ դիտորդներ զինամթերքի ստուգումները համարում էին պատրվակ՝ ընտրության նախընտրական քարոզարշավը ճնշելու համար:

Մայիսի 10-ին և 11-ին անհայտ անձանց մի խումբ Երևանի Ավան թաղամասում հարձակվեց ՀԱԿ-ի մի քանի անդամների վրա, երբ նրանք նյութեր էին բաժանում՝ կապված Երևան քաղաքի ընտրությունների հետ: ՀԱԿ-ի երեք անդամներ՝ Օֆելյա Մարգարյանը, Աստղիկ Աղեկյանը և Ամալյա Պողոսյանը, մարմնական վնասվածքներ ստանալուց հետո հիվանդանոց տեղափոխվեցին: Մայիսի 11-ին ոստիկանությունը քրեական գործ հարուցեց հարձակման հատկանիշներով, որը հետո օգոստոսի 26-ին փակվեց, քանի որ հնարավոր չէր պարզել հարձակվողների ինքնությունը:

Հունիսի 1-ին՝ Երևանի քաղաքապետի վիճահարույց ընտրությունների հաջորդ օրը, ՀԱԿ-ը հանրահավաք անցկացրեց, որն արտոնված էր իշխանությունների կողմից: Ստացվել են արժանահավատ զեկույցներ դեպի Երևան բերող խոշոր մայրուղիների վրա հանրահավաքից առաջ տեղակայված հսկիչ անցակետերի մասին: Դիվանագիտական դիտորդները հաստատել են հսկիչ անցակետերի առկայությունը և ոստիկանության կողմից ակտիվ կերպով ավտոբուսների, միկրոավտոբուսների և սեփական մեքենաների կանգնեցման դեպքերը: Լրատվամիջոցներից մեկը հաղորդում էր, որ մի ոստիկան ժխտել է, որ Երևան բերող փոխադրամիջոցների սահմանափակում տեղի է ունենում միայն ընդդիմության հանրահավաքներից առաջ՝ հիշեցնելով զինամթերք և թմրադեղեր փնտրելու օպերատիվ միջոցառման մասին: Այն օրերին, երբ ընդդիմության հավաքներ նախատեսված չեն եղել, ոստիկանության հսկիչ անցակետերի մասին հաղորդումներ չեն ստացվել:



Հուլիսի 1-ին քաղաքացիական հագուստով ոստիկանները բախվեցին ՀԱԿ-ի երիտասարդ ակտիվիստների հետ Երևանի կենտրոնի Աբովյան փողոցում, երբ վերջիններս թռուցիկներ էին բաժանում հուլիսի 2-ի ՀԱԿ-ի հանրահավաքի վերաբերյալ: Երկու երիտասարդ վնասվածք ստացան և հիվանդանոց տեղափոխվելու անհրաժեշտություն առաջացավ: Երիտասարդները հայտարարեցին, որ իրենց հարվածել են ձեռքով և ոտքով և ատրճանակի կոթով: Ոստիկանությունը հայտարարեց, որ միջադեպի ժամանակ հարձակում է եղել ոստիկանների վրա, երբ նրանք փորձել էին կանգնեցնել ենթադրյալ քաջքշուկը 40-50 երիտասարդների միջև: Ոստիկանությունը նշեց, որ միջադեպի ժամանակ երեք ոստիկան վիրավորվել է:

Մի երիտասարդ՝ Տիգրան Առաքելյանը կալանավորվել է հուլիսի 5-ին և հուլիսի 8-ին նրան մեղադրանք է առաջադրվել խուլիգանության և պաշտոնատար անձին դիմադրություն ցույց տալու հատկանիշներով՝ կապված հուլիսի 1-ի միջադեպի հետ: Սեպտեմբերի սկզբին Առաքելյանը հացադուլ հայտարարեց, երբ գտնվում էր դատապարտյալների հիվանդանոցում՝ պահանջելով իր ազատումը: Նա տեղափոխվել էր հիվանդանոց հուլիսի 15-ին առողջական լուրջ խնդիրների հետ կապված բողոքներ ունենալով, որոնք ըստ նրա ոստիկանների կողմից գլխին հասցված վնասվածքների հետևանքն էին: Սեպտեմբերի 7-ին Առաքելյանը հայտարարեց, որ չնայած իր վատթարացող առողջությանն իրեն անազատության մեջ պահելը վկայում է այն մասին, որ իրեն հետապնդում են իր քաղաքական հայացքների համար: Օգոստոսի 31-ին Առաքելյանի կալանքի ժամկետը երկարաձգվեց այն բանից հետո, երբ նրա կալանքի երկամսյա ժամկետն ավարտվելուն մոտ էր: Սեպտեմբերի 28-ին ոստիկանությունն Առաքելյանի դեմ մեկ այլ մեղադրանք ևս ավելացրեց՝ պետական պաշտոնյայի վրա հարձակում գործելու հատկանիշներով, որով, դատապարտվելու դեպքում, նրա հնարավոր ազատազրկման ժամկետը երկարում էր 5-ից մինչև 10 տարի: Հոկտեմբերի 8-ին իշխանություններն ազատ արձակեցին Առաքելյանին՝ հայտարարելով, որ նրա գործով քննությունների մեծ մասն ավարտվել է և Առաքելյանը չի խոչընդոտի քննությանը, եթե ազատության մեջ գտնվի: Որպես ազատ արձակելու պատճառ Գլխավոր դատախազությունը նույնպես հայտարարեց, որ Առաքելյանը բուժօգնության կարիք ունի: Հուլիսի 11-ին և 13-ին համապատասխանաբար երկու այլ երիտասարդի՝ Սահակ Մուրադյանին և Հերբերթ Գևորգյանին, նույնպես մեղադրանք առաջադրվեց հուլիսի 1-ի միջադեպի կապակցությամբ: Դեկտեմբերի 15-ին քրեական գործը ընդդիմության բոլոր երեք ակտիվիստների դեմ կարճվեց՝ փաստերի բացակայության պատճառով: Ըստ պաշտոնական տեղեկությունների հուլիսի 1-ի միջադեպին ներգրավված երեք ոստիկաններին մեղադրանք չի առաջադրվել երիտասարդներին հասցրած ֆիզիկական վնասվածքների համար, քանի որ սահմանվել է, որ նրանց գործողությունները եղել են օրենքի շրջանակում:

Տարվա ընթացքում ժամանակ առ ժամանակ կառավարությունը շարունակել է սահմանափակել փակ դռների ետևում հանդիպումներ անցկացնելու քաղաքացիների իրավունքը՝ մի գործելաճ, որ սկսվել է 2008թ. հետընտրական իրադարձություններից

հետո: 2008թ. դեկտեմբերին տեղի հասարակական կազմակերպությունների մի խումբ հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ քաղաքացիական հասարակության խմբերին շարունակաբար խոչընդոտել են իրացնել սոցիալական և քաղաքական խնդիրների շուրջ հանդիպումներ կամ միջոցառումներ անցկացնելու իրավունքը: Ըստ հասարակական կազմակերպությունների՝ որոշ հյուրանոցներ նշել են, որ իշխանությունների կողմից հրահանգ ունեն դահլիճները վարձով չտալ այնպիսի միջոցառումների համար, որոնք կարող են քաղաքական համարվել և յուրաքանչյուր անգամ ճշտել համապատասխան պաշտոնյաների հետ: Այս հայտարարությունները հիմնավորվեցին մի քանի աշխատակիցների կողմից: Փակ հանդիպումների ենթադրյալ սահմանափակումը շարունակվեց տարվա ընթացքում: Մարտի 9-ին «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ – Հայաստան» կազմակերպությունը հայտարարեց, որ մարտի 6-ին տեղական հյուրանոցներից մեկն անսպասելիորեն հրաժարվել է մարդու իրավունքների վերաբերյալ նախատեսված համաժողով անցկացնելու կապակցությամբ կազմակերպությանը տարածք տրամադրելու իր գրավոր որոշումից: Համաժողովն այնուամենայնիվ տեղի է ունեցել տեղական համալսարանում, որին մասնակցել են ներկայացուցիչներ կառավարությունից, քաղաքացիական հասարակությունից և միջազգային կազմակերպություններից: Մեկ այլ առիթով տեղի հյուրանոցներից մեկը երկու անգամ մերժել է կլոր սեղանի քննարկում անցկացնելու համար «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ – Հայաստան» կազմակերպության տարածք տրամադրելու խնդրանքները. այն նախատեսում էր քննարկել Եվրոպական հանձնաժողովի զեկույցը: Երեք հյուրանոցներ նույնպես մերժել են հանդիպման տարածք հատկացնելու վերաբերյալ կազմակերպության խնդրանքը, որպեսզի այն մեկօրյա համաժողով անցկացնի՝ ռազմավարական դատավարություն թեմայով:

Եղել են բազմաթիվ այլ դեպքեր, երբ իշխանությունները սահմանափակել են հավաքների ազատությունը:

Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ օգոստոսի 20-25-ին Գլխավոր դատախազությունը գործ հարուցեց ոստիկանության չորս աշխատակցի դեմ «պաշտոնական լիազորություններն անցնելու» հատկանիշներով՝ 2008թ. մարտին քաղաքացիների վրա իրենց ենթադրյալ հարձակումների համար, երբ անվտանգության ուժերն ուժի կիրառմամբ ցրում էին Ազատության հրապարակի ցուցարարներին: Ցուցարարներից շատերը փախան հրապարակից և վերախմբավորվեցին քաղաքի կենտրոնի տարբեր հատվածներում, իսկ որոշ դեպքերում ոստիկանները հետևում և հետապնդում էին ցուցարարներին երկար հեռավորության վրա, երբ նրանք փախչում էին: Չորս ոստիկաններից երկուսը մեղադրվել են ուժ կիրառելու և քաղաքացիներին ռետինե մահակներով հարվածելու համար Հանրապետության հրապարակում, որն Ազատության հրապարակից մոտ չորս խաչմերուկ հեռավորության վրա է: Դեկտեմբերի 25-ին Երևանի դատարանը երկու ոստիկաններին մեղադրեց «անհամաչափ ուժ կիրառելու» համար և

դատապարտեց երկու տարի ազատազրկման: Դատարանը նաև որոշեց, որ ոստիկանների վրա տարածվում է հունիսի 19-ին հայտարարված համաներումը և նրանք ազատազրկման չեն ենթարկվի, սակայն նրանց արգելեց իրավապահ մարմիններում կամ պետական կառույցներում աշխատել մեկ տարի: Մյուս երկու ոստիկաններին մեղադրանք էր առաջադրվել այն բանից հետո, երբ խորհրդարանական հատուկ հանձնաժողովի կողմից դեպքերի վերաբերյալ հարցումների ժամանակ ներկայացվեցին երկու տեսանյութ, որտեղ նրանք հարձակվում էին քաղաքացիների վրա Մաշտոցի պողոտայի վրա գտնվող բացօթյա շուկայում, որը նույնպես գրեթե չորս երկար խաչմերուկով հեռու է Ազատության հրապարակից: Գլխավոր դատախազությունը սկսեց փնտրել ոստիկանների կողմից հարձակման ենթարկված երիտասարդներին՝ համոզվելու համար, որ հարձակումն իրոք տեղի է ունեցել: Թեև երկու դեպքերում էլ հարձակման ենթարկված քաղաքացիներին գտնել հնարավոր չի եղել, սակայն դեկտեմբերի 17-ին Երևանի դատարանը երկու ոստիկաններին մեղադրեց «անհամաչափ ուժ կիրառելու» համար և դատապարտեց երեք տարի ազատազրկման: Սակայն դատարանը որոշեց, որ ոստիկանների վրա տարածվում է հունիսի 19-ին հայտարարված համաներումը և նրանք ազատազրկման չեն ենթարկվի, սակայն նրանց արգելեց իրավապահ մարմիններում կամ պետական կառույցներում աշխատել մեկ տարի:

### ***Միավորումներ կազմելու ազատություն***

Միավորումներ կազմելու ազատությունն ամրագրված է Սահմանադրությամբ, և ընդհանուր առմամբ կառավարությունը գործնականում հարգել է այն: Այնուամենայնիվ, բոլոր քաղաքական կուսակցությունների, միությունների, աշխարհիկ և կրոնական կազմակերպությունների գրանցման պահանջները շարունակել են մնալ խրթին: Օրենքով սահմանվում է, որ քաղաքացիները, բացառությամբ զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողների, իրավունք ունեն կազմելու միություններ, ներառյալ՝ քաղաքական կուսակցություններ և արհմիություններ:

### **գ) Կրոնի ազատություն**

Կրոնի ազատությունն ամրագրված է Սահմանադրությամբ, սակայն օրենքով կան որոշ սահմանափակումներ փոքրամասնական կրոնական խմբերի հարող անձանց կրոնական ազատության մասով: Կառավարությունն ընդհանուր առմամբ չի կիրառել կրոնական ազատությունը սահմանափակող իրավական դրույթները: Հայ առաքելական եկեղեցին համարվում է ազգային եկեղեցի և ունի մի շարք արտոնություններ, որոնք չեն գործում այլ հավատքների համար: Օրենքը չի պարտադրում հասարակական կազմակերպությունների, այդ թվում կրոնական կազմակերպությունների գրանցում: Սակայն միայն գրանցված կառույցներն են, որ ունեն իրավաբանական անձի կարգավիճակ և կարող են հրապարակել ավելի քան

1000 տպաքանակով թերթեր կամ ամսագրեր, վարձակալել հանդիպման վայրեր, հեռարձակել հաղորդումներ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, կամ պաշտոնապես հովանավորել օտարերկրյա այցելուներին վիզաների տրամադրման հարցում. այնուամենայնիվ անհատ անդամների կողմից այս կարգի գործունեության որևէ արգելք չկա: Կառավարության կողմից կրոնական խմբի գրանցումը մերժելու դեպքեր չեն գրանցվել:

Օրենքով արգելվում, բայց չի սահմանվում «հոգեորությունը», որը ոչ իրավական տերմին է, որը տեղում ընկալվում է բնութագրելու թե դավանափոխությունը, և թե հարկադիր կրոնափոխությունը: Հոգեորության արգելքը վերաբերում է բոլոր խմբերին, այդ թվում և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն: Թեպետ օրենքն արգելում է արտերկրում կենտրոններ ունեցող հարանվանությունների օտարերկրյա ֆինանսավորումը, սակայն իշխանություններն այս արգելքը չեն կիրառում: Գրանցված կրոնական կազմակերպությունների մեծ մասը հաշվետու ժամանակաշրջանում չի հայտնել իրենց գործունեության ճանապարհին ի հայտ եկած զգալի իրավական խոչընդոտների մասին:

Չնայած երկրի օրենսդրությամբ դավանական նկատառումներով զինձառայությունից խուսափողներն իրավունք ունեն անցնել այլընտրանքային ծառայություն, սակայն այլընտրանքային ծառայության նկատմամբ հսկողությունն իրականացնում են զինձառայողները, որի պատճառով Եհովայի վկաների անդամները շարունակում են հրաժարվել այլընտրանքային ծառայությունից: Ըստ Եհովայի վկաների փաստաբանների տարեվերջի դրությամբ խմբի 76 անդամներ եղել են բանտում՝ կրելով պատիժ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար:

### ***Ոստահարումներ և խտրականություն հասարակության կողմից***

Ըստ դիտորդների ընդհանուր հասարակությունը բացասական վերաբերմունք ունի կրոնական փոքրամասնությունների հանդեպ: Տեղական փորձագետները սակայն գտնում են, որ այս վերաբերմունքը չի անդրադառնում անձնական և բարիդրացիական հարաբերությունների վրա, այլ ուղղակի կա ընդհանուր ընկալում, որ փոքրամասնական կրոնական խմբերը խարխլում են պետության սոցիալական կարգը: Փոքրամասնական կրոնական խմբերը ժամանակ առ ժամանակ թիրախ են հանդիսացել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սպասավորների թշնամական քարոզների համար, և փոքրամասնական կրոնական խմբերը զգացել են խտրականության ու անհանդուրժողականության դրսևորումներ հասարակության կողմից, այդ թվում՝ աշխատավայրում: Հեռուստաընկերություններն իրենց եթերում Հայկական եկեղեցուց զատ մյուս հարանվանությունները քամահրանքով պիտակավորել են որպես «աղանդներ» ու բացասական հաղորդումներ են հեռարձակել դրանց մասին:

Երկրում հրեա բնակչությունը կազմում է 500-1000 մարդ: Հակահրեական բռնությունների ու պղծումների մասին հաղորդումներ տարվա ընթացքում չեն գրանցվել:

Առավել մանրամասների համար տես՝ 2009 թ. Միջազգային կրոնական ազատության մասին զեկույցը [www.state.gov/g/drl/rls/irf/](http://www.state.gov/g/drl/rls/irf/):

**դ) Տեղաշարժվելու ազատություն, ներքին տեղահանված անձինք, փախստականների պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձինք**

Չնայած օրենքով ապահովվում է երկրի ներսում տեղաշարժվելու, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը, սակայն գործնականում որոշ սահմանափակումներ են եղել: Ներքին տեղահանված անձանց, փախստականներին, վերադարձող փախստականներին, ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով կառավարությունը համագործակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի (UNHCR) և մարդասիրական կազմակերպությունների հետ:

Տարվ ընթացքում եղել են բազմաթիվ արժանահավատ հաղորդումներ առ այն, որ Երևանից դուրս բնակվող քաղաքացիների տեղաշարժը, մայրաքաղաքում ընդդիմության հանրահավաքներին մասնակցելու նպատակով, սահմանափակվել է:

Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է մեկ օրվա ընթացքում հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (մոտ 3 ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր տարվա համար: 2008թ. հոկտեմբերին կառավարությունը վերացրեց հաշվառումից դուրս գալու պահանջն արտագաղթողների համար, որը շատերի կողմից դիտարկվում էր որպես լայնորեն կոռումպացված մի դժվարին գործընթաց:

Օրենքը չի արգելում հարկադիր աքսորը, բայց կառավարության կողմից դրա կիրառելու վերաբերյալ հաղորդումներ չեն եղել:

***Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)***

Ադրբեջանի հետ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ընթացքում կառավարությունը սահմանային գոտիներից տարհանել է մոտավորապես 65000 տնային տնտեսություն, բայց մեծամասնությունը հետո վերադարձել են իրենց բնակավայրերը կամ բնակություն հաստատել այլ վայրերում: Մնացած ՆՏԱ-ներից մոտ երկու երրորդը չէին կարող վերադառնալ իրենց գյուղերը, քանի որ դրանք շրջապատված են ադրբեջանական տարածքներով, իսկ մյուսները նախընտրում են չվերադառնալ սոցիալ-տնտեսական վատ պայմանների պատճառով, կամ վախենում են ականապատ դաշտերից: Փախստականների նորվեգական խորհրդի և Տարածքային

կառավարման նախարարությանն առընթեր միգրացիայի գործակալության 2005թ. համատեղ կատարած քարտեզագրման ուսումնասիրության համաձայն երկրում բնակվող ներքին տեղահանված անձանց թիվը կազմում էր 8399 հոգի: Հետագա ուսումնասիրություններ ՆՏՍ-ների ընթացիկ թիվն հաշվարկելու նպատակով չեն կատարվել: 2008թ. սեպտեմբերին իշխանությունները հաստատել են վերաբնակեցման մի ծրագիր՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում տեղահանված 626 ընտանիքների համար. սակայն ըստ պետական պաշտոնյաների ծրագրի իրականացման համար չկային ֆինանսական միջոցներ:

### ***Փախստականների պաշտպանություն***

Երկիրը միացել է 1951թ. ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիային և դրա 1967թ. Արձանագրությանը: Օրենքով նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ:

Հունվարի 24-ին գործողության մեջ մտավ Փախստականների և ապաստանի մասին նոր օրենքը, որն արտացոլում է փախստականների պաշտպանության վերաբերյալ 1951թ. կոնվենցիայի հիմնական սկզբունքները, ինչպես նաև այս ոլորտում տեղ գտած զարգացումները, որ տեղ են գտել կոնվենցիայի վավերացումից հետո: Ապաստան հայցողների և փախստականների ընդունման ու նրանց հանդեպ վերաբերմունքի մասով հարցերի գերակշիռ մասը ներդաշնակեցվել և համապատասխանեցվել են միջազգային ստանդարտներին՝ երաշխավորելով հարգանք ապաստանի իրավունքի և ազգային անվտանգության նկատառումների նկատմամբ:

Գործնականում իշխանություններն ապահովել են պաշտպանություն արտաքսման ու փախստականներին վերադարձի հարցում՝ թույլ չտալով, որ նրանք վերադառնան այնպիսի մի երկիր, որտեղ նրանց կյանքին կամ ազատություններին վտանգ է սպառնում՝ ելնելով նրանց ռասայից, կրոնից, ազգությունից, որևէ սոցիալական խմբի անդամակցությունից և քաղաքական դիրքորոշումներից: Տարվա ընթացքում իշխանությունները նաև ապահովել են ժամանակավոր ապաստան: Ըստ Միգրացիայի գործակալության տվյալների տարվա ընթացքում ապաստան են հայցել ընդհանուր առմամբ 66 հոգի. տարվա ընթացքում կառավարությունն ապաստան է տրամադրել 33 հոգու և մեկ հոգու շնորհել է փախստականի կարգավիճակ:

Ապաստան տրամադրելու համար գործում է սահմանված ընթացակարգ, որը ներառում է ապաստան հայցողին անօրինական մուտքի համար ներման շնորհումը և երկրի տարածք ապաստան հայցողի մուտքին առնչվող հարցերը: Մակայն անփորձ սահմանապահների հաճախակի ռոտացիան և ապաստանի հարցերի վերաբերյալ ոչ խորն իմացությունը երբեմն օդանավակայաններում և ցամաքային սահմանակետերում փախստականների ձևակերպման ձգձգումների ու դժվարությունների տեղիք էին տալիս: Ինստիտուցիոնալ հզորությունների

բացակայության պատճառով իշխանություններն ապաստան հայցողներին մշտական բնակության իրավունք տալուց հետո հաճախ դժվարանում էին նրանց հասարակությանն ինտեգրելու հարցում: Փախստականներին ու ապաստան հայցողներին տրամադրվող ժամանակավոր կացարանները հաճախ չեն ունենում համարժեք միջոցներ ու գտնվում են վատ պայմաններում: Փախստականներն ունեն սոցիալ-տնտեսական նույն խնդիրները, ինչ ընդհանուր բնակչությունը:

***ՄԱՍ 3. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ.  
ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ***

Չնայած օրենքով քաղաքացիներին տրված է խաղաղ եղանակով իշխանափոխություն կատարելու իրավունք, գործնականում այս իրավունքը սահմանափակվել է ընտրությունների անցկացման ժամանակ կրկնվող, նշանակալի խախտումների պատճառով:

***Ընտրություններ և քաղաքական մասնակցություն***

2005թ. սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների համաձայն՝ երկիրը մայիսի 31-ին անցկացրեց Երևան քաղաքի ավագանու (65 անդամ) և Երևանի քաղաքապետի, թեև անուղղակի, առաջին ընտրությունները (1991թ. անկախացումից ի վեր, մայրաքաղաքի քաղաքապետերին նշանակում էր հանրապետության Նախագահը): Օրենսդրության համաձայն՝ քաղաքի նոր ավագանում 40 տոկոսից ավելի տեղեր շահած հաղթող քաղաքական կուսակցության ընտրացուցակը գլխավորող թեկնածուն ինքնաբերաբար դառնում է քաղաքապետ: Մայիսի 31-ին համամասնական ընտրակարգով մրցում էին վեց կուսակցություն և մեկ դաշինք, այդ թվում՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), իշխող կոալիցիայի գործընկեր «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀ), իշխող կոալիցիայի գործընկեր «Օրինաց երկիրը» (ՕԵԿ), Հայ հեղափոխական դաշնակցությունը, «Հայ ազգային կոնգրես» դաշինքը (ՀԱԿ), «Ժողովրդական կուսակցությունը» և Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունը:

Ընտրություններն անցան զգալի խախտումներով: Խնդիրներից էին իշխող կոալիցիայի կուսակցությունների և թեկնածուների նկատմամբ բարենպաստ վերաբերմունքը, ընտրական հանձնաժողովների կազմի անհամաչափությունը հոգուտ իշխող կուսակցությունների, քվեաթերթիկների լցումումների դեպքերը, ձայներ գնելու, դիտորդներին կաշառելու փորձերի, Երևանում չբնակվողներին ավտոբուսով Երևան քվեարկելու բերելու մասին հաղորդումները, ընտրողներին ահաբեկելը, լրագրողների, դիտորդների և ընդդիմության վստահված անձանց դեմ բռնություններն ու ահաբեկումը, անձանց քաղաքացիական և քաղաքական իրավունքների սահմանափակումը, չարտոնված անձանց կամ թեկնածուի վստահված անձանց կողմից ընտրատեղամասերում աշխատանքները ղեկավարելը, բաց և բազմակի

քվեարկության դեպքերը և որոշ տեղամասերում մասնակցության կասկածելիորեն բարձր ցուցանիշները:

Ընտրություններից առաջ, Նախագահ Մարգարյանը մարտի 4-ին օգտվեց այն ժամանակ գոյություն ունեցող գործադիր իր լիազորությունից և Երևանի գործող քաղաքապետին փոխարինեց ՀՀԿ պաշտոնյա, այն ժամանակ Կենտրոն համայնքի թաղապետ Գագիկ Բեգլարյանը: Մի քանի օր առաջ Բեգլարյանին ընտրելով որպես կուսակցության ընտրացուցակը գլխավորող թեկնածու՝ ՀՀԿ-ն այսպիսով կարծես թե քաղաքապետի իր թեկնածուին տվեց գործող քաղաքապետ լինելու առավելությունը: Տեղական քաղաքական դիտորդները Նախագահի կողմից ընտրություններից առաջ Բեգլարյանի նշանակումը մեկնաբանեցին որպես հնարք՝ Բեգլարյանին ընտրություններում առավելություն տալու համար՝ հաշվի առնելով այն հաստատված գործելաոճը, երբ իշխանության թեկնածուներն իրենց հայեցողության տակ գտնվող վարչական ռեսուրսները օգտագործում են իրենց քարոզարշավի համար:

Ընտրությունների վերաբերյալ հունիսի 2-ի իր նախնական հայտարարության մեջ՝ ընտրություններ դիտարկող հանրապետության խոշորագույն կազմակերպությունը՝ «Ընտրությունը քոնն է» տեղական ՀԿ-ն նշեց, որ «քարոզարշավի ընթացքում լայնորեն գործադրվել է ադմինիստրատիվ ռեսուրսը»: «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ն գտնում էր, որ «գործող քաղաքապետ Գ. Բեգլարյանի կողմից քարոզարշավն ուղեկցվել է մայրաքաղաքի բոլոր համայնքներում խիստ ակտիվ, արագ տեմպերով և համատարած կերպով ընթացող ասֆալտապատման, աղբահանության և փողոցների լուսավորման աշխատանքներով: Սրանով, նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուները ծառայություններ են մատուցել ընտրողներին»: Նախքան ընտրարշավի սկսվելը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն անվճար բժշկական ծառայություններ էր տրամադրում բնակչության որոշ մասին: «168 ժամ» ընդդիմադիր օրաթերթին տված հարցազրույցում «Բարգավաճ Հայաստանի» կողմից քաղաքապետի թեկնածու՝ Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանը հերքել է ենթադրությունները՝ նշելով, որ նման ծառայություններն ավանդույթ են դարձել և պարբերաբար տրամադրվում են՝ անկախ ընտրություններից:

Ընտրարշավն ուղեկցվում էր բռնություններով ինչպես մայիսի 2-ի դրա պաշտոնական մեկնարկից առաջ, այնպես էլ հետո՝ ընթանալով իշխանամետ և ընդդիմադիր ուժերի բախումներով, ինչպես նաև իշխանամետ ուժերի միջև զինված բախումներով:

Տեղական որոշ դիտորդներ համարել են, որ ապրիլի 30-ին լրագրող Արգիշտի Կիվիլիյանի և մայիսի 6-ին Նվեր Մնացականյանի դեմ հարձակումները կապված էին Երևանի ընտրությունների հետ, քանի որ Կիվիլիյանը ընդդիմադիր հայացքներով հողվածներ էր տպագրել, իսկ Մնացականյանը ըստ որոշ դիտորդների՝ վարել էր անհաճո հարցազրույց ընտրարշավում ակտիվ ազդեցիկ գործարարներից մեկի հետ: (տես՝ Մաս 2.ա.):



Մայիսի 10-ին և 11-ին անհայտ անձինք հարձակվել են ընդդիմությանը սատարող կանանց վրա, ովքեր քարոզչական նյութեր էին բաժանում Երևանի Ավան թաղամասում, որի ընտրված թաղապետն այդ ժամանակ ՀՀԿ թեկնածուն էր, ով ընտրություններից հետո ընտրվեց Երևանի քաղաքապետի տեղակալ: Հարձակման կապակցությամբ քրեական գործ է հարուցվել, բայց հետագայում կասեցվել է ապացույցների բացակայության պատճառով:

Լրատվամիջոցների կողմից ընտրարշավի լուսաբանման իր կողմից իրականացված մոնիտորինգի հիման վրա «Երևանի մամուլի ակումբը» (ԵՄԱ) հունիսի 1-ին հայտնել է, որ այս ժամանակահատվածում Երևանի ավագանու ընտրություններում մրցող կուսակցություններին և դաշինքին վերաբերող լուսաբանումների 96 տոկոսը չեզոք է եղել: ԵՄԱ-ն նկատել է, որ «այս առումով Երևանի ավագանու ընտրությունները բավականաչափ տարբերվել են 2008թ. նախագահական ընտրություններից»: Սակայն ԵՄԱ-ն նկատել է, որ որոշ հեռուստաալիքներ հստակ նախապատվություն են տվել որոշ թեկնածուների ու կուսակցությունների և նկատել է, որ ընտրարշավի վճարովի եթերաժամանակն ամբողջությամբ օգտագործել են միայն իշխանամետ կուսակցությունները, ինչը ԵՄԱ-ի գնահատմամբ արտացոլում է քաղաքական գովազդի չափազանց թանկ սակագները, ինչը խափանել է հավասարության սկզբունքը:

Ապրիլի 21-ին ՀԱԿ-ը բողոք ներկայացրեց Սահմանադրական դատարան՝ վիճարկելով, որ տեղական ընտրությունների ժամանակ մարդկանց չպետք է թույլատրվի ներգրավվել ընտրացուցակներում, եթե նրանք չունեն տվյալ վայրում առնվազն մեկ տարվա հաշվառում: Մայիսի 8-ին Սահմանադրական դատարանը հիմնականում համաձայնեց ՀԱԿ-ի դիտողությունների հետ: Որոշման հետևանքով անվավեր ճանաչվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) փետրվարի 28-ին կայացրած որոշման կետը, որով ԿԸՀ-ն ընտրական օրենսգրքի մեկնաբանության հիման վրա թույլ էր տալիս անձանց ներառվել ընտրացուցակներում առանց մեկ տարվա հաշվառման պահանջի: ՀԱԿ-ը բողոքը ներկայացրեց ելնելով հաղորդումներից, որոնց համաձայն իշխող կուսակցությունները փորձում էին մայիսի քաղաքային ընտրությունների համար գրանցել Երևանում հաշվառում չունեցող անձանց:

2007թ. ի վեր մոտ 70 քաղաքացիներ, որոնց տները պետական կարիքների համար 2002թ. օտարվեցին կառավարության կողմից՝ Երևանի կենտրոնի Հյուսիսային պողոտայում բարձրակարգ բնակարանների և գրասենյակային շենքերի շինարարության համար տարածք ազատելու նպատակով, հայտարարում էին, որ իրենք չեն կարողանում քվեարկել ընտրությունների ժամանակ՝ ժամանակավոր հասցեներում հաշվառման հետ կապված խնդիրների հետևանքով: Թեև օրենքը թույլ է տալիս այս քաղաքացիներին վերահաշվառվել իրենց բնակության ժամանակավոր վայրում և ներառվել ընտրացուցակներում, նրանցից շատերը հավաստիացնում էին, որ չեն կարողացել դա անել վարձակալած բնակարանների տերերի կամ

հյուրընկալող հարազատների՝ դեմ լինելու պատճառով, քանի որ ոչ մի խումբն էլ չէր ցանկանում նրանց պաշտոնապես հաշվառել իրենց հասցեում՝ վախենալով իրենց գույքային իրավունքի ոտնահարումից:

Չնայած վերջին տարիներին Ընտրական օրենսգրքում կատարված բազմաթիվ փոփոխություններին՝ ընտրությունների վարչարարության մեջ կարևոր թերացումներ են եղել, որոնք սովոր են գցել ընտրական գործընթացի անադարտության վրա: Ի թիվս այլ թերացումների, ինչպես նախորդ ազգային և տեղական ընտրությունների ժամանակ, առանցքային ղեկավար պաշտոններ Երևան քաղաքի 439 ընտրական հանձնաժողովների (ընտրատեղամասեր) ճնշող մեծամասնությունում զբաղեցրել են կառավարամետ ուժերի կողմից նշանակված անձինք՝ վտանգելով ընտրության և ձայների հաշվարկի գործընթացների անկախությունն ու անկողմնակալությունը:

Մայիսի սկզբին ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունը, որը չէր մասնակցում ընտրություններին, սակայն Ազգային ժողովում ներկայացված լինելու հիման վրա ընտրական բոլոր հանձնաժողովներում ներկայացուցիչ ունենալու իրավունք ուներ, հայտարարեց, որ Մալաթիա-Մեբաստիա համայնքի տեղամասային 28 ընտրական հանձնաժողովներին (ընտրատեղամասեր) և հարակից Շենգավիթ համայնքի հինգ հանձնաժողովներին վերահսկող Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի (ԸԸՀ) իր անդամը համագործակցել է իշխանամետ կուսակցությունների հետ՝ առանց «Ժառանգություն» կուսակցության լիազորության: Այս զարգացմանը հետևեց «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչների բողոքը, որ ԸԸՀ իրենց անդամի վրա կամ ճնշում են գործադրել կամ նրան կաշառել են, որպեսզի թույլ տա իշխանամետ կուսակցություններին զբաղեցնել «Ժառանգության» համար նախատեսված տեղերը ԸԸՀ-ի ընտրատեղամասային 33 հանձնաժողովներում:

Քվեարկության և ձայների հաշվարկի ժամանակ Մալաթիա-Մեբաստիա համայնքում դիտարկվել և հաղորդվել են ընտրական լայնատարած խախտումներ. մի ընտրատարածք, որը շարունակաբար առանձնանում է ընտրակեղծիքների դիտարկված կամ հաղորդված աղաղակող դեպքերով: Երևանի մյուս ընտրատարածքներում ևս դիտարկվել և արձանագրվել են ընտրախախտումներ:

Ընտրությունները դիտարկած տեղական ՀԿ-ների գնահատմամբ ընտրությունների անցկացումն ուղեկցվել է թերություններով: «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ն (ԸՔ), որ դիտորդներ ուներ Երևանի բոլոր 439 ընտրատեղամասերում, իր հունիսի 2-ի նախնական հայտարարության մեջ նկատեց, որ ընտրությունների արդյունքում չի հաջողվել վերականգնել ընտրողների վստահությունը ընտրական գործընթացների հանդեպ: Ի թիվս այլ խախտումների՝ ԸՔ-ն հայտնել է, որ նկատվել են բաց քվեարկության, վստահված անձանց, դիտորդներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին ահաբեկելու և նրանց իրավունքները սահմանափակելու դեպքեր և չարտոնված անձանց ներկայություն ընտրատեղամասերում: Ըստ տեղական այլ դիտորդների ընտրատեղամասերից շատերում ընտրական

գործընթացը կարծես թե ղեկավարել են չարտոնված անձինք և իշխանական կուսակցությունների վստահված անձինք:

Թրանսփերենսի Ինտերնեյշնլ (ԹԻ) հակակոռուպցիոն ՀԿ-ի տեղական գրասենյակի ղեկույցը նշում էր ընտրախախտումների բազմաթիվ դեպքեր: Ըստ ԹԻ-ի Մալաթիա-Սեբաստիա համայնքի և Շենգավիթ համայնքի մի մասի ԸԸՀ-ում իրենց դիտորդների հանդեպ կիրառվել է ահաբեկում և ճնշում ԸԸՀ-ի 33 ընտրատեղամասերից 16-ում և կաշառելու դեպքեր՝ 4 ընտրատեղամասերում: ԹԻ դիտորդները նաև նկատել են չարտոնված անձանց ներկայություն 12 ընտրատեղամասերում, քվեաթերթիկների լցոնումներ 13 ընտրատեղամասերում և բաց, բազմակի, ուղղորդված կամ ուրիշի փոխարեն քվեարկում 17 ընտրատեղամասերում:

Ընտրության օրը և ձայների հաշվարկի ժամանակ էլեկտրոնային որոշ լրատվամիջոցներ հաղորդել են բազմաթիվ ենթադրյալ խախտումներ: Տեղական դիտորդների, լրատվամիջոցների և ընդդիմության կողմից հաղորդվել են ընտրության օրը քարոզչության դեպքեր, որն արգելված է օրենքով: Ի թիվս այլ դեպքերի, «Հետք» հետաքննող լրագրողների գործակալությունը հաղորդեց իշխող ՀՀԿ-ի օգտին բաց քվեարկության և քարոզչության դեպքերի մասին:

Հաղորդումներ են եղել ընտրության օրը տեղի ունեցած բռնությունների մասին: Մարդու իրավունքների պաշտպանը քննադատել է լրագրողների վրա իրականացված ոտնձգությունները՝ որպես մի երևույթ, «որոնք դարձել են օրինաչափություն բոլոր ընտրությունների ընթացքում»: Մարդու իրավունքների պաշտպանը նաև նշել է, որ մայիսի 31-ին Մալաթի-Սեբաստիա համայնքում ընդդիմադիր «168 ժամ» թերթի լրագրող Արմինե Ավետյանի և ԹԻ դիտորդ Սոնա Այվազյանի դեմ հարձակումը տեղի է ունեցել՝ ընտրատեղամասի հանձնաժողովի և ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ: Ընդհանուր առմամբ, դիտորդները և անհատները, որ ականատես են եղել ընտրախախտումների, նկատել են, որ ոստիկանության աշխատակիցները պասիվ են գտնվել ընտրատեղամասերում և դրանց շուրջ՝ խախտումները և բռնությունները կանխելու հարցում:

Երևանի Կենտրոն համայնքի ընտրատեղամասերից մեկում ՀՀԿ պատգամավոր Լևոն Սարգսյանը և նրա թիկնապահները ըստ հաղորդումների բռնություն են գործադրել ընդդիմադիր «Չորրորդ իշխանություն» թերթից Գոհար Վեզիրյանի և «Հայք» ընդդիմադիր թերթից Տաթև Մեսրոպյանի նկատմամբ: Ըստ հաղորդումների թիկնապահները նաև առգրավել են «168 ժամ» թերթի լրագրող Մարինե Խառատյանի ձայնագրիչը: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ հունիսի 1-ին քրեական գործ է հարուցվել խուլիգանության հատկանիշներով՝ ի պատասխան մամուլի այն հաղորդումների, որ Սարգսյանի թիկնապահները հարձակվել են Վեզիրյանի վրա. ըստ իրավապահ մարմինների թիկնապահները հայտնել են, որ Վեզիրյանը «խուլիգանական» հայտարարություններ է արել իրենց վերաբերյալ: Տարեվերջի դրությամբ այդ գործի հանգուցալուծումն անհայտ էր և թիկնապահների ենթադրյալ հարձակման վերաբերյալ որևէ պաշտոնական տեղեկություն չի տրամադրվել:

Տարեվերջի դրությամբ որևէ քրեական մեղադրանք չի առաջադրվել թիկնապահներին, իսկ լրագրողների վրա նշված մյուս հարձակումների կապակցությամբ հայտնի չէ քննություն սկսելու որևէ դեպք (տես՝ Մաս 2):

Ըստ գլխավոր դատախազության՝ տարվա ընթացքում ընտրությունների հետ կապված բռնությունների առնչությամբ երեք գործ է հարուցվել: Այդ գործերից մեկը կարճվել է, իսկ երկուսը կասեցվել են:

Թեև ԸՔ-ն հաղորդում էր, որ Անձնագրային և վիզաների վարչության կողմից պահպանվող ընտրացուցակների ճշգրտությունը բարելավվել էր, տեղական շատ դիտորդներ մտահոգություն են արտահայտել հաշվառված հազարավոր ընտրողների վերաբերյալ, որոնք այլևս Հայաստանում ֆիզիկապես չեն բնակվում և ընտրությունների ժամանակ չեն քվեարկում: Ըստ հաղորդումների, հաշվառված ֆիզիկապես բացակա ընտրողների անունները խաբեությամբ օգտագործվում են նրանց փոխարեն քվեարկելու համար:

Ընտրությունների ժամանակ զինձառայողների քվեարկությունը նույնպես հակասական էր: Ըստ ԿԸՀ որոշման՝ զինակոչված զինձառայողներին արգելվում էր ընտրությունների ժամանակ քվեարկել: Չնայած այս որոշմանը՝ ՀԱԿ դաշինքը հրապարակեց զինակոչիկների անունների մի ցուցակ, որն ըստ իրենց Պաշտպանության նախարարությունը պատրաստել էր ընտրությունների ժամանակ զինակոչիկների քվեարկությունը կազմակերպելու նպատակով: Իշխանությունները հերքեցին մեղադրանքները:

Միակ միջազգային կառույցը, որ հավատարմագրված էր ընտրությունները դիտարկելու համար՝ Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը, ուղարկել էր 12 դիտորդ՝ քվեարկությունը դիտարկելու համար: Թեև հունիսի 1-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ կոնգրեսը ընդհանուր առմամբ դրական գնահատական տվեց ընտրություններին, պատվիրակության նախագահը նշեց, որ «իրենց գոհունակությունն առ այն, որ քաղաքացիները ընտրում են քաղաքի ավագանուն, խաթարվեց քվեարկության ընթացքում տեղ գտած թերություններով»:

Ըստ ԿԸՀ-ի՝ վերահաշվարկի հայտեր են ներկայացվել 11 ընտրատեղամասերի արդյունքների կապակցությամբ: Որոշ վերահաշվարկներ ցույց տվեցին զգալի անհամապատասխանություններ և սխալներ ու վեց ընտրատեղամասերի արդյունքներն անվավեր ճանաչվեցին: Բացի այդ, ութ քրեական գործ հարուցվեց ձայների հաղորդած կամ արձանագրված կեղծման կապակցությամբ, որի համար մեղադրանք առաջադրվեց հինգ հոգու և նրանք դատապարվեցին ազատազրկման տարբեր ժամկետներով: Հետագայում, այնուամենայնիվ, բոլոր այդ անձինք ազատ արձակվեցին Ազգային ժողովի կողմից ընդունված հունիսի 19-ի համաներման արդյունքում:

Ընտրական հանձնաժողովները, ըստ հաղորդումների, շատ դեպքերում հրաժարվում էին գրանցել ընտրություններին առնչվող բողոքները և որոշ դեպքերում առանց պատճառի մերժում էին խնդրանքները: ՀԱԿ-ը պնդում էր, որ 18 բողոք է ներկայացրել Վարչական դատարան, որը պատասխանատու է նման բողոքների առնչությամբ վճիռ կայացնելու համար: 18 բողոքից ՀԱԿ-ը շահեց միայն մեկը: Դատարանը չբավարարեց բողոքների մեծ մասը, իսկ որոշ բողոքներ, ըստ հաղորդումների, չընդունեց: Տեղական դիտորդները դատավճիռները մեկնաբանեցին որպես քաղաքական շարժառիթներ ունեցող վճիռներ:

Հունիսի 6-ին ԿԸՀ-ն պաշտոնապես հայտնեց ընտրությունների վերջնական արդյունքները, որոնց համաձայն քաղաքի ավագանու 35 տեղը տրվում էր ՀՀԿ-ին, 17-ը՝ նրա կոալիցիոն գործընկեր Բարգավաճ Հայաստանին, իսկ 13-ը՝ նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած ՀԱԿ դաշինքին: ԿԸՀ երկու անդամ, որոնք ներկայացնում էին ընդդիմադիր «Ժառանգություն» և «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները հրաժարվեցին ստորագրել ԿԸՀ-ի ընտրական վերջնական արձանագրությունը: Հունիսի 8-ին ՀՀԿ անդամ Գագիկ Բեգլարյան պաշտոնապես վերստանձնեց Երևանի քաղաքապետի պաշտոնը:

Հունիսի 1-ին ՀԱԿ-ը հայտնեց, որ Տեր-Պետրոսյանի բնորոշմամբ «Հայաստանի պատմության ամենաալյանդակ ընտրությունից» հետո, իրենք կբոյկոտեն քաղաքի ավագանին: Ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունը, որը չէր մասնակցում ընտրություններին, մեծապես կիսում էր ՀԱԿ-ի գնահատականը և ընտրություններ նկարագրեց որպես «խայտառակ»: ՀՅԴ-ն նույնպես ընտրությունները համարեց կեղծված և հրաժարվեց ճանաչել պաշտոնական արդյունքների օրինականությունը՝ նշելով, որ վտանգ կա, որ նման ընտրությունները դառնում են «սոսկ իշխանություններին վերաարտադրելու գործընթաց»:

ԿԸՀ-ն, որի կազմում հիմնականում իշխանամետ անդամներ են, ընտրությունները գնահատեց մեծապես ազատ և արդար՝ հայտարարելով, որ իրենք քննել են ձայները կեղծելու վերաբերյալ ընդդիմության մեղադրանքները և դրանց մեծամասնությունը համարվել է ոչ հիմնավոր: Գլխավոր դատախազությունը նույնպես հայտարարեց, որ հետաքննել է ձայները կեղծելու վերաբերյալ ընդդիմության մեղադրանքները և դրանց մի մասը համարվել է ոչ հիմնավոր: Թեև իշխանամետ գործիչներից շատերը, ընտրությունների վերաբերյալ մեկնաբանություններ անելիս, ընդունում էին, որ անցկացման թերություններ են եղել, սակայն նրանցից ոչ ոք չասաց, որ դրանք բավականաչափ զգալի են եղել՝ ընտրության վերջնական արդյունքի վրա ազդելու համար:

Դեկտեմբերի 27-ին ավելի քան քսան հոգանոց խումբը Երևանի կենտրոնում խոչընդոտել և ծեծի են ենթարկել երիտասարդ չորս ակտիվիստների, երբ նրանք ընտրական նյութեր էին բաժանում 2010թ. հունվարին նախատեսված Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում ընդդիմության թեկնածու Նիկոլ Փաշինյանի օգտին: Հարձակվողները ծեծի ժամանակ, ըստ հաղորդումների, օգտագործել են

մետաղյա իրեր, և երիտասարդ ակտիվիստներից մի քանիսը լուրջ վնասվածքներ են ստացել և անհրաժեշտություն է առաջացել նրանց հիվանդանոց տեղափոխել: Ըստ ընդդիմության ներկայացուցիչների հարձակումն իրականացրել են արտահերթ ընտրությունների մեկ այլ թեկնածու, իշխանամետ «Ազգային միաբանություն» կուսակցության ներկայացուցիչ Արա Միմոնյանի և իշխող Հանրապետական կուսակցության կողմնակիցները: Միմոնյանը հերքեց մեղադրանքը: Ոստիկանությունը դեկտեմբերի 29-ին քրեական գործ հարուցեց դեպքի կապակցությամբ, որը տարեվերջին ընթացքի մեջ էր:

Խորհրդարանի 131 պատգամավորներից 12-ը կին են եղել, այդ թվում նաև երկու փոխխոսնակներից մեկը. եղել է երկու կին նախարար ու մեկ կին մարզպետ: Երևանու ավագանու կազմում կային 6 կանայք, իսկ 12 թաղապետերից ոչ մեկը կին չէր:

#### ***ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵՍԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ***

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ. այնուհանդերձ, կառավարությունն օրենքներն արդյունավետորեն կամ հավասարաչափ չի կիրառում և պաշտոնյաները հաճախ անպատժելիորեն կոռումպացված գործողությունների մեջ են ներգրավվում: Իշխանությունները շոշափելի միջոցներ չեն ձեռնարկել համակարգային կոռուպցիան կրճատելու ուղղությամբ, չնայած ստորին և միջին օղակի պաշտոնյաների նկատմամբ պարբերաբար իրականացվել է հետապնդումներ մանր կոռուպցիոն դրսևորումների հարցով, ինչպիսին է օրինակ՝ ծառայության դիմաց կաշառք պահանջելը:

Համաշխարհային բանկի կառավարման համաշխարհային ցուցանիշներն արտացոլում են, որ կոռուպցիան եղել է լուրջ խնդիր: Համաշխարհային բանկի կառավարման գծով տնօրենը հոկտեմբերին կատարած այցի ժամանակ հրապարակավ մտահոգություն հայտնեց պետական հիմնարկություններում կոռուպցիային հետամուտ լինելու կարիքի վերաբերյալ:

Հունվարից սկսած հանրային պաշտոնյաների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև տարեկան 8 միլիոն ՀՀ դրամը գերազանցող եկամուտ (մոտ 21000 ԱՄՆ դոլար) ունեցող քաղաքացիների համար սահմանված է եկամուտների հայտարարագրման մասին օրենսդրական պահանջ, որի համաձայն պարտավոր են իրենց ակտիվների մասին հայտարարագիր ներկայացնել մինչև ապրիլի 15-ը. Այնուհանդերձ, պարզ չէր, թե հանրային պաշտոնյաներն ու բարձր եկամուտներ ունեցող քաղաքացիներն ինչքանով էին հետամուտ օրենքին: Ըստ տեղական դիտորդների պատկան մարմինները չունենին կամք ու տեխնիկական հզորություններ հայտարարագրերում ներկայացված տվյալների ճշգրտությունը ստուգելու համար, որոնք հասարակության համար ամբողջովին հասանելի չէին, ու միջոցներ ձեռնարկելու այն անձանց դեմ, ովքեր թաքցնում էին իրենց եկամուտները:

Կոռուպցիայի կրճատմանն ուղղված կառավարության ծրագրերով տարվա ընթացքում շոշափելի արդյունքները շարունակել են մնալ սակավ: Կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի ու Հակակոռուպցիոն խորհրդի գործունեությանը շարունակել են վերաբերվել թերահավատորեն: Հոկտեմբերի 6-ին կառավարությունը հաստատեց 2009-2012թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը երկու տարի այն բանից հետո, երբ դրա շուրջ լայն քննարկումներ ընթացան Երևանում և մարզերում, և երբ այն տեղակայվել էր կառավարության կայքում: Տեղական դիտորդները շարունակում էին թերահավատ մնալ. այնուհանդերձ, նոր ընդունված ռազմավարությունը պարունակում էր համարժեք միջոցներ հակակոռուպցիոն հաստատություններն ամրապնդելու համար և կային բավարար ցուցիչներ՝ ռազմավարության իրականացման մոնիտորինգի համար:

Քաղաքացիական խմբերը, որ աշխատում էին կոռուպցիայի դեմ նշում էին, որ իշխանությունները շարունակում էին անտեսել լրատվամիջոցների հաղորդումները, որոնք ակնարկում էին պետական պաշտոնյաների կոռուպցիոն գործելաոճը: Ըստ Թրանսփերենսի Ինտերնեյշնլ կազմակերպության «Համաշխարհային կոռուպցիայի բարոմետր-2009 թ.» հարցման, որն անցկացվել է 2008թ. հոկտեմբերից փետրվար ժամանակահատվածում, երկրում հարցվածների 43 տոկոսն հայտնել է, որ 2008թ. ընթացքում տվել է կաշառք: Հարցվողները նշում էին, որ ամենաշատ կաշառք պահանջող հաստատությունը ոստիկանությունն է:

Տարվա ընթացքում իշխանություններն առգրավեցին պատգամավոր և ընդդիմության կողմնակից Խաչատուր Սուքիասյանին պատկանող մի ընկերություն: 2008թ. «Բջնի» հանրային ջրերի գործարանն առգրավվեց 4.5 միլիարդ դրամ (12 միլիոն դոլար) տույժի դիմաց, որը նշանակվել էր հարկային կեղծումների ու պետության սեփականություն հանդիսացող ջրային ռեսուրսների յուրացման համար. տեղական դիտորդներն այս գործողությունները դիտարկում էին որպես հաշվեհարդար 2008թ. նախագահական ընտրություններում Լևոն Տեր-Պետրոսյանին պաշտպանելու համար: Դեկտեմբերի 24-ին ընկերությունն ի վերջո վաճառվեց կառավարամետ մի գործարարի (տես՝ Մաս 1):

Նախագահ Սարգսյանի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական Վահրամ Ներսիսյանը փետրվարի 26-ին տված հարցազրույցում նշեց, որ բարձր պետական պաշտոններ զբաղեցնելը հարուստ գործարարների կողմից հակասահմանադրական է: Ներսիսյանը նշեց, որ չնայած սահմանադրությունն արգելում է, որ գործարարները հանրային պաշտոն զբաղեցնեն, սակայն շատ գործարարներ շրջանցում են օրենքը՝ իրենց ընկերությունները գրանցելով ազգականների անուններով, սակայն շարունակում են անձամբ տնօրինել դրանք: Նա նաև նշեց, որ երբ պետական պաշտոնյան գործարար է, նրա հավատարմությունը պետությունից շեղվում է դեպի իր անձնական շահերը, իսկ երբ այդ անձինք օգտագործում են իրենց պաշտոնեական դիրքն անհավասար պայմաններ սահմանելու և անարդարացի կերպով

մրցակիցներին շուկայից դուրս մղելու համար, դա բացասաբար է անդրադառնում երկրի գործարար միջավայրի վրա:

Մարտի 13-ին խաբեության և կաշառման մեղադրանքով ձերբակալվեց արտակարգ իրավիճակների նախարարի խորհրդականը: Հատուկ քննչական ծառայությունից ռադիոկայանին տրամադրած հաղորդագրությունում ասվում էր, որ պաշտոնյան՝ Սանատրուկ Սահակյանը կասկածվում էր ունի քաղաքացու ոստիկանության ակադեմիա ընդունելու համար վերջինիս ընտանիքից խաբեությամբ խոշոր չափի կաշառք ստանալու մեջ: Հատուկ քննչական ծառայության հաղորդման համաձայն Սահակյանը երիտասարդի ընտանիքին հավաստիացրել է, որ կաշառքի դիմաց նրան կընդունեն: Նոյեմբերի 9-ին Սահակյանը դատապարտվեց չորս տարվա ազատազրկման խաբեության ու պաշտոնեական կեղծման փորձի համար: Հետագայում հունիսի 19-ին հայտարարված համաներման հետ կապված նրա պատիժը 1/3-ով կրճատվեց և դարձավ 2 տարի 8 ամիս:

Ապրիլի 16-ին նախագահ Սարգսյանը կոչ արեց ոստիկանությանը վերջ դնել հայտնի անձանց հետ կապված փոխիրաձգությունների դեպքերին ու անօրինական զենք ու զինամթերք պահելուն, որը կարծես թե կապված էր մայիսի 31-ին նախանշվող Երևան քաղաքի ավազանու ընտրությունների հետ: Լուրջ մտահոգություն հայտնելով կրակոցների առնչությամբ նախագահ Սարգսյանը նշեց, որ խստացնելու է իրավապահների արձագանքը նման դեպքերում՝ զգուշացնելով, որ պատկան մարմինները խիստ միջոցներ են ձեռնարկելու, անգամ եթե խոսքը պաշտոնատար անձանց ազգականների մասին է:

Տարվա ընթացքում գրանցված կամ հնչեցված մի շարք խախտումների հետ կապված, որոնք հայտնի անձանց էին առնչվում և որոնցում ներքաշված էին իշխանական կուսակցության անդամներ կամ նրանց ազգականներ, հետաքննություն կամ քրեական վարույթ չի իրականացվել, որը տեղական դիտորդներին հուշում է կասկածներ ունենալ առ այն, թե արդյոք այս անձինք չեն օգտագործել իշխանական կուսակցությունում կամ իշխանություններում ունեցած իրենք քաղաքական կապերն իրավական հետապնդումից խուսափելու համար:

Ըստ լրատվամիջոցների հաղորդումների հունիսի 30-ին կառավարության բյուջետային գործունեության պաշտոնական աուդիտ իրականացնող մարմնի՝ Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Չաքարյանն Արմավիրի մարզում մասնավոր անհատներին վաճառված պետական հողատարածքների գների հետ կապված խախտումներ արձանագրեց: Չաքարյանը նշում էր, որ Վերահսկիչ պալատի կողմից հայտնաբերվել են դեպքեր, երբ հողատարածքները վաճառվել են շուկայական արժեքից զգալիորեն ցածր գներով: Չաքարյանը նշեց 10 հեկտար հողատարածքի նախնական վաճառքի մի դեպք, երբ մեկ հեկտարի համար վճարվել էր 35000 ՀՀ դրամ (մոտ 94 ԱՄՆ դոլար). իսկ երկու օր անց այս հողատարածքը վաճառվել էր 3.9 միլիոն դրամով (մոտ 10500 ԱՄՆ դոլար): Չաքարյանը նաև նշում էր, որ Փարաքար գյուղում շուկայականից ցածր գնով հողատարածքներ են վաճառվել՝ խաղատների ու



կահույքի վաճառասրահների կառուցման համար: Վերահսկիչ պալատի գրանցած խախտումների շարքում տեղ էին գտել նաև Արմավիր քաղաքի քաղաքաշինական ծախսերի հետ կապված խախտումները, որոնք կազմում 86 միլիոն դրամ (մոտ 232000 դոլար):

Հոկտեմբերի 7-ին Ձաքարյանն Ազգային ժողովին ներկայացրեց Վերահսկիչ պալատի 2008թ. տարեկան զեկույցը, որտեղ նշվում էր, որ Վերահսկիչ պալատը պետական կառույցներում տարվա ընթացքում արձանագրել էր 8 միլիարդ դրամի (մոտ 21 միլիոն դոլարի) հասնող ֆինանսական խախտումներ ու պետական միջոցների վատնում, որից մոտ 6 միլիարդ դրամը (16 միլիոն դոլարը) կարող է վերականգնվել: Տարեվերջի դրությամբ պաշտոնական աղբյուրները տեղեկություններ չէին ներկայացնում վատնումների հետ կապված գործերի ընթացքի վերաբերյալ:

Տարվա ընթացքում վերահսկիչ պալատը հրապարակեց տարբեր պետական կառույցներում տեղ գտած կոպիտ խախտումների ու ֆինանսական չարաշահումների բազմաթիվ փաստեր. Սակայն նախորդ տարիների նման այս գործերով հազվադեպ էին սկսվում քրեական հետապնդումներ: Ըստ Թրանսփերենսի ինտերնեյշնլ կազմակերպության տեղի գրասենյակի նախարարներն ու մարզպետները, որ առնչություն ունեին արձանագրված չարաշահումների հետ, ուղղակի գումարի մի մասը վերադարձրել են բյուջե և շարունակել իրենց աշխատանքը՝ առանց իրավական պատասխանատվության ենթարկվելու:

Համաձայն պաշտոնական վիճակագրության տարվա ընթացքում քննվել է կոռուպցիայի հետ կապված 451 գործ: Տարվա առաջին ինն ամիսների ընթացքում դատարանները դատապարտել են 146 հոգու, որից 65-ը պետական պաշտոնյաներ են: Պաշտոնյաների հետ կապված քննության ու դատապարտումների դեպքերի մեծ մասն առնչվում էին արդարադատության նախարարության ու ոստիկանության պաշտոնյաներին, ընդ որում բաժնի պետերին կամ ցածր օղակի այլ պաշտոնյաներին:

Մայիսի 25-ին ներկայացված լրատվական հաղորդմամբ նշվում էր, որ «Աքիլես» ավտովարորդների իրավունքների պաշտպանության կենտրոն» տեղական ՀԿ-ը պարզել է, որ կոռուպցիան արմատացած է ճանապարհային ոստիկանության բոլոր բաժանմունքներում: Ըստ ՀԿ-ի ճանապարհային ոստիկանների կողմից պահանջվող կաշառքի գումարը կազմում է 5000-ից 50000 ՀՀ դրամ (մոտ 13-ից 130 դոլար):

Թեև օրենքը սահմանում է կառավարության տեղեկատվության հասանելիության ու տարածման սկզբունքը, բայց գործնականում շատ կառույցներ և պաշտոնյաներ հազվադեպ են ապահովում այդ հասանելիությունը: Տարվա ընթացքում կառավարությունը դեռ չէր ընդունել տեղեկատվության հավաքումն ու տրամադրումը կարգավորող իրավական ակտերը, որոնք պահանջվում են և լրացնում 2003թ. ընդունված տեղեկատվության ազատության մասին օրենքը: Պաշտոնյաները տեղեկատվության տրամադրումը մերժելիս հղում են կատարել այս ակտերի բացակայությանը: ՀԿ-ներն առավել հաջողակ են եղել դատարանների միջոցով տեղեկատվություն ստանալու հարցում:

Հուլիսի 6-ին «Տեղեկատվական ազատության կենտրոն» ՀԿ-ի հայցին ի պատասխան վարչական դատարանը 50000 ՀՀ դրամ (մոտ 130 դոլար) գումարի չափով վարչական տույժ նշանակեց մարզային մի պաշտոնյայի, ով օրենքով սահմանված կարգով ՀԿ-ին տեղեկություններ չէր տրամադրել:

«Հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի հաղորդման հիման վրա ըստ նախկին բանտարկյալի պատմածի «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը ղեկավարվում էր կազմակերպված գաղտնի հանցավոր համակարգի կողմից, որտեղ առկա էին հսկայական չափերի հասնող կոռուպցիա, որում ներքաշված էր հիմնարկի վարչական անձնակազմը, շանտաժ, մոլախաղեր:

2008թ. ապրիլին «Տեղեկատվական ազատության կենտրոն» ՀԿ-ն հրապարակեց լրագրողների համար տեղեկատվության հասանելիության մասին հետազոտության արդյունքները, որտեղ ասվում էր, որ պաշտոնական տեղեկատվության հասանելիությունը լուրջ խնդիր է: Հետազոտությունը նշում էր, որ պաշտոնական տեղեկատվություն ստանալու հարցում հիմնական խոչընդոտը պաշտոնյաների մտածելակերպն է, ովքեր իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունը դիտարկում են որպես իրենց մասնավոր ունեցվածք: Այլ խոչընդոտներից են տեղեկատվությունը տեսակավորելու ու ապահովելու պաշտոնական ընթացակարգերի բացակայությունը, ինչպես նաև լրագրողների շրջանում տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքին լավատեղյակ չլինելու հանգամանքը:

***ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

Մարդու իրավունքների ոլորտի մի շարք տեղական և միջազգային խմբեր ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ ազատորեն հետաքննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները:

Տարվա ընթացքում երկրում գործել են տեղական անկախ իրավապաշտպան կազմակերպություններ և միջազգային կազմակերպությունների տեղական մասնաճյուղեր: Իշխանության իրավասու մարմինները հիմնականում չեն մերժել հանդիպել տեղական հասարակական կազմակերպությունների դիտորդների հետ և հետևել են որոշ հասարակական կազմակերպությունների առաջարկներին, մասնավորապես՝ սոցիալական, կրթական ու տեղական խնդիրներին առնչվող հարցերում: Իշխանությունները, սակայն, սովորաբար չեն արձագանքել ՀԿ-ների հնչեցրած մեղադրանքներին՝ կապված իրավապահ մարմինների կողմից վատ վերաբերմունքի ու չարաշահումների դրսևորումների հետ: Իշխանությունների

ընդհանուր արձագանքը նմանատիպ դեպքերում եղել այն, որ քննություն է իրականացվել ու մեղադրանքները չեն հիմնավորվել:

Հունվարից ձևավորվել է հասարակական գործիչներից կազմված հանրային խորհուրդը, որը ծառայում էր որպես ոստիկանության գործունեությունը հսկող դիտորդ: 2008թ. սեպտեմբերին խորհրդի կատարած հայտարարության համաձայն այդ մարմնի նպատակն էր օգնել ոստիկանության գործունեության թափանցիկության մեծացմանը և կանխել մարդու իրավունքների չարաշահումները: Տարվա ընթացքում եղել են սակավաթիվ հաղորդումներ խորհրդի գործունեության կամ ոստիկանության վրա դրա ունեցած ազդեցության վերաբերյալ: Ըստ պաշտոնական տեղեկատվության խորհուրդն առնչվել է այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են զենք կրելը, երթևեկության կանոնները, մեքենաների բարձր ձայնային ազդանշանները, հրավառությունների կանոնակարգումը և հեռուստատեսային շոուների ազդեցիվ բովանդակությունը:

Օգոստոսի 15-ին ոստիկանությունը երիտասարդ բնապահպանական ակտիվիստ Մարիամ Սուխուդյանին մեղադրանք ներկայացրեց սուտ մատնության համար, այն բանից հետո, երբ նա հրապարակավ նշեց, որ 2008թ. հատուկ կարիքներով երեխաների հանրային գիշերօթիկ մի դպրոցում սեռական ու այլ ոտնձգություններ են տեղ գտել: Ակտիվիստը և տեղական իրավապաշտպան դիտորդները քննադատեցին այս մեղադրանքը՝ նշելով, որ դրանք արհեստականորեն առաջադրվել են որպես հաշվեհարդար չարաշահումները բարձրաձայնելու համար և կոչ արեցին պետական ֆինանսավորմամբ գործող հատուկ դպրոցների պայմանների անկողմնակալ քննություն իրականացնել: Հոկտեմբերի 21-ին ոստիկանությունը Սուխուդյանին տեղեկացրեց, որ մեղադրանքը մեղմացվել և փոխվել է զրպարտանքի, որի համար նախատեսվում է տույժ: Տարեվերջի դրությամբ Սուխուդյանին ներկայացված քրեական մեղադրանքներով քննությունը շարունակվում էր:

Հունիսի 5-ին ոստիկանությունը բերման ենթարկեց ու ձերբակալեց Հելսինկյան ասոցիացիա ՀԿ-ի անդամ Արշալույս Հակոբյանին՝ ոստիկանի հանդեպ բռնության ենթադրյալ մեղադրանքով, երբ ոստիկանը նրան ծանուցագիր էր հանձնել մայիսի 31-ի ավագանու ընտրություններում դիտարկված ընտրակեղծիքների վերաբերյալ Հակոբյանի պաշտոնական բողոքի հետ կապված ոստիկանություն ներկայանալու համար: Ըստ հաղորդումների ընտրությունների ժամանակ Հակոբյանը՝ լինելով հավատարմագրված դիտորդ, մեկ այլ գործընկերոջ հետ դուրս է հանվել ընտրակեղծիքներով հարուստ Մալթիա-Մեքաստիա համայնքի տեղամասերից մեկից, ապա նրան թույլ չեն տվել վերստին մտնել տեղամաս և սպառնացել են ֆիզիկական վնաս պատճառել: Փաստի հետ կապված նա հայտարարություն է տվել Հատուկ քննչական ծառայությունում: Ոստիկանները պնդում էին, որ երբ իրենք ներկայացրած բողոքի հետ կապված Հատուկ քննչական ծառայություն ներկայանալու ծանուցագիր են հանձնել Հակոբյանին, նա իրենց նկատմամբ բռնություն է դրսևորել: Ըստ Հակոբյանի, հունիսի 5-ին իր տուն եկած ոստիկանները վրդովվել են, որ նա չի

կամեցել ստորագրել ծանուցագիրը՝ այն համարելով անօրինական: Հակոբյանը նշում էր, որ ոստիկանությունը ճնշում է գործադրել, որպեսզի նա ծանուցագիրը ստորագրի և հայտնում, որ ոստիկանական բաժանմունքի ճանապարհին իրեն ծեծել են, իսկ կալանքի առաջին ժամերի ընթացքում մերժել են փաստաբանի հասանելիությունը:

Հունիսի 11-ին Հասարակական դիտորդների խմբի անդամները բանտում այցելեց Հակոբյանին՝ արձանագրելով, որ նրա մարմնի վրա կային բազմաթիվ վնասվածքներ (ոտքերին, ձեռքերին, մեջքին և գլխին): Ոստիկանությունն ըստ հաղորդումների բժշկական մատյանում գրառում էր կատարել այն վնասվածքների վերաբերյալ, որոնք Հակոբյանն ուներ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս:

Կառավարությունը պնդում էր, որ ոչ օրինաչափ գործողությունների մասով քննություն է իրականացվել և ժխտում էր, որ այդպիսիք տեղ են գտել: Հունիսի 15-ին Ժնևում գործող Իրավապաշտպանների պաշտպանության օբսերվատորիան հանդես եկավ հայտարարությամբ՝ մտահոգություն հայտնելով Հակոբյանի «կամայական ձերբակալության» վերաբերյալ, դատապարտեց ոստիկանների ոչ օրինաչափ վերաբերմունքն ընդդեմ նրա, որը կազմակերպությունը որակում էր պատիժ՝ Հակոբյանի իրավապաշտպան գործունեության համար:

Հունիսի 5-ին Հակոբյանին մեղադրանք ներկայացվեց պետական պաշտոնյային դիմադրություն ցույց տալու համար, և նա վերցվեց երկամսյա նախնական կալանքի տակ: Օգոստոսի 5-ին նախնական կալանքի ժամկետը մեկ ամսով երկարաձգվեց: Սեպտեմբերի 15-ին գործն ընթացք ստացավ: Հոկտեմբերի 16-ին Հակոբյանը կալանքից ազատ արձակվեց՝ դատական լուսմները մեկ ամսով հետաձգելու վերաբերյալ դատախազի միջնորդությունից հետո. դատախազն իր միջնորդությունը հիմնավորում էր այն հանգամանքով, որ անհրաժեշտ էր լրացուցիչ ժամանակ սկզբնական մեղադրանքները «փոխելու կամ լրացնելու» համար: Դատարանն ընդառաջեց միջնորդությանը և Հակոբյանին անմիջապես կալանքից ազատելու հրաման տվեց՝ պայմանով, որ նա երկրից չբացակայի, քանի դեռ գործն ընթացքի մեջ է: Նոյեմբերի 20-ին և դեկտեմբերի 21-ին դատավորը նիստը հետաձգեց՝ ի պատասխան դատախազի խնդրանքների, որ Հակոբյանին բերման ենթարկած ու ձերբակալված ոստիկանների գործողությունների վերաբերյալ քննություն իրականացնելու համար լրացուցիչ ժամանակ ապահովվի: Նոյեմբերի 28-ին Հատուկ քննչական ծառայությունը ոստիկանների ենթադրյալ չարաշահումների հետ կապված քննություն սկսեց, որն ապացույցների բացակայության հիմքով դեկտեմբերի 29-ին փակվեց, իսկ Հակոբյանի գործով լուսմները տարեվերջի դրությամբ դեռ պետք է վերսկսվեին:

Մայիսի 21-ին ոստիկանությունը վերացրեց Տիգրան Ուրիխանյանի մեղադրանքները «Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ-ի ղեկավար Միքայել Դանիելյանի վրա 2008թ. մայիսին կատարած հարձակման համար: Ըստ հաղորդումների միջադեպում ներքաշված էին ոչ ակտիվ քաղաքական գործիչ Տիգրան Ուրիխանյանը և երկու այլ անձինք: Չնայած դեպքի բազմաթիվ վկաներին՝ ոստիկանությունը Դանիելյանին տուժող չճանաչեց և

միջադեպը որակեց որպես խուլիգանական արարք: Քննության ընթացքում ոստիկանությունը, սակայն չբացահայտեց խուլիգանությունը հիմնավորող ապացույցներ: Թեպետ ոստիկաններն Ուրիխանյանի գործողությունները գնահատում էին որպես «անհրաժեշտ ինքնապաշտպանության» գերազանցում, սակայն եզրակացվեց, որ դա հանցանք չի համարվում քանի որ Դանիելյանը ստացել էր ոչ ծանր վնասվածքներ: Ոստիկանությունը միջադեպի մյուս երկու մասնակիցներին մեղադրանք չներկայացրեց՝ պնդելով, որ նրանք «զոջում են» կատարվածի համար: Ոստիկանությունը գործի նյութերին չկցեց Հելսինկյան քաղաքացիական ասոցիացիայի Վանաձորի գրասենյակի տնօրեն Արթուր Սաքունցի ցուցմունքը, ով հարձակման ականատեսն էր եղել: Ըստ Դանիելյանի քննության ողջ ընթացքում ոստիկանության քննիչը սպառնացել է, որ հնարավոր է խուլիգանության մեղադրանքների ներկայացում, եթե նա չհաշտվի մյուս կողմի հետ: Գործը կարճելու մասին որոշումը Դանիելյանը բողոքարկեց թե առաջին ատյանի դատարանում, և թե վերաքննիչ դատարանում. երկու դեպքում դատարանը նրա բողոքին դեմ որոշում կայացրեց:

Զարգացումներ չեն եղել 2008թ. մայիս և հունիս ամիսներին երիտասարդ ակտիվիստներ Արսեն Խառատյանի ու Նարեկ Հովակիմյանի վրա գործած հարձակումների քննության հարցում:

Կառավարությունն ընդհանուր առմամբ համագործակցել է միջազգային ՀԿ-ների հետ՝ թույլ տալով վերջիններիս այցելել երկիր և զեկույցներ ներկայացնել:

Երկրում գործում է Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) ինստիտուտը, որը կոչված է պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատություններն ազգային, մարզային և տեղական կառավարման մարմինների ու նրանց պաշտոնյաների ոտնձգություններից: Տարվա ընթացքում երկրում առկա մարդու իրավունքների հետ կապված տարբեր խնդիրների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է արտահերթ և տարեկան զեկույցներ: Կառավարությունն ընդհանուր առմամբ չի արձագանքել այս զեկույցներին և չի պատասխանել 2008թ. ապրիլին 2008թ. հետընտրական բռնությունների մասին արտահերթ զեկույցում բարձրացված հարցերին: Տարվա առաջին կիսամյակում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը քաղաքացիներից ստացել է 2602 գրավոր բողոք: Այս դիմումներից 42-ը գրասենյակը հաջողությամբ կարգավորել է՝ լուծում տալով 90 հոգու ունեցած բողոքներին:

Մեպտեմբերի 16-17-ին, ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի հիմնադրումից մոտ 16 ամիս անց, հրապարակվեց հանձնաժողովի եզրակացությունը 2008թ. մարտի հետընտրական դեպքերի և 10-ը մահվան դեպքերի վերաբերյալ: Զեկույցում նշվում էր, որ հանձնաժողովը չի կարողացել ավելին պարզել մահվան դեպքերի հանգամանքների վերաբերյալ և կոչ էր անում իրավապահներին ավելին անել՝ պարզելու, բացահայտելու և քրեական հետապնդում իրականացնելու մահվան դեպքերի համար պատասխանատուների առնչությամբ: Քաղաքացիական զոհերի

ազգականները բողոքի ակցիայով հանդես եկան հանձնաժողովի եզրակացության դեմ՝ ցույց անելով Ազգային ժողովի մոտ և պահանջելով սպանությունների լիակատար ու օբյեկտիվ բացահայտում:

Զեկույցի հրապարակումից առաջ նախագահ Սարգսյանը ցրեց 2008թ. հոկտեմբերին ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներին աջակցելու նպատակով իր ստեղծած երկկուսակցական փաստահավաք խումբը: Ըստ դիտորդների՝ փաստահավաք խմբի ցրումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ խումբը կապ ուներ մահվան տասը դեպքերի հետ կապված իշխանություններին մեղադրելու մասին գաղտնի հաշվետվությունների արտահոսքի հետ: ԵԽԽՎ-ն ափսոսանք հայտնեց, որ փաստահավաք խումբը «անդամների միջև անհաղթահարելի լարվածության ու երկու կողմերի աշխատանքները քաղաքականացնելու» պատճառով լուծարվեց, ապա հայտարարեց, որ 2008թ. մարտի դեպքերի անկախ, անկողմնակալ և արժանահավատ քննությունը դեռ անհրաժեշտ է և որ ժամանակավոր հանձնաժողովի վերջնական եզրակացության մեջ պետք է նշվի, թե արդյոք «անկողմնակալության ու արժանահավատության չափորոշիչները բավարարված են և հետագա քննության կարիք կա, թե ոչ»:

Դեկտեմբերի 21-ին ԵԽԽՎ մոնիտորինգի խումբը քննադատեց հանձնաժողովին ինքնագրաքննության համար՝ ուղղված իրադարձությունների պաշտոնական վարկածը բավարար կերպով չվիճարկելուն: Նաև քննադատվում էր զեկույցում դեպքերի միակողմանի նկարագրությունը և հետընտրական ձեռքարկությունների ու ընդդիմության բազմաթիվ կողմնակիցների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու վերաբերյալ քննարկման բացակայությունը:

Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության ու հանրային հարցերի մշտական հանձնաժողովի խիստ ցածր ներգրավվածությունը մարդու իրավունքների խնդիրներին վերաբերող հարցերում հանգեցրել էր այն փաստին, որ տեղի իրավապաշտպան հանրությունը խորը թերահավատությամբ էր վերաբերում հանձնաժողովին:

## ***ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՑԻՔԻՆԳ***

Սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է ռասայի, սեռի, հաշմանդամության, լեզվի կամ սոցիալական կարգավիճակի հիման վրա խտրականությունը, սակայն այդ արգելքների գործնական կիրառումը կառավարության կողմից արդյունավետորեն չի ապահովվում:

### ***Կանայք***

Բռնաբարությունը քրեորեն հետապնդելի արարք է, որի համար սահմանված առավելագույն պատժաչափը կարող է հասնել 15 տարի ազատազրկման:

Ամուսնական բռնաբարությունը քրեականացնող առանձին օրենսդրական դրույթներ չկան: Տարվա ընթացքում իրավասու մարմինները բռնաբարության և բռնաբարության փորձի համար 23 քրեական գործ են հարուցել 26 հոգու դեմ, սակայն հասարակության մեջ անպատվությունից խուսափելու հանգամանքը շարունակել է պատճառ հանդիսանալ, որ հանցանքի բոլոր դեպքերը չհաղորդվեն: Հիշյալ 26 հոգուց 10-ն իշխանությունների կողմից դատապարտվել են բռնաբարության կամ բռնաբարության փորձի համար. մնացած գործերի քննությունը տարեվերջի դրությամբ շարունակվում էր: Ըստ պաշտոնական տեղեկատվության այս գործերից և ոչ մեկն ամուսնական բռնաբարության դեպք չէր հանդիսանում:

Ընտանեկան բռնությունն արգելող օրենք չկա: Տարվա ընթացքում ամուսնական և կանանց հանդեպ այլ բռնությունների դեպքերի վերաբերյալ հաղորդումները քիչ են եղել, չնայած այս երևույթը ենթադրաբար լայն տարածում ունի: 2007թ. «Կանանց իրավունքների կենտրոնի» պատվերով անցկացված հետազոտության տվյալներով հարցվողների 66 տոկոսն ընդունել է, որ ընտանիքի անդամների կողմից ենթարկվել են հոգեբանական ճնշման, իսկ 39 տոկոսն իրենց համարել են միջին կամ ծայրահեղ ֆիզիկական բռնության զոհեր: Ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը ոստիկանությանը չեն հայտնվում, որովհետև տուժողները վախենում են ֆիզիկական վնասից, անհանգստանում են, որ ոստիկանությունը նրանց կվերադարձնի իրենց ամուսիններին, կամ անհարմար են զգում ընտանեկան խնդիրներին հասարակական բնույթ տալ:

Գործում է ՀԿ-ի կողմից աշխատեցվող մեկ ապաստան, որտեղ ընտանեկան բռնության զոհերին առաջարկվում է օթևան և աջակցություն, այդ թվում՝ հոգեբանական և իրավական խորհրդատվություն: Ընտանեկան բռնության զոհերին աջակցելու համար ՀԿ-ը նաև շահագործում է թեժ գիծ:

Ոստիկանության հաղորդումների համաձայն տարվա ընթացքում քննվել են ընտանեկան բռնության 241 գործեր, այդ թվում՝ 132 գործ կապված ծեծի ենթարկելու հետ, 100 գործ կապված առողջությանը միտումնավոր վնաս պատճառելու հետ: Մնացած գործերը կապված էին սպանության փորձի, սպանության սպառնալիքի, խուլիգանության և վիրավորանք հասցնելու հետ: Գլխավոր դատախազության հաղորդմամբ գրանցվել են ամուսինների կողմից սպանության և սպանության փորձի 2-ական դեպքեր:

Մարմնավաճառությունը համարվում է վարչական զանցանք, որը պատժվում է տույժով, իսկ հասարակաց տներ պահելը կամ կավատության այլ ձևերը քրեորեն պատժելի են և դրանց համար նախատեսվում է տասը տարվա ազատազրկում: Համաձայն լրատվամիջոցների հաղորդումների երկրում մարմնավաճառության մեջ ներգրավված կանանց թիվը 5000-ից պակաս է, որոնցից մոտ 1500-ը մայրաքաղաքում են: Ոստիկանությունը և անվտանգության մյուս ուժերն ըստ հաղորդումների մարմնավաճառության հանդեպ դրսևորել են հանդուրժողականություն:

Օրենքը հստակորեն չի արգելում սեռական ոտնձգությունները, չնայած այն անդրադառնում է անատակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին: Չնայած հրապարակային տվյալներ խնդրի ծավալների վերաբերյալ չկան, սակայն դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեն:

Ըստ օրենքի ամուսնական զույգերը և անհատներն իրավունք ունեն առանց խտրականության, հարկադրանքի կամ բռնության ազատ և պատասխանատու կերպով որոշում կայացնել, թե երբ, ինչ պարբերությամբ և քանի երեխա են ունենալու, և ունենան միջոցներ և տեղեկատվություն դրա համար: Սակայն գործնականում, հատկապես առավել ավանդական ընտանիքներում այս կարգի որոշումները սովորաբար ընդունվում են ամուսնու և նրա ծնողների կողմից:

Հակաբեղմնավորիչների մասին տեղեկացվածությունը և դրանց հասանելիությունը ցածր է, հատկապես գյուղական վայրերում: Մասնագիտական ծննդօգնությունն առավել հասանելի է մեծ քաղաքներում ու բնակելի կենտրոններում: Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, այդ թվում՝ ՄԻԱՎ ախտորոշվել և բուժվել են հավասարապես կանանց և տղամարդկանց շրջանում:

Հաղորդումներ են եղել, որ համարժեք ընդհանուր և վերարտադրողական առողջապահական ծառայությունների հասանելիությունը բավարար չի եղել կանանց համար, հատկապես գյուղական կամ հեռավոր բնակավայրերում: Դիտորդները վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված տարբեր աշխատանքներն արդյունավետ չեն եղել:

Միջազգային և տեղական դիտորդները տարվա ընթացքում առաջարկել են, որ կառավարությունը շարունակի միջոցներ ձեռնարկել կանանց համար ընդհանուր առողջապահական ծառայությունների, և մասնավորապես վերարտադրողական առողջապահական ծառայությունների հասանելիությունը բարելավելու ուղղությամբ: Դիտորդները տարվա ընթացքում իշխանություններին կոչ են արել ավելացնել աշխատանքներն ուղղված սեռական և վերարտադրողական (այդ թվում՝ ընտանիքի պլանավորման) ծառայությունների հասանելիության բարելավմանը, մոբիլիզացնել ռեսուրսներն այս նպատակի համար և հսկողություն իրականացնել կանանց համար այս ծառայությունների փաստացի հասանելիության նկատմամբ: Նաև առաջարկվում էր, որ կառավարությունը լայնորեն խթանի ընտանիքի պլանավորումն ու վերարտադրողական առողջության մասին իրազեկումն աղջիկների և տղաների շրջանում՝ հատկապես ուշադրություն դարձնելով անչափահաս աղջիկների հղիության, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելմանը:

Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային և տարիքային խտրականությունը դեռևս խնդրահարույց էին պետական և մասնավոր հատվածներում: Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ



տղամարդիկ, և հաճախ կատարել են սպասարկման կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում կառավարության բոլոր օղակներում՝ կենտրոնական, ինչպես նաև մարզային ու տեղական մակարդակներում:

### ***Երեխաներ***

Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից: Դիտորդները նշում են, որ չքավոր ու սոցիալապես առավել խոցելի խմբերի ծնողները չեն կարողացել գրանցել երեխայի ծնունդը՝ դրանով իսկ զրկելով նրանց էական սոցիալական ծառայություններից ու առավել մեծացնելով իրենց երեխաների խոցելիությունը: Մակայն տարվա ընթացքում միջազգային դոնորներն աշխատել են կառավարության հետ այս հարցերի շուրջ և կան որոշ հաջողություններ:

Խիստ անհավասարություն է պահպանվել թե տարրական, թե միջնակարգ կրթության հարցում՝ ըստ սեռի, մարզերի և եկամուտների: Բազային կրթությունից հետո ուսումնառությունը չշարունակելու դեպքերը զգալի թիվ են կազմում, հատկապես աղքատ երեխաների շրջանում:

Հիմնական առողջապահական ծառայություններն անվճար են մինչև 18 տարեկան տղաների և աղջիկների համար, բայց հաճախ այն վատորակ է եղել, իսկ պաշտոնյաները հաճախ բացահայտ կամ թաքնված վճարներ են պահանջել ծառայությունների համար:

Անչափահասի բռնաբարությունը, որն օրենքով սահմանվում է որպես սեռական ակտ 16 տարին չլրացած անձի հետ, պատժվում է տույժով և մինչև երկու տարի ազատազրկմամբ: Մանկական պոռնկագրությունը պատժվում է առավելագույնը վեց տարի ազատազրկմամբ:

Տարեվերջի դրությամբ շարունակվում էր վարքային շեղումներով երեխաների թիվ 18 հատուկ դպրոցի նախկին փոխտնօրենի դեմ հարուցված գործի դատաքննությունը, որով նա մեղադրվում է դպրոցի երկու սաների մուրացկանության դրդելու, իսկ մեկ այլ սանի հանդեպ սեռական ոտնձգություններ կատարելու մեջ:

2008թ. նոյեմբերին Հանրային հեռուստատեսության եթերում հնչեցին հաղորդումներ այն մասին, որ թիվ 11 հատուկ դպրոցի ադմինիստրացիայի և աշխատակիցների կողմից սաների նկատմամբ տեղ են գտել սեռական և այլ բնույթի ոտնձգություններ: Ոտնձգությունների մասին հայտնի դարձավ, երբ մի խումբ երիտասարդ ակտիվիստներ կամավորական աշխատանք էին իրականացնում դպրոցում: Աշխատելու և դպրոցի սաների հետ իրենց շփումների ժամանակ կամավորները նկատեցին ու լսեցին բազմաթիվ խնդիրների ու չարաշահումների մասին, այդ թվում՝ վատորակ սնունդ, վատ սանիտարահիգիենիկ պայմաններ, երեխաների շահագործում դպրոցի տնօրենի և աշխատողների կողմից իրենց տնային գործերը հոգալու նպատակով, ծեծ և խիստ պատիժներ և սեռական ոտնձգության մի քանի

դրվագներ ուսուցիչներից մեկի կողմից: Ոսնձգությունները բարձրաձայնած երիտասարդ ակտիվիստ Մարիամ Սուխուդյանի դեմ իշխանությունները օգոստոսի 15-ին քրեական գործ հարուցեցին սուտ մատնության մեղադրանքով, ապա օգոստոսի 21-ին մեղադրանքը փոխվեց զրպարտության: Օգոստոսի 26-ին Գլխավոր դատախազությունը հայտնեց, որ սեռական ոսնձգությունների մասին հնչեցված մեղադրանքով իրենց քննությունը չի հիմնավորել մեղադրանքը: Տարեվերջի դրությամբ Սուխուդյանի դեմ քրեական գործի քննությունը շարունակվում էր:

«Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ-ն փետրվար և մարտ ամիսներին իրականացրեց մոնիտորինգ 12 հատուկ կրթական հաստատություններում և 4 գիշերօթիկ հաստատություններում՝ գնահատելու այս հաստատությունների սաների պաշտպանվածությունն ու նրանց ցուցաբերվող խնամքը: Ուսումնասիրությամբ, որ հրապարակվեց մարդու իրավունքների «Դիտորդ» պարբերականում, բացահայտվել էր, որ այդ հաստատություններում հաճախ տեղ են գտնում ֆիզիկական և հոգեբանական բռնություններ երեխաների նկատմամբ: Շատ երեխաներ նշում էին, որ ի թիվս այլ պատիժների իրենց ապտակել կամ ծեծել են, փակել դասասենյակում, թույլ չեն տվել տուն գնալ: Ըստ ուսումնասիրության, որոշ ուսուցիչներ ընդունել են, որ դիմում են բռնության: Ուսումնասիրությունը նաև նշում էր, որ այդ հաստատություններից շատերում չկան նորմալ ջեռուցման համակարգեր և համարժեք սանիտարահիգիենիկ պայմաններ:

Կոմիտեն փետրվար և մարտ ամիսներին նաև ուսումնասիրել է երեխաների իրավունքները Սյունիքի մարզի 12 հանրակրթական դպրոցներում: Պարզվել էր, որ որպես պատժամիջոց կանոնավոր կիրառվում են ֆիզիկական և հոգեբանական բռնությունների տարբեր ձևեր: Բռնության դրսևորումները սովորաբար արտահայտվում են ծեծի, ապտակի, ականջ քաշելու և նվաստացուցիչ վերաբերմունքի տեսքով: Նաև նկատվել են անհավասարության դրսևորումներ դպրոցներում աշակերտների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի մեջ՝ կախված աշակերտի ուսուցչի հետ ունեցած հարաբերություններից, ուսուցչի մոտ մասնավոր դասերի գնալու փաստից և այն բանից, թե արդյոք աշակերտն ունի ազդեցիկ ծնողներ: Հելսինկյան կոմիտեն նման ուսումնասիրություն կատարել է նաև 2007 և 2008 թվականներին՝ տվյալներ հավաքելով Հայաստանի յոթը մարզերի 39 դպրոցներից: Երկու ուսումնասիրությունների արդյունքներն ըստ էության նույնն են:

### ***Մարդկանց թրաֆիքինգ***

Օրենքով մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերն արգելվում են, սակայն եղել են հաղորդումներ դեպի երկիր, երկրից և երկրի ներսում իրականացված թրաֆիքինգի դեպքերի վերաբերյալ:

Երկիրը հիմնականում հանդիսանում է կանանց ու աղջիկների թրաֆիքինգի սկզբնաղբյուր՝ Միացյալ Արաբական Էմիրություններում ու Թուրքիայում նրանց սեռական շահագործման նպատակով: ՀԿ-ների հաղորդումների համաձայն դեպի

Թուրքիա կանայք թրաֆիքինգի են ենթարկվում նաև հարկադիր աշխատանքի նպատակով: Տղամարդիկ և կանայք թրաֆիքինգի են ենթարկվել դեպի Ռուսաստան հարկադիր աշխատանքի նպատակով: Տարվա ընթացքում եղել են դատական գործեր, որոնք վերաբերել են անչափահասների սեռական շահագործման, մուրացկանության դրդման նպատակով ներքին թրաֆիքինգին և Ռուսաստանից աշխատանքային շահագործման նպատակով Հայաստան թրաֆիքինգի ենթարկված ռուս կանանց: Ըստ պաշտոնական տվյալների տարվա ընթացքում առնվազն 60 հոգի ճանաչվել է որպես թրաֆիքինգի զոհ:

Թրաֆիքինգով զբաղվող անհատ կազմակերպիչները կամ փոքր կազմակերպված խմբերը՝ օգտագործելով թրաֆիքինգի սկզբնաղբյուր ու վերջնակետ երկրներում ձևավորված ցանցերը, հիմնականում հավաքագրել են մարդկանց սոցիալապես առավել խոցելի խմբերից՝ հատկապես գյուղական բնակավայրերից խոստանալով բարձր վարձատրվող աշխատանք վերջնակետ երկրում: Սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկելու դեպքերում թրաֆիքինգի կազմակերպիչների համար հիմնական թիրախ են հանդիսացել, բայց ոչ միշտ, արդեն իսկ մարմնավաճառության մեջ ներքաշված անձինք: Զոհերի գերակշիռ մասը, սակայն ոչ բոլորը, իմացել են, որ այլ երկրում աշխատելու են սեքս արդյունաբերության մեջ, սակայն նրանք տեղյակ չէին եղել թրաֆիքինգի կազմակերպիչների մտադրությունների կամ շահագործման պայմանների մասին, որ սպասվում էր նրանց արտերկրում: Հասնելով վերջնակետ երկիր՝ թրաֆիքինգ իրականացնողները զոհերից վերցրել են ճամփորդական փաստաթղթերը, փակել հյուրանոցի սենյակներում և ասել, որ նրանք պետք է «փակեն» իրենց համար կատարված ծախսերը: Հաղորդումներ են եղել, որ թրաֆիքինգի կազմակերպիչները զոհերին քաջալերել են դառնալ հավաքագրողներ՝ առաջարկելով հավաքագրվածի վաստակի որոշակի մասնաբաժինը կամ խոստանալով հենց իրենց վաստակած գումարները, որ թրաֆիքինգ իրականացնողները չեն վճարել նրանց:

Քրեական օրենսգրքի նոյեմբերին կատարված փոփոխություններով թրաֆիքինգին վերաբերող երկու հոդվածներից մեկով սահմանվող պատժաչափն ավելացվեց (ավելացնելով մեկով նախատեսվող պատժաչափը, որ համապատասխանի մյուսին): Այսպիսով, թրաֆիքինգին վերաբերող երկու հոդվածներով դատապարտված թրաֆիքինգ իրականացնողների համար սահմանվող պատժաչափը 5-ից 15 տարի է՝ կախված հանցանքը ծանրացնող հանգամանքներից: Երկու հոդվածով կատարված փոփոխություններով նաև նախատեսվում է թրաֆիքինգ իրականացնողի գույքի բռնագանձում՝ որպես պատժի ձև և նախատեսվում է, որ թրաֆիքինգի զոհն ազատվում է քրեական պատասխանատվությունից այն հանցագործությունների համար, որոնք նա հարկադրված է եղել կատարելու՝ ելնելով իր կարգավիճակի հետևանքով ստեղծված իրավիճակից, եթե աջակցում է այդ հանցագործությունների բացահայտմանը:

Ըստ կառավարության տվյալների իրավապահ կառույցների կողմից տարվա ընթացքում հետաքննվել է թրաֆիքինգի 15 գործ, դատարանները թրաֆիքինգի համար դատապարտել են 11 հոգի, մինչդեռ 2008թ. դատապարտվել էր 4 հոգի:

Ապրիլի 20-ին Երևանում թրաֆիքինգ իրականացնելու համար դատապարտվեցին 4 կանայք՝ առաջին անգամ որպես կազմակերպված հանցախումբ. նշանակված պատիժները մեկ տարվա ազատազրկումից մինչև 13 տարվա ազատազրկման միջակայքում էին, ընդ որում 13 տարին թրաֆիքինգ իրականացնողներին երկրում երբևէ նշանակված ամենաերկար ազատազրկման ժամկետն էր:

Դեկտեմբերի 18-ին մեկ այլ թրաֆիքինգ իրականացնող, որ Միացյալ Արաբական Էմիրություններում զբաղվել էր կանանց մարմնավաճառության շահագործմամբ, Երևանի դատարանի կողմից դատապարտվեց 13 տարի ազատազրկման:

Համեմատած նախորդ տարիներին, տարվա ընթացքում դատարաններն ավելի երկար ազատազրկման ժամկետով են դատապարտել թրաֆիքինգ իրականացնողներին, ընդ որում ոչ մեկը պայմանական ազատազրկում չի ստացել: Ապրիլի 2-ին Երևանի դատարանը թրաֆիքինգ իրականացնող մի տղամարդու, ով մուրացկանության էր հարկադրել հինգ երեխաների, դատապարտեց 7 տարվա ազատազրկման:

Տարվա ընթացքում շարունակվում էր երկու ռուս թրաֆիքինգ իրականացնողների դատավարությունը, ովքեր զոհերին շահագործում էին տեղի գիշերային ակումբներում որպես էկզոտիկ պարուհիների: Ռուս իրավապահների հետ համագործակցության միջոցով ոստիկանությունն այս գործով բացահայտեց ևս 11 զոհերի (ներկայումս բոլորը գտնվում են Ռուսաստանում) և զոհերի ընդհանուր թիվն հասավ 24-ի: Դատական լուսնների ժամանակ օգտագործվում էին նոր բացահայտված զոհերի գրավոր ցուցմունքները: Դատավարությունը տարեվերջի դրությամբ շարունակվում էր:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով նախարարական խորհուրդը, որտեղ նախագահում է փոխվարչապետը, պատասխանատու է կառավարության հակա թրաֆիքինգային աշխատանքների իրականացման, համակարգման և մոնիտորինգի համար: 2007թ. օտարերկրյա կառավարությունների ու հակաթրաֆիքինգային ծրագրերում ներգրավված հասարակական կազմակերպությունների հետ ծավալուն քննարկումներից հետո կառավարությունը հաստատեց 2007-09թթ. մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային ծրագիրը:

Ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը և Գլխավոր դատախազությունը պատասխանատու են թրաֆիքինգի գործերով քննությունների վարման ու քրեական հետապնդում իրականացնելու համար: Պատկան մարմիններն ակտիվորեն համագործակցել են թրաֆիքինգի վերջնակետ հանդիսացող մի շարք երկրների հետ և կանոնավոր կերպով տեղեկատվություն է փոխանակել այդ երկրների հետ:

Թրաֆիքինգի կազմակերպիչների հետ պաշտոնյաների հանցակցության մասին հաղորդումներ տարվա ընթացքում չեն եղել: Սակայն տարեվերջի դրությամբ թրաֆիքինգի համար դատապարտված Ուզբեկստանի քաղաքացի, ազգությամբ հայ Անուշ Ջախարյանցի 2006թ. փախուստի հետ կապված պատկան մարմինների կողմից որևէ պաշտոնյայի նկատմամբ քրեական հետապնդում դեռ չէր իրականացվել: Տարվա ընթացքում Ազգային անվտանգության ծառայությունն Ուզբեկստանում հայտնաբերեց Անուշ Ջախարյանցին: Դեկտեմբերի 14-ին Գլխավոր դատախազությունը պաշտոնապես դիմեց Ուզբեկստանին Ջախարյանցին էքստրադիցիայի ենթարկելու հարցով. տարեվերջի դրությամբ էքստրադիցիայի դիմումը դեռ քննարկման մեջ էր:

Երկիր վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը վախեցել են հասարակական անպատվությունից և խտրականությունից, և ընդհանուր առմամբ, սակայն ոչ միշտ, չեն կամեցել օգնել հայտնաբերել իրենց թրաֆիքինգի կազմակերպիչներին և նրանց պատժել: Կառավարության պաշտոնյաները չեն պահանջել, որ զոհերն իրենց օգնեն թրաֆիքինգով զբաղվողներին հետապնդելու գործում, բայց նրանք աշխատել են այն զոհերի հետ, որոնք ցանկացել են դա անել: ՀԿ-ները հայտնում են, որ շարունակվել է զոհերի նկատմամբ դատավորների ընդհանուր վերաբերմունքի բարելավումը:

Մի քանի ՀԿ-ներ աջակցել են թրաֆիքինգի զոհերին, որոնցից շատերն ուղղորդվել են այնտեղ պատկան մարմինների կողմից: Թրաֆիքինգի զոհերի համար նաև երկու թեժ գիծ է գործել: Հակա թրաֆիքինգային աշխատանքներ իրականացնող ՀԿ-ները գործել են առանց կառավարության ֆինանսական օժանդակության՝ հիմնվելով օտարերկրյա կառավարությունների ֆինանսավորման վրա: 2008թ.

կառավարությունը հաստատեց երկրի պետական բյուջեով թրաֆիքինգի դեմ պայքարի համար միջոցների հատկացումը, այդ թվում միջոցների հատկացումը թրաֆիքինգի զոհերի կացարանի համաֆինանսավորման համար: Տարվա ընթացքում կառավարությունն հիմնականում աջակցել է հասարակության իրազեկմանն ուղղված աշխատանքներին: Սակայն կառավարության ու կացարանը շահագործող ՀԿ-ի միջև տեխնիկական խնդիրների պատճառով կացարանի համաֆինանսավորումը չիրականացավ: Հանրային իրազեկման աշխատանքները ներառում էին հակա թրաֆիքինգային երիտասարդական քարոզարշավ և 100 000 տպաքանակով գրքույկի տպագրում, որտեղ իրավական խորհրդատվություն էր ներկայացվում ճանապարհորդող, արտերկրում ապրող կամ աշխատող ՀՀ քաղաքացիների համար:

Երկրի 2010թ. ազգային բյուջեն, որ հաստատվեց տարեվերջին 2009թ. բյուջեի նման պարունակում է ծախսային հոդվածներ՝ կապված թրաֆիքինգի դեմ պայքարի հետ: 2009թ. բյուջեի համեմատ 2010թ. բյուջեով ավելի շատ միջոցներ են նախատեսված, մասնավորապես՝ զոհերին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2008թ. նոյեմբերին կառավարությունը հաստատեց Ազգային ուղղորդման կարգը, որն օգտագործվելու է պետական պաշտոնյաների կողմից թրաֆիքինգի զոհերին

աջակցության նպատակով ուղղորդելու համար: Ըստ տեղական դիտորդների ուղղորդման կարգում, այնուամենայնիվ, գոհերին օժանդակություն ցուցաբերելու համեմատ անհամամասնորեն ավելի մեծ է թրաֆիքինգ իրականացնողներին հայտնաբերելու ու նրանց հանդեպ քրեական հետապնդում իրականացնելու հարցում իրավապահներին օգնելու շեշտադրումը: Ազգային ուղղորդման կարգի համաձայն գոհին ցուցաբերվող օժանդակության մակարդակը պայմանավորված է իրավապահների հետ նրա համագործակցության մակարդակով:

Մեպտեմբերի 3-ին կառավարությունը որոշեց թրաֆիքինգի գոհերին որպես հատուկ ենթախումբ ներառել սոցիալապես անապահով խմբերում, որոնք իրավասու են ստանալ անվճար բուժօգնություն:

Տարվա ընթացքում ՀԿ-ները, միջազգային կազմակերպությունները և կառավարությունը շարունակել են թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ կրթական ծրագրերի և լրատվական հաղորդումների տեսքով՝ հարցի շուրջ հանրային իրազեկությունը բարձրացնելու նպատակով:

Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Պետքարտուղարության ամենամյա զեկույցը կարելի է գտնել [www.state.gov/g/tip](http://www.state.gov/g/tip) կայքում:

### ***Հաշմանդամներ***

Չնայած օրենքով արգելվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ շենքերը ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, բայց գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են նրանց համար հասանելի:

Տարվա ընթացքում Սյունիքի ու Շիրակի մարզերի հոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի կողմից անցկացված մոնիտորինգի տվյալներով այդ հաստատություններում կան բազմաթիվ խնդիրներ: Ի թիվս այլոց խնդիրները ներառում են հիգիենայի անբավարար պայմաններ, անբավարար սնուցում, ոչ համապատասխան շինություններ, ոչ ժամանակակից ու ոչ արդյունավետ դեղամիջոցների օգտագործում, մասնագիտական պատրաստվածություն ունեցող անձնակազմի բացակայություն, ֆիզիկական բռնության դեպքեր և հիվանդների աշխատանքի օգտագործում առողջապահական հաստատություններում: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեան նաև նշում էր, որ հոգեբուժական հաստատությունների աշխատանքի հետ կապված համակարգային խնդիրներ կան, մասնավորապես՝ հոգեկան առողջության պետական

քաղաքականության բացակայությունը, օրենքի պատշաճ գործարկման համար անհրաժեշտ օրենսդրության բացակայությունը, աշխատակազմի վարքագծի նորմերի և ստանդարտների բացակայությունը և այդ հաստատությունների ոչ բավարար ֆինանսավորումը:

2008թ. հուլիսին Armenianow.com առցանց լրատվական գործակալությունը հրապարակեց Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Վանաձորի հոգենյարդարանական դիսպանսերի հիվանդների շրջանում անցկացված հարցման արդյունքները: Հիվանդները հաղորդել էին սանիտարների ու բուժանձնակազմի կողմից իրենց ծեծելու, խոշտանգումների ենթարկելու և հանգստացնող-գսպող միջոցները չարաշահելու մասին: Հիվանդները բողոքում էին արտոնություններից զրկված լինելու և վատ կերակրվելու մասին:

Ստանդարտներից ցածր էին նաև ծանր հաշմանդամների համար նախատեսված հիվանդանոցային կամ այլ ինստիտուցիոնալ պայմանները: Ըստ պաշտոնական տվյալների աշխատունակ հաշմանդամների ավելի քան 90 տոկոսը գործազուրկ էին:

Կառավարությունն ի դեմս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատու է հաշմանդամների իրավունքների պաշտպանության համար, սակայն դա արդյունավետ կերպով չի իրականացրել:

Ըստ մայիսի 31-ին Երևանու ավագանու ընտրությունների մոնիտորինգ իրականացրած տեղական «Ունիտոն» ՀԿ-ի ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրատեղամասերը հասանելի չէին և շատ քիչ հաշմանդամություն ունեցող անձիք են մասնակցել քվեարկությանը:

### ***Սեռական կողմնորոշման ու սեռական ինքնության վրա հիմնված չարաշահումներ, խտրականություն և բռնության դրսևորումներ***

Ընդհանուր առմամբ հասարակության վերաբերմունքն համասեռամոլության հանդեպ շարունակում էր մնալ խիստ անբարենպաստ: Հասարակության շրջանում բուռն բացասական արձագանք ստացավ այն փաստը, որ Հայաստանը ստորագրեց սեռական կողմնորոշման և սեռական ինքնության հարցերում մարդու իրավունքների պաշտպանության մասին ՄԱԿ-ի 2008թ. դեկտեմբերի հայտարարության տակ և արդյունքում լրատվամիջոցներում ավելացան համասեռամոլների մասին բացասական հոդվածները: Հասարակությունը շարունակում էր համասեռամոլությունը լայնորեն դիտարկել որպես հիվանդություն:

Բացահայտ արվամոլներն ազատվել են զինվորական ծառայությունից՝ ենթադրաբար առաջնորդվելով այն մտահոգություններով, որ նրանց նկատմամբ կարող են լինել բռնություններ համագորայինների կողմից: Այնուհանդերձ ազատման օրինական հիմնավորումը բժշկական փորձաքննության ժամանակ արվամոլների մոտ հոգեկան խանգարման հայտնաբերումն է, ինչի մասին նշում է կատարվում փաստաթղթերում, որը կարող է անդրադառնալ նրանց ապագայի վրա: Տարվա ընթացքում հաղորդում է

եղել առնվազն մեկ դեպքի վերաբերյալ, երբ մի երիտասարդի համասեռամուլ լինելու հանգամանքը բացահայտվել է զինվորական ծառայության ընթացքում և նա ախտորոշվել է «համասեռամուլություն» հիվանդությամբ և տեղափոխվել հիվանդանոց:

Մարդու իրավունքների տեղական ակտիվիստները նշում են, որ բանտերում լեաֆուհիներին, արվամուլներին, բիսեքսուալ և տրանսսեքսուալ անձանց ենթարկում են ամենանվաստացուցիչ խտրականության՝ ստիպելով կատարել նվաստացնող աշխատանքներ և առանձնացնելով մյուս բանտարկյալներից:

Սեռական կողմնորոշման հիման վրա հասարակական խտրականության դրսևորումը շարունակում է խնդրահարույց լինել աշխատանքի, ընտանեկան հարաբերությունների և սեռական փոքրամասնությունների համար կրթական ու առողջապահական ծառայությունների հասանելիության մասով:

### ***Չարաշահումների և խտրականության այլ դրսևորումներ հասարակությունում***

ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրների հանդեպ հասարակական բռնությունների ու խտրականություն դրսևորումների մասին հաղորդումներ չեն եղել:

Շատ գործատուներ ըստ հաղորդումների խտրականություն են դրսևորում հնարավոր աշխատողների նկատմամբ ըստ տարիքի՝ հաճախակի պահանջելով, որ թափուր տեղերի համար դիմողները լինեն 18-30 տարեկան: 40 տարեկանից հետո, հատկապես կանայք շարունակում են շատ քիչ հնարավորություն ունենալ իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնելու համար:

## ***ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ***

### **ա) Միավորումներ կազմելու իրավունքը**

Օրենքն աշխատողներին՝ բացառությամբ բանակում ծառայողներին և իրավապահ մարմինների աշխատակիցներին, իրավունք է վերապահում կազմելու անկախ միավորումներ և նրանց անդամակցելու՝ սեփական հայեցողությամբ, առանց նախնական լիազորության կամ հավելյալ պահանջների: Մակայն գործնականում աշխատողների մեծ մասն ի վիճակի չէ եղել օգտվել այս իրավունքից: Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Արհմիությունների կոնֆեդերացիայի հաշվարկներով փետրվարի դրությամբ կան 24 արհմիություններ՝ 240000 անդամներով, որը մոտավոր հաշվարկներով կազմում էր աշխատուժի 20 տոկոսը: Կային նաև այլ արհմիություններ, որոնք Արհմիությունների կոնֆեդերացիայի կազմում չէին: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, բացառությամբ հանքարդյունահանման ոլորտի արհմիությունների: Այնուհանդերձ, ըստ



փորձագետների որոշ հանքարդյունահանող ձեռնարկություններ, այդ թվում օտարերկրյա կապիտալ ունեցող ընկերություններ, հետ են պահել իրենց աշխատակիցներին արհմիություններին անդամակցելուց՝ աշխատանքից զրկվելու վտանգի սկնարկներով:

Օրենքը թույլ է տալիս միություններին իրենց աշխատանքներն իրականացնել առանց կառավարության միջամտության: Օրենքով սահմանվում է գործադուլի իրավունք, բացառությամբ զինվորականների և իրավապահ մարմինների աշխատակիցների համար, բայց աշխատողները հազվադեպ են գործադուլ արել՝ վախենալով կորցնել իրենց աշխատանքը: Թեպետ օրենքն արգելում է նաև գործադուլավորների հետապնդումը, սակայն դա պարբերաբար իրականացվել է:

#### **բ) Կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը**

Չնայած օրենքով սահմանվում է կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունքը, գործնականում այն գոյություն չի ունեցել:

Հակամիութենական խտրականության դրսևորումների հաղորդումներ չեն եղել:

Արտահանման արտոնյալ գոտիներ չկան:

#### **գ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում**

Օրենքով արգելվում է հարկադիր կամ ստրկական աշխատանքը, ներառյալ երեխաների: Մակայն եղել են հաղորդումներ, որ սեռական և աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի են ենթարկվել կանայք և աղջիկներ, իսկ շինարարության ոլորտում աշխատանքային շահագործման համար՝ տղամարդիկ: Ոչ մեծ քանակությամբ տղաներ և աղջիկներ ենթարկվել են ներքին թրաֆիքինգի՝ սեռական շահագործման կամ մուրացկանության դրդելու նպատակով (տես՝ Մաս 6):

#### **դ) Երեխայի աշխատանքի արգելում և զբաղվածության նվազագույն տարիք**

Օրենքներով ու կարգերով երեխաներն աշխատավայրում պաշտպանված են շահագործումից: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 18 տարին չլրացած երեխաների համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար ու վտանգավոր պայմաններում, տոն օրերին և գիշերային ժամերին. այնուամենայնիվ երեխաների աշխատանքին վերաբերող օրենսդրության կատարման համար պատասխանատու մարմինները չեն ապահովել օրենքի հավասարաչափ կիրառումը:

Համաձայն տեղական դիտորդների՝ շատ երեխաներ, հատկապես գյուղական բնակավայրերում, ներգրավված են եղել ընտանեկան բիզնեսներում (հիմնականում՝ գյուղատնտեսության ոլորտում)՝ ելնելով ընտանիքի առջև ծառայած դժվարին

սոցիալ-տնտեսական պայմաններից: Դիտորդները նաև նկատել են Երևանում դասերից հետո ծաղիկներ, նկարներ վաճառող ու տեղական շուկաներում աշխատող երեխաներ: Երեխաները նաև աշխատել են առևտրի, շինարարության, մեքենաների սպասարկման ոլորտներում, շահագործել են մեքենաներ, հավաքել են մետաղի ջարդոն և շերտեր: 2008թ. հոկտեմբերին երեխաների աշխատանքի վերաբերյալ ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի հրապարակած ուսումնասիրության արդյունքներով երկրով մեկ 7-18 տարեկան երեխաների շրջանում վճարովի աշխատանք ունեցողները կազմում են 5 տոկոսից պակասը՝ առանց հաշվի առնելու այն երեխաներին, ովքեր ներգրավված են ընտանեկան գյուղացիական տնտեսություններում կամ բիզնեսներում: Ուսումնասիրությունը նաև պարզել է, որ աշխատող երեխաների գրեթե մեկ երրորդը օրինական աշխատանքային տարիքից ցածր տարիք է ունեցել, գրեթե բոլորն աշխատել են առանց իրավական պայմանագրերի, իսկ որոշ երեխաներ ծանր ֆիզիկական աշխատանք են կատարել՝ որպես բանվորներ ու բեռնակիրներ:

#### **ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ**

Կառավարությունը որոշմամբ սահմանում է նվազագույն աշխատավարձը: Ամսական նվազագույն 30 000 դրամի չափով (մոտ 80 ԱՄՆ դոլար) աշխատավարձը, որն ամրագրվել է պետական բյուջեով, չի ապահովել աշխատողի և ընտանիքի կյանքի արժանավայել կենսամակարդակը:

Տարվա ընթացքում եղել են հաղորդումներ շինարարություն և կառուցապատում իրականացնող մի ընկերության կողմից աշխատանքային իրավունքների խախտումների բազմաթիվ դեպքերի վերաբերյալ: Այդ ընկերությունը պետության հետ կնքած պայմանագրով կառուցապատման աշխատանքներ էր իրականացնում Գյումրիում՝ 1988թ. երկրաշարժի հետևանքով շարքից դուրս եկած բնակարանային ֆոնդը վերականգնելու նպատակով կառավարության կողմից իրականացվող վերականգնման ծրագրի շրջանակում: Խախտումների մասին հաղորդումներում հիշատակվում էին խիստ ցածր աշխատավարձեր, շաբաթվա ընթացքում մինչև 65 ժամ աշխատանք, բանվորների աշխատավարձի չվճարում և աշխատանք առանց պայմանագրի: Չնայած լրատվամիջոցներում տեղ գտած բազմաթիվ հրապարակումներին ըստ հաղորդումների ոչ Աշխատանքի պետական տեսչությունը, ոչ էլ որևէ այլ պետական մարմին չհետաքննեցին այդ հաղորդումները: Արհեստակցական միությունների բացակայության պարագայում որոշ բանվորներ դատարան դիմեցին, ապա գործը ետ վերցրեցին՝ ընկերության հետ համաձայնության գալով ստանալ մասնակի փոխհատուցում պարտքի դիմաց: Ըստ որոշ տեղական դիտորդների՝ որոշ բանվորներ չէին ուզում բարձրաձայնել իրենց իրավունքների հետ կապված հարցերը, քանի որ վախենում էին կորցնել աշխատանքը:

Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է և սահմանված է տարեկան 28 օրացուցային օր պարտադիր արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա աշխատանքի դիմաց, սակայն այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել պատկան մարմինների կողմից: Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ աշխատողին ընդունել են 10-30 օր «փորձաշրջանով» և այդ օրերի համար չեն վճարել: Այնուհետև հաճախ այս աշխատողներին ազատել են, բայց քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը: Որոշ տվյալներից նաև բխում է, որ մասնավոր ոլորտի որոշ գործատուներ աշխատողների ավելի փոքր կազմ են ներկայացրել՝ հարկերի վճարումից խուսափելու համար:

Մասնագիտական և առողջապահության ստանդարտները սահմանվում են կառավարության որոշումներով: Պատկան մարմինները, որ պատասխանատու են այս ստանդարտների կիրառումն ապահովելու համար, միշտ չէ որ դա արել են արդյունավետորեն՝ պայմանավորված կարողությունների, հմտությունների ու կամքի բացակայությամբ: Տարվա ընթացքում ըստ հաղորդումների Աշխատանքի պետական տեսչությունը քիչ առաջընթաց է ունեցել տեսչական ռեժիմի կամ աշխատանքային օրենսգրքի կիրառման ապահովմանն ուղղված աշխատանքներում, իսկ կոռուպցիան խարխիլել է տեսչության աշխատանքը:

Աշխատողներն իրավունք ունեն հեռանալ այն աշխատանքային պայմաններից, որոնք վտանգի են ենթարկում իրենց առողջությունն ու անվտանգությունը, բայց աշխատողները դժվար թե դա անեն, քանի որ գործնականում այդպես վարվելը ռիսկի տակ կդնեն նրանց աշխատանքը: Շատ ոլորտներում աշխատավայրի անվտանգության ու առողջապահական պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին և տարվա ընթացքում զբանցվել է մահացու ելքով երկու աշխատանքային պատահար:

Մայիսի 14-ին Նաիրիտ քիմիական գործարանում տեղի ունեցած երկու հզոր պայթյունների հետևանքով զոհվեցին 2 հոգի և մոտ 20 հոգի վիրավորվեցին: Ըստ հաղորդումների Նաիրիտում պարբերաբար վթարային իրավիճակներ են եղել, որոնք պատշաճ կերպով չեն շտկվել. ըստ հաղորդումների գործարանի խորհրդային ժամանակաշրջանի հնացած սարքավորումներն ու անվտանգության ոչ բավարար ստանդարտները նույնպես նպաստել են պայթյունին: Նույն օրը պատկան մարմինների կողմից քննություն սկսվեց՝ պարզելու պայթյունի ճշգրիտ պատճառը: Հոկտեմբերի 10-ին քիմիական գործարանի երեք աշխատողների մեղադրանք ներկայացվեց անվտանգության կանոնների խախտման համար, որը հանգեցրել էր մահվան: Նոյեմբերի 9-ին գործն ուղարկվեց դատարան: Դեկտեմբերի 14-ին

պաշտպանության խնդրանքով Երևանի դատարանը երեք աշխատակիցների դեմ գործը կարճեց՝ հունիսի 19-ին հայտարարված ընդհանուր համաներման շրջանակում նրանց ազատելով մեղադրանքներից:

Հունիսի 17-ին HPCC-3 չինական ընկերության չորս չինացի աշխատակիցներ Երևանից ոչ հեռու Հրազդան քաղաքում իրականացվող ջերմակայանի շինարարության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի գոհ դարձան: Հայաստանի փրկարար ծառայության հաղորդմամբ աշխատակիցների մահվան պատճառը շինարարական հարթակի փլուզումն էր: Նույն օրը ոստիկանությունն այդ փաստով քննություն սկսեց շինհրապարակի աշխատավայրի անվտանգության ստանդարտների հնարավոր խախտման վերաբերյալ: Գործը կարճվեց օգոստոսի 8-ին, այն բանից հետո երբ քննությունը պարզեց, որ զոհված երեք աշխատակիցներն իրենք էին մեղավոր անվտանգության կանոնների խախտման համար, իսկ չորրորդ զոհը՝ նրանց վերադասը, ով պատասխանատու էր իր ստորադասների անվտանգության համար, նույնպես զոհվել էր դժբախտ պատահարի արդյունքում: